





Ա. Գ. Ի. Ն. Ժ. ՏԱՐԻ 1971 ՄԱՅԻՍ ԹԻԻ 5  
digitised by A.R.A.R.@

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

|                |                                |
|----------------|--------------------------------|
| Յ. ԿԱՐԱՊԵՆՑ    | Իշխան Փիլիպ Ի վերջին բազմամեջ  |
| Թ. ԳԱՌՕՆԷ      | Ահա՛, դարը մի                  |
| Ս. ՍԱՆԻՆԵԱՆ    | Սէրը ցանկապէս Ի տակ            |
| ՇԱՀՊԱՆ         | Յայգահանդէս                    |
| Ն. ՎԻՐԱՊԵԱՆ    | Ի եղեմ մեքեց                   |
| Յ. ՇԻՐԱԶ       | Նոր Հայաստանի խնամեալին        |
| Յ. ԶՈՐԵՑԻ      | Հայկական ուղիս ավելի           |
| ***            | «Ապիտակ քղթի սփռում»           |
| Կ. ՓՈՂԱՏԵԱՆ    | Զրայց՝ Բ. Թաշեանի հետ          |
| Բ. ԵՂԻԱՏԵԱՆ    | Գլազէտը՝ Խրիմեան Հայրիկի մէջ   |
| Մ. ԷՍԼԻ        | Էօթէն Իմեհաֆօ                  |
| Կ. ՍԱՍՈՒՆԻ     | Պ. Սնապեանի «Կորստական քայներ» |
| Ն. ՊԷՇԵԿՅԱՆԷԱՆ | Պ. Սնապեանի «Կորստական քայներ» |
| ***            | Զեռագիրներ                     |



## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Տ. ՅԱՐԻ, ԹԻԻ Զ

ՄՐ Ա. Յ. Ի. Ս

1971

ԳԻՏՐՈՒԹ

### ՅԱԿՈՒ ԿՍՐԱՊԵՆՑ

## Ի Շ Խ Ա Ն Փ Ի Լ Ի Պ Ո Ս Ի

## Վ Ե Ր Զ Ի Ն Բ Ա Ղ Զ Ա Ն Ք Ը

Ամանոսեան լեռների նման մուսյլ էր Իշխան Փիլիպոսը։  
 Թրականում աշխատեց մուսյլ էր, որքան թուխ, անառիկ աւ խառնաշ-  
 եաց՝ ճիշդ Ամանոսեան լեռների պէս։ Ութսուն ու յաւելեալ տարիները դոյզն  
 չափով իսկ չէին կէտել նրա պարթեւ հասակը։ Կաղնու պէս տոկուն մարմին։  
 Ահագին ուսեր ևւ ուսերի վրայ ահագին մի դուռ։ Անբաշ պատառ առիւծ՝  
 պազաթը ճաղառաւ, իսկ աշտերից կախուած պարկեր։ Նա սովորաբար աշխար-  
 հին նայում էր իր մեծդիւ, մազոտ քթի վրայից, հանգարաւ, անշտապ ու զըն-  
 իական։ Աւելի չուտ՝ տարիներից ի վեր բանասերկուած առիւծի պէս։ Լի-  
 նում էին պահեր, երբ քեզ թւում էր, թէ ահա մօտենում, հասնում եւ Իշ-  
 խան Փիլիպոսին, բայց սրտեղից որ է մէջտեղ էր ելնում նրա տիրական քի-  
 թը եւ ժայռուտ բերդի պէս կանգնում քո եւ իր միջեւ, իր եւ տիեզերքի մի-  
 ջեւ։ Կարւում էր հաղորդակցութիւնը եւ փոխարէն խորանում խորհրդաւոր  
 անջրպետը։ Փրկիւն անհասանելի։

Ծրբ Իշխան Փիլիպոսն էր խօսում, այլոք լռում էին։

digitised by

A.R.A.R.@

— Հայաստաննայց Սուրբ Առաքելական Եկեղեցւոյ Սահմանադրութեան չի համապատասխաներ Սրբազանին որոշումը...

— Օրմոնեան Պատրիարք կ'ըսէ...

— Ասիկա Թաղական Խորհուրդ չէ, այլ տխմարներու հաւաքածոյ...

Ջեֆրըսոնում բոլոր հայերը զիտէին Իշխան Փիլիպոսին: Նրա արեւով հրդոււմ էին տարեցները: Նրանից ակնածում էին երիտասարդները: Եւ նրան տեսնելիս ահ ու սարսափով էին բռնուում մանուկները:

Անհատ չէր, այլ շարժուն հաստատութիւն: Կենդանի օրէնք: Նրա մօտ «հայութիւն» եւ «հեռ» բառերը հոմանիշ էին: Իր բաղձանքը հայութեան բողմանքն էր, իսկ հայութեան բաղձանքը՝ իր:

— Հայ ժողովուրդը այսօր ուրախ է...

— Հայութիւնը կը ցուի...

— Հայաստան չի հանդուրժեր ատոր...

Ուզում էր ասել, թէ Իշխան Փիլիպոսը ուրախ է, որ ցաւում է եւ կամ չի հանդուրժում այս կամ այն երեւոյթը: Այդպէս էր նա եւ դեռ աւելին:

Իր ցցուն անհատականութեան հետ մէկտեղ ունէր նաեւ իր հազուատկապուստի իւրայատուկ ոճը, այսպէս ասած՝ արտաքին հմայքը, որը զարգացել էր ըստինքեան՝ արտազուրկով տասնիններորդ դարի վախճանը: Լինէր տանը թէ դրսում, սովորական թէ տոնական օրերին՝ նրա վրայից անպակաս էր սեւ, երկպոչանի դիպլոմատիկ բաճկոնը սեւ մետաքսէ երկղնեքով, վերի դրպանից վարի դրպանը կամբընդ մի շարք սակեպոյն շղթաներով: Նրա արտաքինը ամբողջացնող ազդակներից էր նաեւ մոխրագոյն հովքուրը՝ վազուց ի վեր կուշ եկած դադաթով: Իսկ ամենայատկանշականը, այդ նրա շապիկի օսլայած օձիքն էր՝ բարձրադիր ու թիթեռաթեւ, որի վրայ անփութօրէն նստում էին նրա պարանոցի ու այտերի փափուկ մսերը: Իշխան Փիլիպոսը սովորութիւն ունէր խօսելիս բխմատերը օղակելու բաճկոնի դրպաններում՝ ազատ մատերով թեթեւ թմբկահարելով իր պատկառելի փորը: Ետտեքը այդ սովորոյթը նրա ազնուական լինելուն էին վերադրում: Ինչի ուզում էին թող վերադրէին: Փաստն այն էր, որ Իշխան Փիլիպոսը ներկայութիւն էր, մի տեսակ պարտադրիչ ներկայութիւն:

Նա այնքան ժողովրդի մէջ չէր որքան ժողովրդի հետ: Փակոււմ էր Լօնդֆելդ փողոցի իր հին, քարակերտ տան մէջ եւ այնտեղից հետեւում հայ ժողովրդի կեանքին: Համայնական դործեր: Համագաղութային խնդիրներ: Համահայկական հարցեր: Եւ Կիլիկիա, Կիլիկիան զենիթէր էր: Բանալին նրա գոյութեան: Քսաներորդ դարի կէսերին նստած՝ նա տակաւին ապրում էր Խուրինեանց Թաղաւորութիւնը: Տարին երեք անգամ իջնում էր քաղաք: Սուրբ Ծննդին, Ձատիկին: Եւ մէկ էլ երեսփոխանական ընտրութիւններին: Այդ օրերին, Ջեֆրըսոնի հայութիւնը ցնծութեան մէջ էր լինում՝ վայելելով իր Իշխանի ներկայութիւնը: Այդ օրերին, կեանքը աւելի կայուն էր եւ օտքի տակի հողը աւելի տոկուն: Եւ երբ Իշխան Փիլիպոսը դուրսը եթերի մէջ քայլում էր սրահի մէջտեղից, յանկարծ լուծութիւն էր իջնում քաղաքի վրայ, որին հետեւում էր յուզի ալիքը եւ միաբերան կարօտը:

«Այգուս այգուս իմ խցկիմ մօտ

Լուսաժպիտ միմչ առաւօտ

Ճրգե պլպլում իմ Սիսուանայ

Վիլիկիա, Կիլիկիա, Կիլիկիա»:

digitised by

A.R.A.R.@

Թէ ինչպէս էր եղել, որ Փիլիպոս Կիւլէսէրեանը դարձել էր Իշխան Փիլիպոս, ոչ ոք չգիտէր եւ չէր էլ օգուտ իմանալ: Կարեւորն այն էր, որ նա կար, որ նա Իշխան էր: Նոյնիսկ էրզրումցիներն ու վանեցիկները իրենց փիլիկացի էին զգում նրա ներկայութեան: Եթէ ամերիկացիները ունեն իրենց նահանգագետներն ու տնտեսագետները, հապա ինչո՞ւ Ջեֆրըսոնի հոյ համայնքը յունենայ իր Իշխան Փիլիպոսը: Եւ այդպիսով կար Իշխան Փիլիպոսը՝ վիթխարի, անձեռնմխելի, անխորտակելի: Եւ միայն: Բացարձակ միայն: Ի՞նչ կը համարժակուէր նրա մօտ կարծիք յայտնել: Իշխան Փիլիպոսը միայն հրահանգել պիտէր:

- Եկեղեցիին քովի հողը քանգէք եւ զպրոց շինէք:
- Այս հողաբարձուն զլիսուն մէջ կուտ չիկայ, դուքս նետէք:
- Հայ ժողովուրդին օրէնք մի օրովեցնէք: Զեղի կ'ըսեմ ա'ս է ճիշդը:

Ջեֆրըսոնի հայ համայնքը ունէր իր Աղգային Տունը, Մշակութային Կեդրոնը, Թաղական Խորհրդի գրասենեակը եւ մի շարք այլ պաշտօնատեղիներ: Սակայն, իրականում, աղգային գործերը ղեկավարում էին Լոնգֆելս փողոցի քարաշէն տնից: Քարաշէն անի Վիլհոլմարանից, որն աւելի լուսւմի փոքրիկ, անխոյժ Թանգարան էր: Զորք պատերի շուրջ մինչեւ առաստաղը բարձրացող եռալարի յոգնած գրադարակներ՝ լեցուն խունացած զրքերով եւ հագար ու մի իրենով ու առարկաներով: Մի տեղ միմեանց հրմշտում էին կոտորում քթերով ու ակնջներով կիսանգրիներ, որոնք ըստ երեւոյթին գալիս էին Հեթումեան Հարստութեան շրջանից: Մի այլ կողմում երկաթէ կանաչաւուն խաչեր, ուրազներ, պէտ-պէս դաշոյններ, ձուլածոյ ճըբաղներ, կանթեղներ եւ դեռ փոշեթաթա պղնձէ կաթսաներ, ճաքած ջրամաններ, սակաւին անաղարտ ափսէներ, բուրվառներ, ու աշտանակներ: Բն-դուռարանի արեւմտեան պատը յատկացուած էր խաչքարերի բեկորներին, միջնադարեան խնամարարին ու մանրանկարներին ու քաղաքագրական աւել-տարաններին, իսկ առաստաղից սպառնալիկ կախուած էին մի տասնեակ մեծ ու փոքր ջահեր, որոնցից ոսկեզոյնը ճիշդ Իշխան Փիլիպոսի գլխի վրայ: Իրանց վրայ պէտք է աւելացնել նաեւ պատահականօրէն այս ու այն անկիւնում թառած գրեթէ անթոյր դըօշակներ խուրձերը, որոնք ռազմական շունչ էին տալիս մթնոլորտին:

Հայնաթեւ սեւ քաղկաթում նստած Իշխան Փիլիպոսը մէկ առ մէկ ընդունում էր համայնքի երէց ու կրտսեր «ընդերին», խորհուրդներ տալիս, թէյ ու կարկանդակ հրամցնում, լակոնական կարգադրութիւններ անում եւ երբ տեսակցութիւնը վերջացած էր համարում, լուս բարձրանում էր, թեւերը կանթում մէջքին եւ երկար ժամանակ աչքը չէր հեռացնում սեւ նիզակներով չըջանակուած «Հայկական Կիլիկիոյ» վիթխարի քարտէսից:

- Կիլիկիան սկիզբն էր ու նաեւ վերջը:
- Եւ ամէն ինչ սկսում էր Ալեքսանդրէթից:

Իշխան Փիլիպոսը մտովին մտնում էր ծովափի բարձրարեւմ գերբի վրայ կարծեւ յաւիտենապէս նստած իր տան շէմից ներս, նախադաւթից անց՝ նստ հիւրասենեակ, այնտեղից յարակից սենեակներն ու վերնաշարիկ ննջա-րանները, դուրս գալիս պատշգամբ եւ թիկունքը անդը-ամանոսեան շրջային առում՝ դիտում Հայկական Մոցը, ուր լեղակ-կանաչաւուն ջրերի վրայ առում Թեւերի պէս պսպղում էին պտղաւորանաւերն ու թմբած ծովային դահու թեւերի պէս պսպղում էին պտղաւորանաւերն ու թմբած ծովային կրեաների նման երբեմն իրենց գլուխն օրօրում ձկնորսական յոգնած նաւակ-

ները: Նրա հայեացքը հետզհետե՛ փարում էր ծովափի ապիտակ լայնեղր աւաղին, ապա զալիս կանգ առնում առանձնական կողմում թիկնապահների նը-  
ժան ուղղամիզ բարձրացած արմաւենիների ու նրանց սրունքների տակ տա-  
րածուած կիտրոնենիների ու նարնջենիների թաւ կանաչի վրայ: Երբեմն ծո-  
ռերի շուքին մէջ երեւում էր այգեպան Բաղդասարի երկարուած դուիր, ապա  
դիմացի թաւուաններից լսում իր ժիր պաւակների՝ Ռուբէնի, Լեւոնի  
ու Սմբատի զարմանահարա՛ ճիչերը: Այդ օր, Տիրուհի Ջապլունը արտակարգ  
աշխոյթի մէջ էր: Խոհարարին ու աղաթիւնին իր թեւերի տակ առած՝ անընդ-  
հատ կարգադրութիւններ էր անում, խոհանոցից հիւրասենեակ վաղում եւ  
երրորդ անգամը լինելով մաքրել, փայլեցնել տալիս ոսկեթոյր ամանեղէնի  
սարքը: Այդ օր, Ֆրանսական հիւպատոս Մօսիօ Լանֆանը իր աիկնոջ եւ Ա-  
լեքսանդրէթի աւագանու հետ պիտի վայելէին Սոն Էմէլլանսի հիւրասրբու-  
թիւնը: Համազամ կերակուրների ու խորտիկների բուրմունքը աշխարհն էր  
բռնել: Բերկրանքը կախուել էր օդից եւ քարացել: Այդ այնքան հիւրասրբու-  
թիւն չէր, որքան դիւանագիտական ժեսթ՝ մի կերպ կանգուն պահելու հա-  
մար Ալեքսանդրէթի Հայ քնակչութեան զնալով երբեք զարձող նաւը: Օրե-  
րը մթազնում էին: Փարիզն ու Անգլարան մութ բանակցութիւնների մէջ էին:  
Յայտնի չէր Սանճաքի ճակատադէրը: Քանի դեռ Հաստատուն էր պապեհա-  
կան տունը՝ կեանքը յաւերժական էր թւում: Երբոր քացուիք դռներն յու-  
տոյ... Իշխան Փիլիպոսը փակում էր աչքերը եւ արցունքի մի չիթ լըլտնցե-  
լով նրա թթմեւրձ ախօսը դնում, կորում էր այտերի անթիւ կնճիռների ծալ-  
քերում: Նրա ներսում կսկիծը քանդում էր արդէն բազմիցս քարուքանդ ե-  
ղած ներաշխարհի պատերը: Նրա հայեացքը պղտորում էր, սակայն միայն,  
մի կերպ հոգեւին նա հասնում էր Փայաս, Մարաշ ու Հաճըն, մինչեւ Կե-  
ռարիա: Ու տակաւին Սիւս, Տարսոն ու Մերսին եւ տոանց քացառութեան թա-  
ռում Մուսա Լերան բարձունքին: Վերապան քեզի, Մուսա տաղձ, մրմջում  
էր նա եւ նաւաբեկ ընկնում բաղկաթոռի մէջ:

— Իշխան... — աշխատում էր նրա ուշադրութիւնը դրաւել Հոգաբար-  
ձութեան նախագահ Նիկողոսը, հազիւ աթոռի ծայրին նստած:

— Աւանց ծովի Հայաստան չ'ըլլար — իր մտքերը բարձրաձայն շարու-  
նակում էր Իշխան Փիլիպոսը — Մեծն Տեղրան ու Փիլարտոս Իշխան միակն  
էին, որ հասկցան սա ճշմարտութիւնը: Եթէ մեր նախահայրեր քիչ մը հե-  
ռատեռ ըլլային, փոխանակ լեռ բարձրանալու, բաց ծով կ'իջնէին եւ այսօր  
մենք մենք պետութիւն կ'ըլլայինք: Քեզ օրինակ Կիլիկիոյ հարստութիւնը...

— Սակայն, Իշխան, Թեմական... — կրկին փորձում էր Հոգաբար-  
ձու Նիկողոսը բնականոն հունի մէջ ղնել վաղուց ի վեր բնդհատուած խո-  
սակցութիւնը:

— Ծօ, մա'րդ արարած, քեզի կ'ըսեմ մենք Հայերս ջուրէ կը վախ-  
նանք: Քարերու կառած ենք եւ երեք հազար տարիներէ ի վեր քար կը ծա-  
մենք: Յետոյ կ'ըսենք, թէ ինչո՞ւ մեզի կարեւորութիւն չեն տար: Կառպից  
Ծով գացինք՝ հոնկէ փախանք: Սեւ Ծով գացինք՝ հոնկէ փախանք: Միջերկ-  
րական գացինք՝ հոնկէ փախանք: Ասիկա ըլլալի՞ք քան է...

— Այդ բոլորը շիտակ, Իշխան, բայց — այս անգամ յուսահատ ընդ-  
միջում էր պարոն Նիկողոսը — բայց այս իրիկուն ժողով ունինք...

— Ինչքան կ'ուզէք ժողով ըրէք, սպուտ ըսեմ: Մենք պէտք է վերը...



մենակ իր տոհմի գահին եւ կարօտի էր քաշում իր աշխարհացրիւ բեկորներէ: Ճիշդ է, կապր միշտ կար: Որդիները հեռուից հեռու հասնում էին, օգնում ու հոգում նրա բոլոր պէտքերը, սակայն մի տեղ, մի բան խարխիւ էր: Այլեւս բերկրանք չկար Լօնդֆելտ փողոցում եւ կենքը առաջնայ համը լուսնէր: Ինքն էր ու Տիրուհի Զապլունը եւ քարաշէն տնի պարապ սենեակները: Հիմա քիչ էին խօսում, առանց խօսելու հասկանալով իրար:

— Զապլուն:

— Ի՞նչ է Փիլիպոս:

— Վառարանը տաքցոր:

— Այս շոգի՞ն:

— Կը մտիմ, կնի՛կ:

Տիրուհի Զապլուն իր տիրամօր խորշում լուսէ երեսով նայում էր ամուսնու բեկումնած աչքերին եւ ինքն էլ միեւ չէր զգում իր յոգնած օսկորներում: Փռքրիկ, դանդաղ քայլերով նա դառնում էր տան անկիւններում առանց որոշակի գիտեմալու, թէ ինչ է փնտռածը: Ու յաճախ հայտնջքը պատուհանից դուրս դիմացի բլրակին յառած՝ նա վերապրում էր հեռուոր լադւարթ մթնշաղկները եւ ակամայից երգախառն աղօթքի պէս մի բան նրա հուրթեան խորքերից բխում էր վեր, ինչպէս կորած վտիտ մի վտակ:

Մինչ ի Տաւրոս լեռքում հասնալ

Անդ ուր Սրբոցն բնակէ եղեալ

Ի Սեւա մթին լիտռն անուանեալ

Ուր եմ հոգիք լուսաւորեալ

Եւ ընդ Ոստիմ յար խօսեցեալ...

Հիմա իշխան Փիլիպոսը զգում էր երրորդ, թէ չորրորդ զաղթի ցուրտը իր տան մէջ, շրջապատում եւ յատկապէս իր կնոջ օրըստօրէ հալըղ գէմքում: Այս անգամ գաղթը եկել էր զաղտազոյի, կամաւոր ու լուսաւոր խոստումներով: Թոռներից ոմանք նոյնիսկ հայերէն չէին խօսում: Այդ պահերին նա զգում էր իր ներքին ամբողջների սասանումը եւ կենքը դառնում էր մի դուր իրիկուն, օտար քաղաքում, անառաւտ, աննպատակ: Եւ ամէն անգամ, երբ վհատութիւնը ծանրանում էր նրա ուսերին, չղիտես որտեղից մէջտեղ էր խոյանում Մուսա Լեռը, մոնչում ամենի առիւծի պէս եւ քաշը ցցած նրստում Իշխան Փիլիպոսի սրտին՝ անպարտելի, անբեկանելի: Ակնթարթի մէջ տեղի էր ունենում հոգեփոխութիւնը: Փանի դեռ Լեռը կայ, տնիստա կը մնայ Ամանոսեան Շղթան եւ լեռնաշղթայի յակիրթը՝ Ալեքսանդրէթը: Բարձրանում էր նա, թեւերով զրկում մէջը, շտկում թիկունքը եւ աւաղին զլուխը զրեթէ առատադիւն խրած՝ քայլում սենեակի մէկ ծայրից միւսը, ինչպէս ճակատադրական վճիռներով քուրայից անցնող մի յանդուղն Գունդըստալլ:

— Եթէ Տիրուհի Մեծէն տասնամէկ դարեր հաշուութիւնը կրցաւ թաղաւորութիւնը վերահաստատել Կիլիկիոյ մէջ, հարկաւ օր մը վերստին տէր պիտի դառնայ իր պապենական հողերուն, — հայտնջքը Տիրուհի Զապլունին ուղղած, սակայն իրականում ինքն իրեն կամ զուցէ աներեւոյթ պայլերի մէջ հայել հետ խօսում էր իշխան Փիլիպոսը:





\*\*

Թանձր վարադոյրների շուրջ տակ նրա դէմքը անսովոր դալկութիւն էր ստացել։

- Ի՞նչ է, Փիլիպոս...
- Կը մեռնիմ, կնի՛կ...
- Հոգիդ սիրեմ, ինչե՛ր կ'ըսես...
- Տղոց լուր տալու է...
- Բժիշկ Փափաղին իմաց տամ...
- Ձեմ ուզեր։
- Տէր Հօ՞րը...
- Անոր սուրաթը տեսնել չեմ ուզեր...

Տիրուհի Զապունը ալլալուեց։ Յուզքը կրծքից բարձրացաւ ու սեղմընց կոկորդում։ Զոքեց ամուսնու անկողնու եզրին եւ նրա ահապին ձեռքերն առաւ իր ափերի մէջ։

Այդ օր, հակառակ կնոջ Թախանձանքներին, Իշխան Փիլիպոսը մինչեւ ուշ գիշեր վաղուեց ընդունարանում, երկարաշունչ հեռագրեր մշակեց, ջընջեց, վերամշակեց, արտագրեց եւ վաղ առաւօտեան դողդոջուն ոտքերով մօտակայ Փիլիսթի Թաղային հեռագրատուն գնաց։ Վերադարձին շուկայ մըտաւ եւ մեծ տօնախմբութիւն ծրագրող մէկի բծախնդրութեամբ պէս-պէս խորտկեց, կարկանդակներ, մսեղէն ու խմիչք գնեց, ինքնաշարժ վարձեց եւ ուտեստեղէնի այդ պարկերի մէջ մի կերպ տեղ դրաւելով՝ սպրդնած տուն հասաւ ու շիտակ անկողին մտաւ։

Եւ ոպանց մահուան։

Արդէն ինքն ու մահը վաղեմի բարեկամներ էին։ Բազմիցս միմեանց բիրերին էին նայել, կծու հայհոյանքներ փոխանակել եւ մի տեսակ լուռ դաշն կնքել։ Լաւ էին հասկանում իրար։ Գիտէին միմեանց յամառ բնութիւնը եւ խուսափում էին անհամ տեսարաններ օտարացուց։ Իշխան Փիլիպոսի պղտոր հայեացքը դանդաղ սահեց ընդարձակ ննջասենեակի դորգազարդուած պատերն ի վեր, իջաւ, շոյեց բազմիցս տեղաւան արուած հնամենի կահ-կարասիները, մի պահ կենտրոնացաւ արեւելեան պատի խաւնացած պատմական նկարների արանքում նստած Թուրքիեանց Տան գունաթափ դրօշի շուրջ եւ ապա եկաւ ու կտնդ առաւ Տիրուհի Զապունի մտահոգ կնճիռների վրայ։

— Տղաքն եկա՞ն։

— Հալլաթ պիտի դան, — սրտապնդեց Տիրուհի Զապունը՝ շոյելով ամուսնու կիզուող ճակատը։

Այդպիսի հաճելի ջերմութիւն երբեք չէր զգացել Իշխան Փիլիպոսը։ Զերմի ալիքները դալիս, քանդում էին իր ներսի վիթխարի սառոյցը, հեղուկանում եւ տարածւում մինչեւ իր կեանքի հեռաւոր անկիւնները։ Նրան թուում էր, թէ սարիների երթի հետ ցուրտը կաթիլ առ կաթիլ բերեղացել էր իր հոգու անօթում եւ կախուել այնտեղ զերթ քարայրային սթալաքովիք։ Նա փակեց աչքերը եւ ընկղմուեց տենդի ծովում։ Նա այժմ դգում էր անպատաների թէժը իր երակներում այնքան մտերիմ, այնքան հարազատ, գրեթէ աւշառ։ Սակայն մի աներեւոյթ ուժ իրեն հրում էր սառնամանիքի անձեւ բերանը։ Հիմա իր սրունքներից վար ցուրտ խաւար էր։ Մըսում էին նրա



էր, երկու այլ բժիշկներէ հետ քիչ առաջ աւարտել էր վերջնական քննութիւնը եւ զլուրը խորհրդաւոր կերպով շարժել։

— Անյոյս է։ Հայրիկը հոգեվարքի մէջ է։

Վճիռը ցնցել էր բոլորին։ Ընդարձացրել։ Միայն մանուկներն էին, որ չհասկանալով բազմիցս իրենց արուած սաստերը, փողոցում ու տան պարտէզում շարունակում էին իրենց բերկրալի ճիւղերը՝ իրենց Վեճն Բարային հիւանդութիւնը մի աստուածատուր պատեհութիւն նկատելով դերդաստանի մատաղ սերնդի համախմբման։

Իշխան Փիլիպոսի ննջարանում պայտական անդորր էր տիրում։ Նրա մահուան պահն անգամ ինչ-որ իշխանական վսեմութիւն ունէր։ Անգղիոյ գլուխը ետեակ բարձրի վրայ յենած, հակայ մարմինը ծիրանի վերմակի մէջ պարուրուած, աչքերը խուփ եւ ծնօտը յամառ, նա նմանում էր միջնադարեան անեղ մի միապետի։ Ոսկեթոշր մահճակալի ոտքին կից թաւապատ նրստարանի վրայ միմեանց գրկել էին մայր Զապուլուն ու դուստր Զապէլը եւ լուռ արտասուում էին։ Նրանց յետեւ, կիսաշրջան կաղձած կանգնել էին սրդիները, հարսներն ու այլ ազգականները՝ տրտում, տարտամ աչքերով։ Դիմացի լուսամուտից դարնանային արեւը պատուել էր թանձր վարազորներէի մութը։ Լոյսի չեղբը ինչ էր Ռուբինեանց Տան դրօշի վրայ։ Պատուհանից դուրս ծաղկել էր ծերացած նշնին իր ամբողջ փարթամութեամբ։ Գարունը կարծես փորձում էր կտրել ապակիները եւ ներս խուսել։

Ժամը տասին, մուտք գործեց Սողոմոն քահանան։ Նա յուշիկ քայլերով մօտեցաւ տիրուհի Զապուլունին, բաներ չլնջաց նրա ականջին, ապա տեղ բռնելով մահամերձի սնարին մօտ, նախ հաղաց, ապա միապագա ծախով սկսեց կարգաւ Պահպանիչը։

Քահանային ներկայութիւնը իր հետ վերջնականութիւն էր բերել։ Խնդիրը կարգադրուած էր Աստծոյ ներկայացուցչի բարեխնամ հովանաւորութեան ներքոյ։ Տէր հօր դէմքի վրայ Հայոց Եկեղեցու դարաւոր տառապանքն ու խտուրթիւնն էր նստել։ Թոքոսի կիներ փղձկաց եւ դէմքը թաղեց թաշկինակի մէջ։ Յուզքը վարակեց այլոց։ Որդիների, յատկապէս Ռուբինի աչքերը, գոլորշապատ ապակու արտայայտութեամբ յառել էին իրենց հօր մոռյօրէն խաղաղ դէմքին։ Անխօս, նրանք գիտէին, գիտակցում էին իրենց յանցանքը։ Մենակ էին թողել ծերունուն, հիւանդ, անհաղորդ ու անխեղ։ Եւ հիմա եկել էին ականատես լինելու նրա մահուան։ Ռուբինը արեւնելու աստիճան խածեց վարի շրթունքը՝ խեղդելու համար ներքին հրարուրի ժայթքումը։ Կոստանդինը, ամենակրտսերը, իր զանգուռ զլուխը յենած պատին՝ մտովի վերադրում էր Բէյրութի իր մանկութիւնը, երբ ամառ յետկէսօրնեփին հօր ձեռքից կառչած խայտում էր Միջերկրականի ջրն ջրերում։ Ահ, այդ բարի, հուժկու, ապահով ձեռքը։ Որքա՞ն սէր ու գուժ կար այդ խոթոտ արտաքինի տակ։ Հիմա համախմբուել էր ընտանիքը նոր աշխարհի նոր յարկի ներքոյ հրաժեշտ տալու նահապետին եւ աներեւոյթ լարերով նրանցից իւրաքանչիւրի մօտ վերահաստատուել էր արեան կապը, հայութեան աշխարհայատուկ ձայնը, որը նուազել էր ժամանակի ու տարածութեան հետեւանքով։ Նրանք զգում էին այդ՝ ամօթի, վշտի ու ինքնադատապարտման միմեանց խաչածեղ յարումների միջից։ Միայն թէ ուշ էր։ Հայրը պիտի մեկնէր անմուրազ ու անմխիթար։

Քահանայի ձայնը կերկերաց, ապա կտրուեց, կախուեց միջոցում։

Յանկարծ քարացաւ նեղասենեակը:

Բոլորը նկատեցին, թէ ինչպէս կծկուեց Իշխան Փիլիպոսի աջ ալիքի մկանները: Մի պահ ետք, աջ ալիքի կոպր լիւր բարձրացաւ եւ այդտեղից երևաց Նախարարը: Անքաղաքի լոյսը եւ լոյսի մէջ կերպարանք ստացաւ Ռուբինեանց Տան գրօշը: Իշխան Փիլիպոսը թողեց տիեզերային ճօճանակը եւ բացեց միւս ալիքը: Երբ որ բացուին դռներն յետոյ եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ, չմնալ երկիրն մեր Արմենիայ երբ փայլէ իւր քաղցրիկ օրերը: Անշարժ հայեացքը լոյսին՝ նա տեսաւ խրոխտ դապար Սմանտոսան շղթայի ծայրին եւ լսեց մի բուռ հայորդիների օրհասական ժողովը ամպերի միջից: Ձա՛րկ, Մուսա տաղ, հօգւոյդ մատաղ, զա՛րկ, որպէսզի բացուին դռներն յուսոյ, որպէսզի սա թափառական ժողովուրդը խաղաղութիւն կերտէ իւր հայրենեաց երկրին մէջ: Ընկաւ լերան լանջին եւ ափերով զրկեց հողը: Յոգնած էր: Եթէ մինչեւ իր ինկուն հասնի կատարին, այլեւս ապահով է: Ընդ գործ դրեց: Գլուխը բարձրացրեց ու շուրջը նայեց: Թորոս, Սմբատ, Կոստանդին, Ջապէլ, Ռուբին, Լեւոն, Ջապլուեւ եւ թուր ու խարտեալ գէժքերի մի հոյլ, որոնք հետզհետէ կարծրացան իրենց հեղուկային վիճակից դառնալով իրականութիւն: Մի անկընթացութեամբ գիտակցութիւնը իր տիրապետութիւնը տարածեց Իշխան Փիլիպոսի, իրերի ու առարկաների վրայ: Շուտ եկաւ, պղտոր աչքերը ներկաներին յառեց ու բացազանչեց:

— Շանորհդ: Շուտ շանորհդ:

Ներկաները պապանձուել էին: Նրանք իրենց աչքերին չէին հաւատում: Ջղիտէին լա՛ւ թէ խնայալ: Լեւոնը, որ ութ տարի բժշկութիւն էր սորել, նման բան չէր տեսել: Բժշկագիտական բոլոր տուեանների համաձայն, Իշխան Փիլիպոսը պէտք է, որ հիմա հոգին աւանդած լինէր: Սակայն փաստն այն էր, որ նա կար, որ արդէն նստել էր անկողնում եւ խոժոռ-խոժոռ իր հարստաներին էր նայում, զննում: Լեւոնը առանց պաղարկելու կորցնելու մօտեցաւ եւ փորձեց կրծքադէտով քննել հօր սիրտը, երբ չիմացաւ ինչպէս մետաղէ գործիքը հօր նանկն ընկաւ, ճօճուեց օդում եւ զարնուեց հանդիպական պատին:

— Ես երբեք ինքզինքս այսչափ առաջը զգացած չեմ, — յայտարարեց Իշխան Փիլիպոսը եւ վեր բարձրացաւ ու ամբողջ հասակով ցցուեց սենեակում: Մինչեւ որքան իջնող լայն, ճերմակ գիւլերաշապիկի մէջ նա նմանում էր յուռթի հանդերից եկած վիթխարի մի վանականի, որը մեծաառանի հաստափոր գրքերի փոխարէն հողի հետ է գործ ունեցել: Ներկաների դարձացական արտայայտութիւնների տարափի տակ նա մի պահ տատանուեց, ապա զտնելով հաւասարակշռութիւնը հաստատուն քայլերով շարժուեց դէպի նրբաշարունի խորքը, մտաւ արեւի լոյսի հոսանքի մէջ եւ հասնելով արեւելեան պատին, օղակակալից դուրս հանեց Ռուբինեանց Տան գրօշը եւ նոյն հանդիսաւոր քայլերով եկաւ ու նստեց իր դահլիճ:

— Զօքեցէ՛ք — հրահանգեց Իշխան Փիլիպոսը:

Ջաւակունք ու հարսներ, ազգականներ ու չափահաս թոռներ մէկ մարդու պէս, հաւաքական քնածականութեան ենթարկուածների նման անասցին հրահանգը:

— Կրկնեցէ՛ք ինչ որ ըսեմ — ասաց Իշխան Փիլիպոսը Գիլիկիայի քերթընդան հնամենի գրօշը պարզելով իր գերդաստանի վրայ:

— Կ'ընդունում...

- Կ'երգնում... — արձապանդեց գերդաստանը։  
 — Ռուբինեանց քաղաքաբնակն անախտ...  
 — Ռուբինեանց թագաւորութեան տնտեսով...  
 — Հաւատարիմ մնալ...  
 — Հաւատարիմ մնալ...  
 — Հայրենիքիս...  
 — Հայրենիքիս...  
 — Փառավորդիս...  
 — Ժողովուրդիս...  
 — Եւ նախնեացս աւանդութիւններուն...  
 — Եւ...  
 — Եւ...  
 — Ազաւագրելով Կիլիկիան...  
 — Ազաւագրելով Կիլիկիան...  
 — Վերստեղծել...  
 — Վերստեղծել...  
 — Հայոց ամբողջական պետութիւնը...  
 — Հայոց ամբողջական պետութիւնը...  
 — Սեւ ծովէն մինչեւ Միջերկրական ծով...  
 — Սեւ ծովէն մինչեւ Միջերկրական ծով...  
 — Արարատէն մինչեւ Մուսա տաղ...  
 — Արարատէն մինչեւ Մուսա տաղ...  
 — Վկայ է Աստուած...  
 — Վկայ է Աստուած...  
 — Եւ...  
 — Եւ...  
 — Կիլիկիոյ այս սուրբ դրօշը։  
 — Կիլիկիոյ այս սուրբ դրօշը։

Երգման արարողութիւնը աւարտուած էր, սակայն ոչ ոք չէր համար-  
 ձակում տեղից շարժուել։ Դիւթանքը շարունակուած էր։ Այլ պարագաներէ  
 տակ՝ այս ողջ ծիսակատարութիւնը կարող էր անհեթեթութիւն նկատուել,  
 սակայն նրանք ականատես էին եղել հրաշքին եւ այլեւս ամէն մէկ երեսօրթի,  
 ամէն մէկ խօսք ու շարժ, խորհրդապաշտականից անցնելով իրական տարածք  
 էր ստացել։ Այլեւս ոչ ոք մենակ չպիտի թողնէր նահապետին։

Իշխան Փիլիպոսը արտասուաթոր աչքերով պրկեց դրօշը եւ գողտջուն  
 շուրթերով համբուրեց ծայրը։ Նրան հետեւեց Ռուբինը։ Այդ Լեւոնը, եւ  
 այսպէս մէկ առ մէկ Կիլիկիոյ հանրապետութեան անդամները համբուրելով  
 Ռուբինեանց Տան դրօշը արժանացան նահապետի օրհնութեանը։ Այդ ընդ-  
 հանուր յուզելի մէջ մէկը սկսեց երգել։ Նրան միացան ուրիշներ։ Մի քանի  
 վայրկեան անց՝ Իշխան Փիլիպոսի տունը լեցուեց հարազատ, հնամենի հրե-  
 շիւններով։

• • • • •  
 Երբ որ ծիծառն իր բոյն դառնայ,  
 Երբ որ ծառերն հագնին տերեւ,  
 Յամկամ տեսնել գիւմ Կիլիկիա  
 Աշխարհ որ ինձ ետուր արեւ։

.....

Եւ ոչ մէկ վայր է արդարեւ,  
Գեղեցիկ քան զիսկիս  
Աշխարհ որ իմն ետաւր արեւ:

Իւխան Փիլիպոսի բողոքները իրականացել էր: Մոպակոն դաւազանի մէկ հարուածով համախմբել էր տունը եւ հայութիւն հաղորդել նրան: Պատրաստուել էր վախճանին, սակայն վերջին պահին, վաղուց թախտախապի պէս կեղծ խաղաքարտ էր նետել սեղանի վրայ եւ խաբել ժողովան: Ամէն ինչ կամ ոչինչ: Աքացի էր տուել ժողովան պոչին եւ դուրս վռնել նրան իր տիրապետութեան սահմաններից: Հիմա նա վէճք ու պրահ հագած, սպիտակ ձին հեծած արշաւաւ էր Կիլիկիայի երկայնքով ու տարածքով՝ կայծակնաթափ հասնելով Կորնիկոս, Պապիոն, Լուլու եւ Լամբրոն եւ դէռ Պիզոն, Մամբրոն, Կոստանար ու Կորիսոն՝ ամէնուրեք վառելով աղատութեան ջահը եւ աւետելով աւետիսը: Տենդր այրել, զտել էր նրա միջից՝ վհատութեան վերջին նշույլը: Հիմա նա իր երազների մէջ աւելի իրական էր, քան իրականութիւնը:

Նախագաւթում մանուկների զուարթ աղմուկ էր բարձրացել: Դռները բացուելին եւ մի քանի կեանքերի հոսանքը խուժեց ներս:

— Ծամբայ քացէ՛ք — հրամայեց Իւխան Փիլիպոսը — ես կ'ուղեմ թոռներս տեսնել:

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՏ

«ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԸ»

Անտիպ շարքէն



## Ա Հ Ա՛, Դ Ա Ր Ը Մ Ե Ր

Նրանք կուում էին, ինչպէս կափամարտի ախոյեաններ,  
 հլմում, ընկնում էին, մօրից շարունակում պայքարն իրենց,  
 Կմէն մէկի աչիքն գալիք յաղթանակի շողն էր փայլում,  
 Նրանք կուում էին, ընկնում, ելնում՝ խիզախ ու անվեհեր:

Սիրտը... սիրտը՝ ճնճոյշ ոչինչ գիտէր կեանքից, լոկ զգացմունք,  
 Զգացմունքն էր նրա աչքերին փայլ տուել կեանքի մասին,  
 Մինչ միտքը, միտքն արթուն սաեռալ ժամի վազքին միշտ ունկնդիր,  
 Զգացմունքն այդ նրան թւում էր լոկ կառուկ, ցմաք մի սին:

«Օ՛, ո՛չ, արտին պիտի յաղթել որ մա սանձի զգացմունքն իր,  
 Այս գարը նիւթինն է, որը լոկ խորհելով ձեռք կը բերուի,  
 Այս դարը մտքինն է, ո՛, անպայման պիտի սրտին յաղթել,  
 Կամ լինել յաղթական, կամ գոնէ չլինել նրան գերի»:

Իայց տկար չէր սիրտը, պայքարում էր արի ու խանդավառ,  
 Էլ ինչո՞վ տարբերուի մարդն անեղի, գաժան անասունից,  
 Հոգու աշխարհն մի՞թէ կարելի է նիւթով գերել, բանտել,  
 Հոգու աշխարհն մի՞թէ կ'անցատի սիրողին սիրասունից:

Նրանք կուում էին՝ արիւն-քրտինք մտած ախոյեաններ,  
 Նրանք ընկնում էին, ելնում էին մօրից՝ յոյսով զինուած,  
 Նրանք երկու անվախ, հերոսներ քրտնաբոր ու անհամբեր,  
 Գալիք յաղթանակի փայլուն յոյսով անվերջ կուում էին:

Նրանք կուում էին կեանքի գնով սակայն միտքը խաղաղ,  
 Զգաց յաղթանակը մօտիկ իր ոտիսի... մեռակ էին,  
 Ինչո՞ւ չխորտակել սրտին քարով արագ ու անյաղաղ,  
 Ոչ ոք չկար ներկայ, որ վկայէր գործած իր մեղքերին:



...ն սապալուեց սիրտը, արնաշագախ փռուեց խինդը շրթին.  
Միտքը շառագունած՝ յազթած էր սրդ, սակայն չար կեղծիքով,  
Բայց ի՞նչ սարսափ, չէ՞ որ կռուի թե՛մում թրանք մենակ էին,  
Ո՛չ ոք, ո՛չ ոք չկար տեսած այդ կեղծիքը, իր կարծիքով:

Հեզեմեմի ժպիտը իր շրթին տեսա նա խոր շունչ փաշեց,  
նր դարձաւ չորս քույրն, լուսնի՛ն էր, անդո՛րը շրջապատում.  
Բայց յանկարծ... այն ո՞վ էր, արուակա՞ն էր արդե՞տ այն ով շարժուեց.  
նր աչքերն սարսափից կտրացած տեսիլներն էլ չէր գտնում:

Բայց յետոյ ճանաչեց... խիղճն էր իր դէմ կանգնած թեմում մարտի,  
«Ուրեմն գիտէ նա, ...եւ մէկը եերիք է ողջ աշխարհին»,  
Ո՛ր, ինչո՞ւ խորտակեց, օ՛ր, ինչո՞ւ սպանեց անմեղ արտին,  
Նա՛ որ ցանկացել էր, եւ արեւելքի իրեն միշտ դէպ բարին:

նր մտեցաւ խիղճը, մտեցաւ նա մտքին, սառն-անտարբեր,  
Ափսոսանքով նայեց գետին փռուած արտի անշունչ մարմնին,  
— Նա մեռաւ, դա՛ւ ապրիր, ու մղի՛ր մարդուն դէպ՛ նոր վերելքներ,  
Եւ տեսել՝ ...չեմ տեսել, այդ մասին միամիտ, վստահ եղիր»:

Ասաց ու հեռացաւ... Բայց ինչպէս վստահեա կեանքդ նրան,  
Երբ կարող է անշունչ քեզ փոխել մի յայտնի խեղկատակի,  
Վեր ա՛ն մի քար եւս, գարկի՛ր նրան, եղի՛ր կապանքներով.  
Մի քար եւս... ահա հանգիստ եւ աշխարհում դաւ առյաւէտ:

✱

Եւ ահա դարը մեր, ուր միտքն է իշխում արդ լոկ, ամէնուր,  
Սպանուել է սէրը, գաւթը, հաւատն ու խիղճը տառադարար,  
Եւ միտքը խեղագար, զղացած արածից զնայ դէպ ո՞ր,  
Ո՛ր անգործ կը գտնի, երբ չկայ էլ սիրտը համբերատար:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

## ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Ս Է Ր Է

## ՅԱՆԿԱՊԱՏՆԵՐԻ ՏԱԿ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԺԲ.

Մօտ մէկ շաբաթ տեւած հիւանդութիւնից մի կերպ կազդուրուած՝  
Արամը դպրոց էր եկել:

Ելիզաւետա Մարկովնան բացատրում էր «յաջողել» բայը եւ իր մութ  
կապոյտ աչքերի անկիւններով ծածկօրէն նրան էր դիտում սիրակարօտ:

Առաջներում, սիրուհու աղպիսի հայնացքներից, նրա սիրտը սիրա-  
յին ցնծութիւնից այնպէս էր ճղւում, որ նա ցանկանում էր թռչել տեղից,  
բոունցքներով ծեծել իր կուրծքը, եւ ամբողջ դատարանին, ամբողջ դպրոցին,  
ամբողջ քաղաքին յայտարարել՝ «Նայեցէ՛ք եւ տեսէ՛ք ինձ, ես ամբողջ աշ-  
խարհում ամէնից երջանիկ տղան եմ, որովհետեւ այդ զեղեցկուհին, որին  
ես սիրում եմ, իմն է հիմա եւ իմն է լինելու միշտ»:

Այժմ էլ այդպէս չէր: Այժմ նա սարսափով էր ընկալում իր սիրուհու  
ծածուկ հայնացքները, որովհետեւ նրա ամէն մի հայնացքից յետոյ, զայն  
թակուրեան եւ անտեւածան պայծառ էր պնդում նրա վերաւոր սրտում:

«Ինչո՞ւ է նա ընտրել «յաջողել» բայը, — մտածում էր նա, — նրա  
համար, որ նրան յաջողել է ինձ խաբել, թէ ուղում է ինձ ցոյց տալ, որ ինձ  
յաջողուել է նրա սէրը վայելել: Յնորձ»:

Գերմաներէնի դասը վերջացաւ: Արամն զգալով, որ միւս դասերին չի  
կարող նստել, հաւաքում էր զրքերը տուն գնալու համար, երբ իր ուսի վրայ  
զգաց Ելիզաւետա Մարկովնայի թեթեւ ու տաք ձեռքը:

digitised by

A.R.A.R.@

— Արամ... :

Նա թողեց զրթելը եւ անմիջապէս ոտքի կանգնեց.

— Ելիդաւետա Մարկովնա... :

— Ինձ ասացին, որ հիւանդ էիք: Ի՞նչ ունէիք: Նորի՞ց գլխացաւ: Վերջին մի քանի ուսանող-ուսանողուհիներ յետ-յետ նայելով, թողնում էին դասարանը եւ նրանք օտարուած էին նրանց ներկայութեամբ այդ ձեւով խօսել:

— Ո՛չ, Ելիդաւետա Մարկովնա, այս տղամ ոչ գլխացաւ... :

— Ներեցէ՛ք, որ շկաբողացայ վալ ձեզ տեսնելու... :

— Այդ ոչի՛նչ:

Ելիդաւետա Մարկովնան իր շուրջը նայեց: Այժմ նրանք մենակ էին:

— Ընկերուհիս զնացել է, — չնչաց նա եւ կարմրեց, — այս գիշեր քառ օրովական ժամին... :

— Լիզա, ես լիջօրէն խոսոված եմ քեզանից... , — ասաց նա տխուր-թեամբ:

Ելիդաւետա Մարկովնան ծիծաղեց եւ արտասանեց գերմաներէն մի բանաստեղծութեան առաջին տողը, որը նրանք երկուսն էլ միշտ կրկնում էին ու ծիծաղում.

«Մեծ է կատակդ՝ սիրային տագնապում...» :

Արամը շփծաղեց.

— Այո, Լիզա, սիրային ասպնազ կայ, բայց կատակ չկայ... :

Ելիդաւետա Մարկովնան նրան նայեց ապշած.

— Տո՛ւն ես գնում:

— Այո՛:

— Ես էլ: Սպասիր ինձ փողոցի անկիւնում, այնտեղ կը խօսենք:

— Լաւ, — համաձայնեց խոսոված սիրեկանը:

Փողոցի անկիւնում նրանք հանդիպեցին եւ քայլեցին վաղ ամրան արեւի շողով ու գուրգուրող ճառագայթներով ներծնւծ փողոցներով: Դէժ ուղէ՛մ եկող կանայք ու տղամարդիկ նրանց էին նայում հիացումով: Նրանք երկուսն էլ բարձրահասակ էին, երկուսն էլ հրապուրել արտաքին ունէին եւ թւում էր, թէ նոյն տարիքի էին եւ ամուսիններ:

Եւ, որովհետեւ նրանք գերմաներէն էին խօսում, անցորդները կարծում էին, որ նրանք հայերէն չեն հասկանում, դանազան դիտողութիւններ էին անում նրանց մասին:

— Ի՞նչ հրաշայի ամուսնական գոյդ, — ասաց մի ուղիղ իր բնիկ-բուհուհի:

— Այո, — հառաչեց միւսը, — այդ սիրուն երիտասարդը հայ է երեւում եւ ես սիրտի ուզենայի, որ նա ինձ հետ լինէր եւ ոչ այդ չիկաների:

Ելիդաւետա Մարկովնան շատ էր ուզում գիտնալ, թէ անցորդներն ինչ են խօսում իրենց մասին, բայց Արամը մտայլ էր եւ չէր թարգմանում:

— Հիմա ինձ ասա, թէ ինչո՞ւ ես խոսվել ինձնից... , — քայլելով, ստիճիկ նայելով եւ կարմրելով, հարցրեց Ելիդաւետա Մարկովնան:

— Լիզա, — ասաց նա, — ես լսել եմ քո եւ կարողութիւն քոտակցու-թիւնը... :

— Ո՞ւր, ե՞րբ:

— Նրա ժամանման հետք առաջին գիշերը: Ես... :

մամբ եւ մի քիչ էլ կատկած, որ քո ընկերուհին կարող է եկած չլինել, եկայ կանգնեցի լուսամտաւոր առջեւ եւ լսեցի ամէն ինչ։

— Եւ հիմա դու գիտես, որ ես աստուծոյ հետ ամուսնութիւնը։

— Այո։

— Եւ աստուծոյ հետ ինչ գրաւ համար։

— Ոչ, չարունակում եմ սիրել քեզ։

— Շարունակում ես սիրել, երբ գիտես, որ մենք չպիտի ամուսնանանք, ինչպէս դու ես պահանջում։

— Այո, որովհետեւ ես պիտի պայքարեմ, մինչեւ որ քո համաձայնութիւնը ձեռք բերեմ։

Ելիզաւետա Մարկովնան ծիծաղեց այնպէս, որ կարծես, թէ նա առաջ, որ ինքը յոյս ունէր, որ մի օր թեւեր պիտի առնէր ու թռչէր։

— Ինչո՞ւ ես ծիծաղում, — վերաւերում Հարցրեց նա։

— Ներքի՛ր ինձ, Արա՛մ, — անկեղծօրէն խոսեց կինը։

Նրանք մի քիչ տեղ լուռ քայլեցին։ Ելիզաւետա Մարկովնան զղջացի էր իր ծիծաղի համար, ենթադրելով, որ վերաւերել է իր սիրեկանին։

— Ես կարծում եմ, որ իմ սէրը յաղթական պիտի դուրս գայ, որովհետեւ այն փոխադարձ է եւ անկեղծ, — առաջինը խօսեց նա։

Գեղեցկուհին ծիծաղեց նորից։

— Գիտե՞ս քեզ մօտ ամէնից շատ ինչն եմ սիրում, Արամ։

— Ոչ։

— Բո՛ւ պարզամտութիւնը։

— Այսի՞նքն։

— Որ մի օր քո կինը կը լինեմ։ Անկարելի է։

— Ինչո՞ւ, — բարձր ձայնով Հարցրեց նա։

Նեղ փողոցով քայլող անցորդները նրանց նայեցին, բայց բան չհասկացան։

— Ո՛չ, ամուսնութիւն։ Խնդրում եմ ոչ, Արա՛մ։

Նրա խանդավառութիւնն անցաւ։

— Ինչո՞ւ ոչ, Լիզա՛, — Հարցրեց նա բեկուած ձայնով։

— Որովհետեւ ես կարծում եմ, որ չկայ աւելի ձանձրալի բան, քան ամուսնական կեանքը։

— Եթէ փոխադարձ սէր կայ, այն ամենամեծ երջանկութիւնն է, Լիզա։

— Դու շատ երիտասարդ ես, եւ չես ճանաչում մարդկային հոգիներն, Արամ։ Ամուսնական սէրն ամէնից տաղտկալի սէրն է եւ այլեւս չի նշան է ու մարդած...։

— Սէրը հազուադէպ է, Լիզա՛։

— Այո։ Բայց նաեւ սէրը գինի չէ, Արա՛մ, որ ինչքան հինանայ, այնքան ազնուանայ։ Սէրը հոգեկան արտայայտութիւն է, իսկ մարդկային հոգիները միշտ որոնման մէջ են... միշտ էլ նորը փնտռող...։

— Միշտ որոնման մէջ գտնուող հոգիները ճշմարտապէս չեն սիրել, Լիզա՛...։

— Իսկ ո՞ւր է ճշմարիտ սէրը։ Յոյց տուր ինձ մէկ հատ միայն։ Թե՛րեւս ասես Տրիստանի եւ Իզոլդէի սէրը։ Բայց, այդ նախ առասպել է եւ յե-



Ելիզաբետա Մարկովնան մի պահ մտածեց եւ ապա ասաց, տառնց նը-  
րան նայելու։

— Արամ, այդ սէրը ես ստեղծեցի քո մէջ եւ իմ հետանալով, այն կը  
հեռանայ ինձ հետ...։

— Ձեմ հասկանում, — ասաց նա տարակուսանքով։

— Արամ, ես պարզ եմ խօսում։ Ասացի, որ իմ նկատմամբ քո ունե-  
ցած սէրը ես ստեղծեցի քո մէջ...։

— Ինչ արեցիր, որ ստեղծեցիր։ Կախարդեցիր ինձ, — հարցրեց նա,  
ինքն էլ չհաստատելով իր հարցումին։

— Nein, Dumkopt, nein, — Ծիծաղեց կինը։

— Ինչպէ՛ս։

— Արամ, դու կանանց չես ճանաչում դեռ...։

— Ինչպէ՞ս արեցիր։

— Իմ անձնական հնարքներով։

— Ես չտեսայ քո այդ հնարքները։

— Ձէիր կարող տեսնել...։

— Ինչո՞ւ արեցիր այդ, Լիզա՛։

Ելիզաբետա Մարկովնան գլուխն իջեցրեց իր հարուստ կրծքին, մի  
պահ մտածեց եւ ապա ասաց շփոթուած։

— Արամ, այդ ես արեցի ինձ համար...։

— Ձեմ հասկանում, — ասաց նա։

— Արամ, դու շատ գրաւել մի սղայ ես...։

— Ա՛հ, նորից իմ գրաւչութիւնը։ Ամէն տեղ, ամէն մէկի մօտ։ Այլեւս  
ձանձրացել եմ...։ — Իր սիրուհուն ընդհանեց նա բարկացած։

— Արամ, լսի՛ր ինձ։ Մինչեւ չլսես, չես կարող հասկանալ, թէ ինչո՞ւ  
քեզ սիրահարեցիր ինձ վրայ...։ Ասացի արդէն, որ դու շատ գրաւել նրիտա-  
պարզ ես։ Եթէ դու եւրոպական մայրաքաղաքներում ապրէիր, այսպէս կոչ-  
ւող «բարձր» գասի չըլնանակներում «գալը» կը դառնայիր...։ Եւ ես չէի կա-  
րող շօգտուել ինձ ընծայուած առիթից...։

— Ա՛խ, այդպէս, — հառաչեց նա, եւ ապա Ծիծաղեց նրա ասածի  
վրայ անտարբեր։

— Արամ, մի՛թէ ես յանցանք եմ գործել, — նրա Ժանը ապրումները  
տեսնելով, հարցրեց երիտասարդ կինը մեղաւոր։

— Իսկ իմ սէ՞րը, Լիզա՛...։ Քո նկատմամբ ունեցած իմ սէ՞րը...։

Գեղեցկուհին նորից օգտուելով անցարդների բացակայութիւնից իր  
թաւշեայ այսը կպցրեց նրա այտին եւ կողքին նայելով ասաց։

— Ես արդէն ասացի, որ իմ նկատմամբ քո այդ սէրը ես ստեղծեցի  
քո մէջ...։ Դու դեռ շատ երիտասարդ ես, Արա՛մ, եւ չես կարողանում հաս-  
կանալ, թէ իմ տարիքի մի կնոջ համար ինչ նշանակութիւն ունի մի երիտա-  
սարդի գրաւչութիւնը...։ Եւ ես սղեցի օգտուել առիթից, մի վայրկեան եր-  
ջանիկ լինելու համար։ Նոյնն էլ դու արա, Dumkopt...։

— Այո՛, — թուաց, թէ Ծաղրեց նա։

— Դու նորից շարունակում ես յամառել, Dumkopt...։ Կարեւորը դա-  
րը չէ, այլ վայրկեանը...։ Կարեւորը հոգիների հաղորդակցութիւնն է...։ Հո-  
դիներն միացումը, հոգ չէ, թէ ինչքան կարճ...։ Դու առաջին երիտասարդն  
ես, որի հոգու հետ, իմ հոգին իրապէս մերուել է...։ Ինձ համար էլ գիւրբին

չէ քեզնից բաժանուելը... Բայց, եթէ մենք ամուսնանանք, ես պիտի սկսեմ առել քեզ, որովհետեւ ես ատում եմ սիրոյ կաշկանդումը ինչ-որ պրաւոր պայմանագրերով, որն ամուսնութիւն է կոչուում: Ես արգահատանք եմ դրում այդ բառի նկատմամբ: Խնդրում եմ հասկանալ ինձ, Սրա՛մ: Ես մեղաւոր չեմ, որ այդպիսին եմ, եւ այդպէս եմ հասկանում մի կ'ոտջ եւ մի տղամարդու սիրային ժողովարարութիւնները...

Նրանք կանգնեցին Ելիզաւետա Մարկովնայի բնակարանի տան բակի դրան առջեւ:

— Հիմա ցերեկ է եւ կասկած չի կարող լինել... զնանք ինձ մօտ: Մէկ շարժւի՛ք, որ չենք առեւել իրար եւ ես անհուն կարօտ ունեմ Ձո նկատմամբ... — աչքերում սիրային մշուշ, սիրային վայելքի խոստում, առանձնակեց գեղեցկուհին:

— Ո՛ր, — ասաց նա տխրութեամբ:

— Ո՛ր: Դու ասացի՛ր ո՛ր, — դարձացաւ երկտասարդ կինը:

— Այո...:

— Դու գիտե՞ս, թէ՛ այդ ինչ է նշանակում...:

— Լիզա, ես այնքան շատ եմ սիրում քեզ, որ չեմ կարող քեզ ինձ սիրունի ունենալ... — բացատրեց նա:

Գեղեցկուհին ծիծաղեց այնպէս, ինչպէս երբեք չէր ծիծաղել: Այդ ծիծաղ չէր, այլ ծաղր: Ծաղր մէկի նկատմամբ, որին չեն հաւատում:

— Դու ինձ բարոյականութիւն ես քարոզում, — հարցրեց նա՝ դեռ ծաղրի հետքերն իր լաւ շրթունքներին:

Զգուշով, որ աստիճանաբար իրենց միջեւ խղում է առաջանում, նա գունատուեց: Նա չէր ուզում պատուել այդ կնոջ հետ, որին անսահմանօրէն սիրում էր: Եթէ նա մերժեց իր սիրունու հրաւերը, այդ որովհետեւ ուզում էր նրանից դիմումներ ձեռք բերել իրենց ամուսնութեան վերաբերեալ: Բայց եւ այնպէս նորից սխալ կատարեց, երբ ասաց.

— Ո՛ր, Լիզա: Ես միայն ուզում եմ սիրային իմ սկզբունքներն ապացուցանել, որոնց ես հաւատում եմ:

— Որո՞նք են դրանք:

— Մաքրամաքուր սէր եւ ամուսնութիւն...:

— Դու հաւատո՞ւմ ես թո՛ւյն ասածներին, — իր հարցաքննութիւնն յառաջ տարաւ Ելիզաւետա Մարկովնան, միշտ ծաղրական ժպիտն իր շրթնութիւններին:

— Անշուշտ, Լիզա՛... — ջերմութեամբ հաստատեց նա:

— Ես կուշտ ու անծխտելի փաստեր ունեմ, որոնք ապացուցում են, որ հենց դու ինքդ ժխտել ես թո՛ւյն այդ «հոշակաւոր» սկզբունքները... — ասաց գեղեցկուհին:

— Օրինա՞կ, — հարցրեց նա վախեցած:

— Օրինակ, մեր միասեղ զինուորացիները...:

— Ի՞նչ... — կարմրեց նա:

— Արամ, ես տեսնում եմ, որ դու ամէն ինչ շուտ ես մոռանում, որ բո՛ւք զէ՛մ են քեզ: Դու ինձ հետ սիրային կապի մէջ մտար, երբ ես քեզ չէի քննել, որ համաձայն եմ քեզ հետ ամուսնանալ: Ես, նոյնիսկ, չէի ասել, որ ասել, որ համաձայն եմ քեզ հետ ամուսնանալ: Ես, նոյնիսկ, չէի ասել, որ սիրում եմ քեզ... էլ ո՞ւր մնաց «մաքրամաքուր» սիրոյ եւ ամուսնութեան սկզբունքը թո՛ւյն:

Նա ապշեց, զգալով, որ իր սիրունին արդարացի է և Ռայց եւ այնպէս փորձեց արդարանալ։

— Այն ժամանակ ես չէի լսել քո եւ քո բնկերուն հասակցութիւնը, Այդ օրերին ես կարծում էի, որ դու էլ ճիշդ ինձ նման, ինձ ես սիրում։

— Դու կարծում էիր, երբ ես չէի ասել այդ... Իսկ քո ցուցարարած վայրագ կի՞րքը, Արա՛մ...։

— Ես չեմ իմացել, թէ ինչ եմ արել, Լիզա՛...։

— Ձե՛ռ իմացել... Իսկ ինձ լափելու ցանկութեամբ բոցը քո աչքե-  
րում... Նոյնիսկ, Հենց Հիմա...։

Նա տրորեց աչքերը եւ փորձեց անմեղ տեսք ընդունել։

— Այդ իմ սէրն է քո նկատմամբ, Լիզա՛...։

— Հա՛, սէ՛րը, — ծաղրեց երիտասարդ կինը, չրջուեց ու պնաց։


— Լիզա՛... — կանչեց նա։

Նրա աղերասկան կանչի վրայ, կինը յետ դարձաւ եւ ասաց որոշ ու հաստատուն։

— Ես գիտեմ, որ այս գիշեր դու պիտի գաս, որովհետեւ չես կարող չգալ... Սակայն, ես չեմ ուզում այլեւս քեզինից լսել «մաքրամաքուր» սիրոյ, ամուսնութեան եւ նման բաների մասին։ Յտեսութիւն...։

ՍՈՒՐԷՆ ՍՈՆԻՆԵԱՆ

(Շար. 5)





## Յ Ա Յ Գ Ա Հ Ա Ն Դ Է Ս

Փակէ՛ փեղկերը վարձու սենեակիդ,  
 Ու մտիկ ըրէ ինչ պիտի պատմեմ.  
 Բայց որպէսզի մեզի ոսկորներդ դուրս  
 Թափառող վերջին պշրուտ սիրոյն հետ  
 Պտայտի չելլես,  
 Ու չշօրանջես,  
 Ու չմրափես,  
 Յետոյ մահանաս՝  
 Սեղանիկը հոս առջեւդ է դրուած,  
 Գլունիկ վառէ  
 Ու սուրբը խմէ.  
 Երբ ժամանակը գայ՝ եւ կ'ըսեմ քեզի.  
 Թէ յատակին մած  
 Դիրտը մատմերով ինչպէս կը լիզեն...  
 Լա՛ւ մտիկ ըրէ.  
 Ես կամ ու չկամ  
 Բայց կարծէ որ կամ,  
 Եւ ինչ որ ըսեմ՝  
 Միայն ու միայն  
 Դուսն քեզի ըսէ:  
 Քանի մ'օր առաջ, երեկոյեան մօտ,  
 Երբ աննպատակ կը քափառէի  
 Փողոցներուն մէջ ընդհանրապէս ճեղ  
 Ու մութ, գարշահատ եւ քնաբաքախ.  
 Ուր շուներ միայն մարդոց հետ ընկեր,  
 Մարդոց հաւասար, կեանք մը կ'անցընեն,  
 Պատուհանէ մը մարդ մը գաղամած  
 «Պարոն, չե՞ս ըսեր», ձայնեց յեղակարծ,  
 «Ժամը քանի՞ է»...  
 «Քսանչոյս ժամ է, վեց ժամը հանէ,  
 Ուզած ժա՛մդ է», ըսի քալեցի...  
 «Պարո՛ն», աւելցուց. երբ քովը եկայ,  
 «Հանիս նե՛րս եկուր, ըսելիք մը կայ»...  
 Ըսաւ ետեացաւ որ դուրը բանայ:  
 Առջնորդեց զիս նեղ անցագոցէն  
 Նեղիկ սենեակ մը իր պատուհանէն...  
 Երբ տեղ ցոյց տուաւ բազմոցին վրայ,  
 Ըսի. «Դուսն նստէ, ըսէ՛ քէ ի՞նչ կայ»...

«Բան չկայ, նստե՛ք, ու քովը նստայ:  
 «Դրամ չունիմ ես», «Ինչո՞ւ դրամ կ'ուզես»...  
 Երկար ատենի դեռ չէինք խօսած...  
 «Դրամ չունիմ ես», «Ինչո՞ւ դրամ կ'ուզես»...  
 Դեռուկը օտար ինձի նայեցաւ,  
 ինձի կը նայէր արդէն հըր կ'ուզէր,  
 Անբացատրելի, այս անգամ տարուած...  
 «Կրճա՛մ տալ քեզի, քանի մը մանրութ,  
 Ուրբան կայ հետս», քսի, գրպանիս  
 Գութին համեմատ մանրութ հանեցի...  
 «Գիտե՛ս քէ ինչու դրամ ուզեցի...  
 Քովի սենեակէն, որ հիմա գոց է  
 Դրամ ուզեցի երբ ժամանակին  
 Առանց հաշիւի հաշուետուութեան  
 Դրամ կը տրուէր անկէ, որ հիմա  
 Քովի սենեակն է, որ իմ ազգիկս է  
 Բանտարկուած է եւ քանի մ'օրէ  
 Շատոնց այս գործին մէջը ինկած է  
 Սակայն քարմ է դեռ եւ ցանկալի է...  
 Քանի մ'օր առաջ, դրամ ուզեցի  
 Ու «Դրամ չկայ», ըսաւ քարկացած.  
 Յետոյ քացատրեց, որ ա՛յ յոգնած էր,  
 Մարդոցմէ զանած, եւ դեռ գոչացած...  
 Ըսի. «Քանի որ առանց իմ լուրին  
 Սկսար գործի, առանց իմ լուրին  
 Զղադրիս գործէ. գնա՛ աշխատէ...»:  
 Եւ եթէ երբեք առաջուան նման  
 Արու մ'ըլլայի՝ զինք կը պատժէի  
 Առանց կասկածի եւ զգացումի  
 Սեռապղծութեան, ինքնախաբէրեան,  
 Որ դաս մը տայի...  
 Ու քանտարկեցի... հաց կու տամ իրեն...  
 Ես պատուհանէն, ինչպէս որ տեսար,  
 Ամէն օր այսպէս դուրսը կը դիտեմ  
 Եւ քանջորս ժամ...  
 Որպէսզի մէկը... քեզի պէս մոլոր  
 Երբ անցնի քաղէմ  
 Այս փողոցներէն,  
 Նե՛րս կանչեմ շուտով, ազգիկս տալու,

Ու դրամ ուզեմ...  
 Եւ խոստովանիմ, որ քեզմէ առաջ  
 Երեւ օրումն մէջ երեւ երիտասարդ  
 Կրցայ հաւաքել անցնող մայրերէն...  
 Մէկը քեզի պէս մանուկներ տուաւ  
 Ու փախաւ զնաց...  
 Միւսը սակարկեց ու սենեակին մէջ  
 Աղջկանն հետ բանտակից եղաւ  
 Մինչեւ որ հատաւ...  
 Պարարտ եզ մըն էր, եւ դեռ չեմ մոռնար...  
 Երրորդը սակայն, ազնիւ կը քուէր...  
 Շէնք մի շնորհեալ իր անպարտօն հետ  
 Գործը վերջացաւ հազիւ կէս վայրկեան,  
 Զիս իր իշխան տարաւ մարդասիրական  
 Եւ բարոյական օրինակներով  
 Մեզ իրարու հետ հաշտեցնելու...  
 Թէեւ կարծեց որ լաւ բան մը ըրաւ  
 Ու ծանակ կեանքին այս վերջ մը դրաւ՝  
 Բայց երթալէն ետք՝  
 Չհաշտուեցանք...  
 Մտածեցի որ անիկա մէկն էր  
 Տխմար, խելագար եւ պատահական...  
 Հացերն ապրելու ուրկէ՝ պիտի գամ  
 Եթէ քեզի պէս կամ իրեն պէս միշտ  
 Յաճախորդ չգան...  
 Ի՞նչ կ'ըսես, կ'երթա՞ս աղջկանն իշխ...  
 Տասանորդ մը լոկ հարիւրին վրայ  
 Ինծի կը բաւէ...  
 Դուն ալ իր հանգիստ մեղքերը քաւէ...  
 Ի՞նչ կ'ըսես, կ'երթա՞ս, աղջիկս լաւ է...: :  
 . . . . .  
 Գիտե՞ս թէ ինչու չշարունակեցի...:  
 Ժամանակը չէ՞...:  
 Կարգա՞յ այս գիրքը, քու օգտիդ համար,  
 Եթէ դիմացար ու չմնացար՝  
 Ցայգահանողէս է...:

ՇԱՀՊԱՆ

Հայէպ 1971

## ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

### Ի Ե Դ Ե Մ Ն Ն Ձ Ե Ց

Ծերուկը գոցեց աչքերը, քնացածի երևոյթ տուաւ ինքզինքին ու այդ ձեւով ալ մնաց, մինչեւ որ հիւրերը մեկնեցան: Ետքը նստէն բացաւ աչքերը:

Երկու տարի է ան անկողնոյ կը ծառայէր. հիւանդութիւն մը սողոսկած էր մարմնին մէջ, որ կամաց-կամաց կը մահաշնչէր դնէր:

Հակառակ ծեր հասակին, տակաւին լառոյդ էր. դորձէն դալէն ետքն իսկ, անպատճառ նորոգելիք բան մը կ'ունենար տան մէջ:

Ամէն անգամ, որ դրացիները բանի մը ձեռնարկած ըլլալը տեսնէին, կ'ըսէին.

— Նորէն ի՞նչ կ'ընես, դրացի՛:

— Է՛, դիտէ՛ք. քանի ամիս է միտքս էր, որ շինեմ, բայց ժամանակ չէի ունենար:

Ամբողջ կեանքին ընթացքին՝ միայն այս հիւանդութիւնն էր, որ «հանդիստ» ընել տուած էր իրեն: Իսկ հիմա կունակին վրայ պառկած էր, յոգնածի երևոյթով:

— Երբէ՞ն ի վեր կը պառկի, — կը հարցնէին մարդիկ:

— Երկու տարի է «հանդիստ» կ'ընէ, — կը կատակէին թոռնիկները:

Ամէն մարդ գիտէր. ի՞նքն ալ, որ վերջին արարին վերջին պատկերն էր, որ կը խաղցուի, շուրջինները անշուշտ չէին ուզեր, որ մեռնի ծերուկը, բայց կը հաւատէին, որ թոռնիկն կը մօտենար, ուրեմն մօտ էր...

Ու կարծես ամէնէն մեծ հոգը ապաշխարած քոյրիկներուն ինկած էր. կերպով մը հոտը առած էին, որ ծերուկ մը կայ իրենց թաղին մէջ, որ ճամբորդելու կը պատրաստուի:

Ասեղ զարնող քոյր Հռիփսիմէն, որ մը կանչուեցաւ, որ ասեղ զարնէ: Քոյրը եկաւ եւ տեսնելու ետեւէն տոհմ, ծանօթացաւ ծերուկին ու ընտանիքին միւս անդամներուն:

Ժպիտը դէմքին հարցուց.

— Ծերուկը Աստուծոյ յանձնուած է:

— Ձեմ դիտեր, — ըսաւ հարսը, — բայց մեղք մը դորձելը չտեսայ:

— Ատիկա չի փրկեր, — պատասխանեց քոյրը:

Ետքը ասեղը պատրաստեց, ներս-կեց: Ծերուկը «սուհ» ըրաւ, ցնցուեցաւ, բայց անմիջապէս ետք տաք բամպակին հպումը անուշ թմրութիւն մը բերաւ:

մարմինն. քոյր Հռիփսիմէն երկար դիտեց բաժակը, իր բնաւորութիւնն էր: Անուշ, բարի, աստուածալիս քոյր մըն էր ան. ուրիշներուն պէս կոշտ չէր վարուեր հիւանդներուն հետ:

Հարցուց ծերուկին

— Վերստին ծնած ես:

Ծերուկը չպատասխանեց. միտքէն բաւ դուն չփնջուէ նայէ...

Քոյրը մեկնեցաւ, ան պիտի շարունակէր գալ:

Երրորդ գլուխ, ուրիշ քոյր մըն ալ եկաւ հետը. տուրճ խմեցին ու նիւթը վերստին ծնունդի շուրջ վարձուցին: Պէտք էր ապաշխարէր, մեղք չէ՛ր, մանաւանդ՝ որ մօտ էր մեկնումի թուականը: Հասկցան, որ ծերուկը մօտիկ ազդականներ ունի, որոնք նոյնպէս ապաշխարած էին, անոնց միջոցաւ աւելի սերտացուցին կապերը, ետքը անոնց վրայ ուրիշ երկու քոյրեր եւս աւելցան, ամէնն ալ ապաշխարած ու Գրիստոսը ընդունած էին իր իրենց անմահական փրկիչը: Ասոնք իրենք իրենց պաշտօն տուն, որ պէտք էր փրկել ծերուկը: Այլեւս հոտը առած էին. ամէնն ալ հոն էին, ծերուկին տուրճ, երբեմն ամէնը մէկ կու գային, երբեմն ալ ոտիկաններու պէս զոյգ-զոյգ: Օրինակ, եթէ կէսօրէ առաջ քոյր Եղիսարէթը եւ քոյր Եսթերը գային, կէսօրէ ետք քոյր Եռուշանը եւ քոյր Զարուհին կու գային:

Մանաւանդ Զորեքշարթի օրումն աւրօթադուլէն ետքը, ամէնքն ալ հոն կը հաւաքուէին, քարոզին մասին կը խօսէին, օրումն յարմար քարոզ մը ըլլալը կը պատմէին, թերթիկներ կու տային ծերուկին, որ ազատ եղած ժամանակ կարդայ, կամ յաճախ իրենք կը կարդային ու կը քաջատրէին երկինքի թագաւորութեան մասին: Ետքը զժողային տանջանքներուն մասին կը խօսէին: Որքան երջանիկ էին իրենք, որ փրկուած էին: Այլեւս իրենց կը մնար միայն մահուան վարագոյրին սպասելը, որ զիրենք անցաւոր աշուք մարմինէն պիտի զատէր, առիթ պիտի տրուէր իրենց երկինքի ար-

քայութեան մէջ Աստուծոյ աջ կամ ձախ կողմը բազմելու: Աւ հիմա կ'ուզէին, որ ծերուկն ալ իրենց հետ երթայ:

— Պէտք է ապաշխարես, Սարգիս եղբայր, — կ'ըսէր մէկը:

— Ըշմարիտ կ'ըսեմ, երէկ մէկ ժամ քեզի համար ազօթեցի, — կ'ըսէր ուրիշ մը:

Բայց կարծես ծերուկը քէն ըրած էր, չէր խօսեր անոնց հետ ու չէր պատասխաներ անոնց հարցումներուն. միայն երբեմն շրթունքները կը շարժէր:

Քոյրեկները մէկ-մէկ ազօթելով՝ իրենց տունները կ'երթային՝ Սարգիս եղբայրը նիւթ ընելով:

— Ի՞նչպէս կ'ընենք Աստուծոյ դարձքնել, — կ'ըսէր մէկը:

— Տակաւին շատ անտարբեր է, — կը յարէր քոյրիկ մը:

— Ո՛ւշ, այսօր Տիրոջ կամօքով քիչ մը փոխուած տեսայ. երէկուան ազօթքս բաւական օգնած պէտք է ըլլայ, — կը պատասխանէր ուրիշ մը:

Եթէ պատահէր, որ ծերուկը երկնային հարցով մը հետաքրքրուէր, քոյրերուն տրախութիւնը սահմանը կ'անցնէր եւ ուրախ-ուրախ ամենամօտիկ քրոջը տունը կ'երթային՝ հուաքաբար ազօթելու Սարգիս եղբոր համար:

— Տեսա՞ք առաջ որքան անտարբեր էր, — կը ծայրէր քոյրիկ մը:

— Այո, այդ Աստուծոյ ուժին ներգործութիւնն է, — կ'ըսէին միւսները:

Երբեմն այնպէս կը պատահէր, որ իրենց ներկայութեան ուրիշ հիւրեր ալ գային, աղագականներ, մօտիկ դրացիներ, անոնց ալ ապաշխարութեան մասին կը խօսէին ու կ'երթային:

Անոնց երթալին ետք, անոնք, որոնք կը ճանչնային քոյրերէն մէկը կամ միւսը, կ'ըսէին.

— Զ'ամհար ալ, թո՛ղ առաջ տունը տանտիկնութիւն ընէ, ետքը թող դայ տանտիկնութեան մասին խօսի, — կ'ապաշխարութեան մասին խօսի, — կ'ապաշխարութեան մասին խօսի, — ամուսինը ձգեց զինքը:

Բանէն դուրս եկաւ, որ այցելութեան եկող վեց քոյրերէն շորսր ամուսնալուծւած էին. մէկուն ամուսինը կանուխէն հողին տւանդած էր ու վեցերորդը առկաին շէր ամուսնացած:

Անոնց աղջիկներն ալ ամէն տեսակ տղոց հետ գուրս կ'ելլէին, չպարուած ու կարճ հագուստներով ու երբ առարկութիւն ըլլար, կ'ըսէին.

— Մեր աղջիկները զարգացած են, համալսարան կը յաճախեն:

Բայց ամէն անգամ, որ մէկու մը կարճ հագնիւր տեսնէին, անմիջապէս անոր անկիւրթ վարժունքը կը մատնանրէին:

Այս բոլորը ծերունիին կը պատմուէր. իրաւ էին ըսուածները: Ապաշխարութիւն քարոզողները՝ նախ իրենք պէտք է ապաշխարէին:

Մէկը տանտիկնութիւն ընել պէտք էր դիտար: Ապաշխարութեան մասին խօսիլ, տունը անխնամ ձգել ու ամուսնին հետ գտնուած մնալ, ասիկա անհեղինակ մեղք մըն էր:

Ուրիշ մը իր քննադատի յաջողութեան պատճառաւ՝ նախանձէն նոյնիսկ հիւանդացաւ:

— Ասանկ ապաշխարութիւն կ'ըլլայ, — կ'ըսէին:

Բայց անոնք այդպէս էին. Վերստին ծնածները: Միշտ իրարու տունը կ'այցելէին ու աղօթքով կ'անցրէին օրերն:

Կը պատահէր, որ աղօթքէն ետքը հիւր մը գտնուէր, քիչ ետքը, հիւրը հիւրասենեակ առանձին ձգելով՝ ներսի սենեակը կը քաշուէին եւ նորէն կ'աղօթէին: Անշուշտ ետքը հիւրին ալ կ'առաջարկէին, որ աղօթէ ու կը բացատրէին իրենց փրկուած ըլլալը:

✱

Քոյրերը երբեք առանձին չձգեցին ծերունիը:

Անոնցմէ մէկը կ'ըսէր.

— Գիշերը կ'աղօթեմ, երբեմն կէս ժամ, մէկ ժամ, ու վերջանալէն ետքը,

երբ կը պատրաստուիմ քննելու, յանկարծ ձայն մը կ'ըսէ.

— Ել աղօթէ:

— Ո՞ր Տէր, — կ'ըսեմ, — հիմա աղօթեցի. եթէ երեք վայրկեան ալ աղօթէի, ճիշդ քառասուն վայրկեան պիտի ըլլար:

Ձայնը նորէն կ'ըսէ.

— Ել աղօթէ:

Մերունը երբ լսեց, շտկեցաւ, նոր շունչ մը եկաւ վրան, ըսաւ.

— Այո՛, այդ ձայնը ճիշդ է. պէտք է նորէն աղօթես:

Երբ բոլոր հիւրերը մեկնեցան, ծերունիը խօսեցաւ կրկին, թէ՛ կը հաւատարմորէն ձայնին ու այդ քանը պատմողը պէտք է նորէն աղօթէ. բայց այս անգամ անկեղծ սրտով:

— Այո՛, — շարունակեց ծերունիը,

— Հողիւ տնային կը մտածեն, բայց ի՞նչպէս ապաշխարեմ. չեմ կրնար, նոյնիսկ այն օրերնէ սկսեալ, երբ Առաքին Համալսարանային պատեհագոյն ետքը տունս եկայ: Արդէն երբ քաղաքս մտայ, ամէն ինչ խորտակուած ու տակնուվրայ եղած էր, տունս աւերակուած էր, ու մէջը արիւնի հետքեր կային. կարծես կիսա, դաւակներս բոկոտած էին, թո՛ւնէ, ըսի ու դուրս ելայ ու անկէ ետք երբեք չեմ աղօթած: Այո, կը հաւատամ Աստուծոյ, բայց ձեռքս չէ, չեմ կրնար մը տիկ ընել. ամէն անգամ Աստուծոյ անունը յիշելուս՝ Հայրենիքս միտքս կու գայ, կիսա, դաւակներս կը յիշեմ:

Յուդուհեցաւ ծերունիը, չկրցաւ շարունակել:

Թոռնիկները, հարսը, դաւակը, երկրորդ ամուսնութեան մը արդիւնքն էին. ու հիմա ծերունիը, որ դրեթէ մահուան անկողնին մէջ է, այդ մտածումներով պաշարուած էր:

Պատերազմին, զինուորութեան կանչուած էր, ու ամբողջ պատերազմի տևողութեան պերմանացի սպայի մը քով ծառայող մը եղած էր: Զինադադարին, երբ տուն եկած է, տեսած է, որ ամէն ինչ կործանած է: Իր կաշուածները ու-

րիշին մնացած էին, ու ինքը վճարում էր իր հայրենիքին, ու հիմա օտարութեան մէջ պիտի մեռնէր, մինչ ապաւիտարած քոյրերը իր գլուխը կը դնէին: Չէր ուզեր մտիկ ընել. առաջ քան կը մեռնար, բայց տենեք կը սպասէին արթննալուն:

Մերուկը ամիսներով յարձակում կը բռնէր, օր մը յարձակողականի անցաւ:

— Անգամ մըն ալ ամուսինդ հետդ բեր, — բտաւ քոյրիկի մը:

— Հոս չէ, — պատասխանեց քոյրը:

— Ո՛ր է:

— Ամերիկա մեկնեցաւ:

— Ի՞նչ պիտի գայ:

— Որտե՛ղ չէ:

— Ի՞նչ դնաց:

— Հինդ վեց ամիս կ'ըլլայ. վաճառականական գործով պնաց:

Մերուկը գիտէր, որ ամուսինը հեռացած էր, բայց կը հարցնէր չեւտակի նայելով կնկան աչքերուն:

— Ուրեմն վերադարձի թուականը որո՞շ չէք գիտեր:

Քոյրը աչքերը դնաին՝ խուսափողական պատասխաններ տալով մեկնեցաւ. անգամ մըն ալ չեկաւ:

— Ետա կուտ ծերուկ մըն է, — ըսաւ:

Մերուկը երկրորդի մը հետ ալ այսպէս վարուեցաւ: Ու երրորդը՝

— Այս մարդը խենթ է, — ըսաւ ու մեկնեցաւ:

Չորրորդը պաշտպանեց ինքզինքը ու ամուսինին յանցանքը բլլալը պատմեց ու աւելցուց.

— Մինչեւ չապաշխարէ՛ հետը պիտի չխօսիմ:

Մերուկը միայն տանդ զարնողէն կ'ախրժէր: Բարի հոգիով մէկն էր:

Բայց միւսները կը շարունակէին պալ. կը բացատրէին, օրինակներ կը բերէին:

Սակայն ծերուկը անգորշուելի կը մնար, անոր սիրտը աւելի կ'արթննար հայկականութեամբ:

Մերուկին միտքը կ'աշխտէր բաճալ հայոց պատմութեան մութ մնացած անկիւնները: Կը հասկնար, թէ տակաւին ինքը բան չէր գիտեր, հակառակ հայ բլլալուն:

Այնքա՛ն կ'ուզէր գիտնալ իրենց ծագումին մասին: Երբեմն, տնտեսաւ, մինչեւ մեծ թոռնիկին զրադարանը կ'երթար, կը նստէր առջեւը, հայոց պատմութեան գիրք կը փնտռէր:

Կեանքին մէջ հայոց պատմութեան գիրք բնաւ չէր ունեցած. ամօթ կը զգար ասոր համար. թէպէտ, հայրենիքին մէջ թուրքը չէր ձգած, որ ունենային. բայց հոս ո՛չ թուրք կար, ոչ ալ հայոց պատմութեան արգելող ուրիշներ: Բայց չէր խորհած առնել, չէր հետաքրքրուած աւել, միայն գործած էր կենդանի մը պէս, ու հիմա պահած՝ կը մտածէր.

— Ամէն տուն հայոց պատմութիւն մը պէտք է ունենայ, — կ'ըսէր ինքն ինքն:

Թոռնիկները երբեմն կը պատմէին, Հայկի, Արամի, Մեծի Տիգրանի մասին. կ'ուրախանար, կ'ործքը հպարտութեամբ կը լեցուէր: Կ'ուզէր, որ աւելի պատմեն: Թոռնիկները կը պատմէին, թէ ինչպէս Փրանտալի գիտնական մը Վանի չրջանին մէջ պեղումներ կատարած միջոցին, քառակուսի տուփ մը գտած է, որուն երկու կողմերուն քանդակուած է Արա Վեդեցիկին ծնունդը, խաչկութիւնը, թաղումը եւ յարութիւն առնելը: Ժիշի Քրիստոսին պէս ու անկէ հազարաւոր տարիներ առաջ:

— Մենք աշխարհի առաջին ժողովուրդներէն ենք, — կը բացատրէին վարդապետներն, — կը ըսէին, որ հիթիթներն թոռնիկները, եւ կ'ըսէին, որ հիթիթներն ու ուրարտացիները մեր մէջ ձուլուեցան:

Մերուկը ապահաբար մտիկ կ'ընէր: Որքա՛ն անծանօթ էր այս պատմութիւններուն:

Օր մը, ծերուկը հարցուց.

— Ինչո՞ւ միւս ազգերը արձանագրութիւն չգրած են, իսկ մենք՝ ո՛չ:

— Անոնք գիտէին, — բացատրեց

թոռնիկը, — որ իրենք պիտի մեռնին, անհետանան, անոր համար իրենց պատմութիւնը գրեցին ժայռերուն վրայ: Իսկ մենք գիտէինք, որ պիտի ապրինք, պիտի շարունակենք մեր կեանքը եւ անոր համար ալ պէտք չտեսանք:

Ծերուկին հոգին ուրախութեամբ կը պարուրուէր, տաք շունչով մը կ'ողողուէր սիրտը: Ատկէ առաջ լսած էր միայն Մեծն Տիգրանի մասին, Անի քաղաքին մասին ու անկէ անդին չէր անցեր իր գիտցածը: Իսկ հիմա, գրաբարին հիթի-թերէնի մէկ հիւղը բլլալը գիտէր. ու գիտէր, որ Արմէնոյտ ցեղին պատկանող մարդիկը հայեր են, Քրիստոսէ հազար հինգ հարիւր տարի առաջ Եգիպտոսի մէջ լազուարթի հանքերուն պատերուն վրայ իրենց անունները գրած են հայերէն գիրով:

Ծերուկը տակաւին ծարաւ էր: Ան ամէն առիթ կ'օգտագործէր թոռնիկները քովը նստեցնելու ու անոնցմէ լսելու հայտնի պատմութեան զանազան դրուադներէն:

Թոռնիկները կը պատմէին սիրով, թէ ինչպէս Քրիստոսէ երեք հազար տարի առաջ Եգիպտական թագուհի մը իր գերեզմանին վրայ գրել տուած է. «Ո՛վ հիւսիսէն փչող զօփիւտ, եկաւ փչէ զերեւմտեան վրայ», ու այսպէս բաներ:

Ու նոյնպէս Արուօծ անունով աստուծոյ մը անունը, որ կը գտնուի Եգիպտոսի թանգարաններէն մէկուն մէջ:

— Գիտե՞ս, մեծ պապա, այս տարի յիսնամեակ է, — բաւ թոռնիկը:

— Այո, գիտեմ, — պատասխանեց ծերուկը:

— Մէկուկէս միւրոն ծառ պիտի տնկեն Հայաստանի մէջ, ի յիշատակ ապրիլեան նահատակներուն:

Ու այդ ծառերէն մէկն ալ քու կընկանդ յիշատակին է անուշտ, — բաւ թոռնիկը:

— Միայն կնկա՞ն, — բաւ ծերուկը, — անկէ դառ երկու տղայ ու երեք աղջիկներ ալ ունէի, անոնք ալ կորսուցուցի, — չկրցաւ շարունակել, յուզ-

ւեցաւ, աչքերը արցունքոտեցան:

Ուրեմն վեց ծառեր տնկուած էին Ծերուկին զոհերուն յիշատակին:

Միւս հինգ ծառերը նորութիւն էին թոռնիկին, ինչպէս Ծերուկին համար նորութիւն էին թոռնիկին պատմածները: Երկուքն ալ լուր էին, կը խորհրդածէին: Թոռնիկը գիտէր, որ երկրորդ ամուսնութեան մը արդիւնքն էր, բայց մանու-թանութիւնը չէր գիտեր. նոյնպէս ծերուկը գիտէր, որ աղբ մըն էին, բայց չէր գիտեր այդչափ հին ու բարձր աղբ մը ըլլալնին:

Ծերուկը հոգ չէր բնիւր ալիւս մեծիւր- իր հոգին ամէն ուղղութեամբ բաւարարուած էր: Ինքը հետեւ իսկ չէր գտած իր սիրելիներուն ու չէր կրցած նոյնիսկ խաչ մը տնկել անոնց դիմուն վրայ, այսօր անոնց յիշատակին ծառեր կը տնկուէին:

Բան մը փոխուած էր Ծերուկին մէջ. սիրտը թթեցած էր, կը խօսէր, կը կուտակէր: Երբ տարեկից մը այցելէր իրեն, անոր կը պատմէր թոռնիկներուն պատմածները:

Այլեւս սիրտը չէր նեղուեր, երբ զանին հապուոր քոյրերը: Անոնք կէս լանդիմանական ձևով կ'ըսէին.

— Պէտք է ապաշխարես, սիրտդ մի կարծրացնես, Սարգիս՝ եղբայր:

Հակառակ անոնց աշխատանքին, Սարգիս եղբայրը բնաւ այդ մասին չմտածեց. անոր մտածումը երկրիքի թագաւորութիւնը չէր, այլ Եդեմի պարտէզը, անիկա բուն դրախտը գտած էր, այդ էր այլեւս իր մտածումին առարկան, եդեմը, որ դարեր առաջ Աստուած տընկած էր Հայաստանի մէջ, ու Հայաստանը ինքը Եդեմի պարտէզն էր ու Ծերուկը կը փափաքէր հոն երթալ, ամբողջ սրտով:

Անկէ ետք, շատ շապրեցաւ Ծերուկը, մեռաւ: Երբ հոգեւոր քոյրերը անոր ուր երթալուն մասին հարցուցին, թոռնիքը ըսին.

— Մեծ պապան ի Եդեմ ննջեց:

ՆԵՐՍԻՍ ՎԻՐԱՊԵԱՆ



# ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՍ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ

Ասարայրուած Սարգսարապատն՝ ա՛յգն է քո մեծ փրկութեան

Ինչքան շատ եմ ես հեռանում՝ նորանում ես դու այնքան,  
Թէկուզ ծաղկոյ այս հողով էլ այն եզերքն է քո ոգին,  
Եզերքամայր չէիր դու միշտ, ազնկանայր իմ հայկեան,  
Թէպէտ երգչիդ քում էր միշտ թէ ոգեբերքն է քո ոգին,  
Այն ինչ՝ վազուց յուշ է դառել աշխարհայի քո նամբան,  
Դեռ ինչ էլ գայ՝ էլի կ'առնեմ՝ Հայկի տէգն է քո ոգին:

Գիտեմ՝ չկայ այս աշխարհում ոչ մի խոյանք անխոյանք,  
Ինչքան էլ քեզ վար եմ գրում՝ միշտ վերելքն է քո ոգին,  
Ասարայրուած Սարգսարապատն՝ ա՛յգն է քո մեծ փրկութեան,  
Դեռ եմ գլխից քամր-որումս ու սուրբ երգն է քո ոգին,  
Դարերիդ մէջ այս կէս դարն է, որ ողբիդ տուն եկան,  
Ինչ էլ ողբամ՝ երգ ես նորէն, ոչ թէ վերքն է քո ոգին,  
Դեռ արցունքուդ քո Սեւանն էլ լոյս է ծնում որումս,  
Ծիծաղախա ծիծաղուդ յայտն ցոյցն է քո ոգին:  
Կը նորոգէ քո ծիծաղն էլ հին Անին էլ քո հին տան,  
Քո զինանքի մայր առիծի անպարտ քեզն է քո ոգին:  
Այսպէս կ'առնուծ չես մնալու՝ ո՛վ էլ գոցէ քո նամբան,  
Դէպի լեռնոյ վեր ազնկուդ յայտն էլ քո ոգին:  
Այս կէս դարն է, որ կուտն է՝ չարիւնտուկ, հողդ, ցուն,  
Որպէս արծաւիդ գոյգ թեւերդ՝ սիրտն ու ինչքն է քո ոգին,  
Զէնքի տեղակ երգդ է այժմ աշխարհակալ անկայան,  
Աշխարհաշէն ու երգամայր քո սուրբ սեռն է քո ոգին:  
Ճերմակ ջարդն էլ քեզ չի բնկնի, ինչպէս եղեան հայաստան,  
Քո գիրն՝ իրքեւ քո ոգնաշարն ու քո հեռն է՝ քո ոգին,  
Քո այսօրը թէ արծաթ է, քո՛նն է ոսկի ապագան,  
Այս էլ կէս դար, իմ Հայաստան, միշտ վերելքն է քո ոգին:  
Թէկուզ մի քուտ այս հողով էլ դու ծաղկում ես դիւքական,  
Քո անցեալի լացոյ թառով նոր վերելքն է քո ոգին,  
Ձէ, սուրիւ սրտով չեղաւ, դու ես Յիսուսն յարութեան,  
Խաւարի դէմ վեր մաշտոցում արեւելքն է քո ոգին:  
Կ'ուզեմ երբեք՝ էլ ոչ մի քար՝ չարիւնտուի քո նամբան,  
Քո Շիրազի վեր տոյսակալդ՝ քո արքայն է քո ոգին,  
Առանց Մասիս չես մնալու, դու իմ յաւերժ Հայաստան,  
Արարատում քո խոյանքով՝ տեղեկն է քո ոգին:

Յ. ՇԻՐԱԶ

### 3. ԶՈՐԵՑԻ

#### ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐԱՎԷՊ

«Ես եմ» Հայը հիմ քիւզանդալամ եւ հայկական ժամանակներու վրայ  
Ս.

«Բազմիցս աստիճան տարիներու աստիճան թիւերուն մէջ քանի մը պատմութեան տարազներէն հաշ, Ս. Զորեցի երկար ատեն լռեց: Բայց ըստ երևոյթի, տղ լռութիւնը գրեթէ արարեցին տղնչութեամբ շատերու մօտ կրկնուող ընթացիկ ցաւահանութեան մը հետեւանք չէր: Ահաւասիկ փաստուր: Հայկական ուղեւորավէպը խորագրին տակ՝ երկտասարդ գրողը խմբագրութեան յանձնած է ծաւալուն ձեռագիր մը, որ կը պատկերացնէ բովանդակ Արեւմտեան Հայաստանը եւ Արեւմտեան Հայաստանին կապուած, անկէ բխած զգայութիւնները, ապրումները, կեանքներն ու կերպերը:

Հայկական ուղեւորավէպը արտով գրուած հետաքրքրաշարժ գործ մըն է:

Ե Ս,

Ս Է Ր Ե Ր Ս,

Մ Ե Ն Ս Է Ր Ս

•

Հայկական երկտասարդ մըն հմ:

Անուն՝ Հրայր Քարկան:

Մեքենային «ցաւը», «հողին» պաղտիք շուէին ինծի համար: Արհեստաւոր հմ, բայց անուշ չեմ բոլորովին: Նախակրթարան աւարտած հմ: Տարեկիցներս գիտեն՝ մեր ատենուան Հայկական հայկական վարժարանները ի՞նչ մեծ ուսուցիչներ ունէին, որքա՞ն բարձր մակարդակ. «ճեմարան» էին:

Կարող դաստիարակներու շունչով, աղուո՛ր կրթութեամբ, լա՛ւ հասունացաւ սերունդ մը: Ես այդ սերունդէն հմ. ուրեմն, շատ բնական է, ընթեր-

յոսէր հղած ըլլամ ևւ բարձրագոյն կրթութեան պէս բաներ մըն ալ ստա-  
ղած ըլլամ կարդացած անհամար պրօքերէս :

Աղատ ժամերո միայն ավոք խաղալով չէ, որ անցուցած եմ. գրական, մարդական եւ այլ թերթերու հետ եղած եմ, կը շարունակեմ բլլալ:

Ետո լաւ կը ճանչեամ մեր մեծ գրողներէն շատերը — Վարուժան, Սիւսաննո, Զօհրապ, Դուրեան, Մեծաբնից, Զարգարեան, Բաֆֆի, Արդեան, Տէրեան, Ահարունեան, Զարեց, Օլապան, Համաստեղ, Եանթ, Էալյիւստոնց գործերը հասկցած եմ, կը սիրեմ պիւրիկը:

«Հեթանոս երգեր», «Իրիկ նանուպարիկ», «Կոյժեր», «Վերք Հայաստանի», «Ագառուոթեան ճանապարհին», «Իրիլը», «Անճարելը», «Մատա Լեւոյան քառասուն օրիլը», *և իման ուրիշ գրքեր Աւետարաններս են*։ Վկայուածայունքն ալ կարգադրեր եմ ծալիւ-ծալիւ։

Յարգելի

Կը ճանչնամ Հիւսկոն, Շէյքսպիրը, Հայկէն, Պուչկինը, Մոփասոսը, Մէթէրլինկը, Պայրընը, Ռոսոն, Պերսաք Շոն, Եւայի. ասոնց կարդալսած եմ Հայերէնով անշուշտ. ասկէպէս զիտեմ թիւ մը Փրոստերէն, թիւ մը անգլերէն, թիւ մըն ա՛յ՝ ամէն բան...

Շատ կը սիրեմ կոմիտաս, Խաչատուրեան ունկնդրել, խաչրատ լուծել, որսորդութիւն ընել, շաքիապաւերդ գիտել եւ... Օտեսնին սիրածը կոծնել, երբեմն...

Հիմա, ինքդինքս երբ կը ներկայացնեմ, հաստատելէ՞ք՝ եստիրողան  
զգացողներու Կալֆիներ չկան մէջնա՝ ուր մնաց, եստիրողութիւնը արդէն կ'ա-  
տեմ ա'յնքան, որքան թուրքը:

Նպատակս պարզ է. հորս կ'ուզեմ անձն ճանչցնել, համեստ կենսա-  
պրոցեսներն ներգրավացնելով, ինչպիսի աբսարա՞նք ըլլաւ զիտցնել, որպէսզի՞  
Հին բրդանդականն եւ Հայկական ճամբաներս վրայ ունեցած ապրումներս,  
յուղումներս աւելի՛ Հասկնալի ըլլան ձեզի ու Հաղորդական:

*Depression.*—

Մանկութիւնս անցուցած եւ Հալէպի պարտէզներուն մէջ թութ եւ ծիրանն ուտելով...

Մանկութիւն,

မှောင်မိုက်စွာ၊

**QUESTIONS**

Աղաւոր բաներ են. շէ՞ն :

Զեպքս անցած դրուշը կու տայի մեր տան մօտակայ պարտէզին պահիրն, կը քաղճրանայի ծառ՝ կրցածէս աւելին ուտելու...

Ինծի համար անխոսադրենելի հաճախ էր կորսուիլ ճիւղերու, տարւել  
նկոտ մէջ. իրկատ ժամանակ վայելել քաղցր ու կարմրաւուն թութը:

Հայրա, թաշնի Սիսոնը, ալք տանուան հարերուն պէս, շատ  
պարզ մարդ էր, սակայն, իբրեւ բարակոյր արժէք ունէր թաղին մէջ, պիտէ  
տխել'ն կ'աշխատէր. ամէն երբաւի փռա կը դնէր, պապալ կ'երկթորէ: Խոշոր  
ափի մը շատի պարկէ, սիրուն կողով մը բերած էր թծի: Օր մը, կողովիկը  
պարտէզ տարի, պահակին դուռը մը աւելի տուի, լիցուցի դաշն ամենէն հա-  
մեռ. Բա... Բա... մասնակէ տուան, հարազատի մեծ սօրա:

Sub.

— Առ, ՅԷՌԷ, կեանքիդ մէջ այսքան համեղ թուր չես կերած. հաս  
գարացի է. քնկի համար հաւաքեցի...

Տարիներ անցած են թէև, բայց լաւ կը յիշեմ, մեծ մայրս հաճեցաւ հաս մը, միայն հա՛տ մը ուտել...

Յետոյ, պիտի օրօրեց տխրութեամբ, թօշնած աշտերուն վրայ դառն քմծիծաղի եւ տառապանքի խառն գիծեր աւելցնելով, հառաչեց.

— Ա՛խ, Խալիք...

— Ինչո՞ւ հախ՝ կ'ըսես, Յէմէ...

— Թու՛թ չես տեսեր քի... չես կերեր քի... մեր երկրին թութը ո՛ւր, աշտեղինը ո՛ւր...

Երկի՛ր...

Առաջին անգամ կը լսէի այս մասին...

Ի՛նչ է այս երկիրը՝ ըսուածը...

Մանուկներու յատուկ քոնաւոր հետաքրքրութիւն մը արթնցաւ մէջս, սկսաւ բազմապատկուիլ «արդեօքներով»...

Երկիրը շատ համեղ թութ ունեցող մեծ պարտէ՞ղ մըն է արդեօք...

Հեռո՞ւ է այդ պարտէղը...

Լա՛ւ մարդ է պահակը...

Արդեօք քանի՞ դրուշ կ'առնէ ծառ բարձրացողէն...

Մանաւանդ... կը ձգէ՞ որ երկար ժամանակ մնամ ծառին վրայ...

Ի վերջոյ, ի՛նչ է երկիրը...

Հարցուցի մեծ մամայիս:

Ան, ծերացած շրթներով, ժպտեցաւ տխրօրէն, եւ այսպէս պատասխանեց.

— Նեմէն արեւուդ զուպամ ըլլի, ազուռ'ը չաղաս, երկիրը մեր հայրենիքն է... երկիրը մեր երկիրն է... մենք առաջ հոն կ'ապրէիք. հիմա հոս զարիւղ ենք... ա՛խ, ի՛նչ ըսեմ, օղուլ. մեր բախտը սեւ է. զարկաւ ֆէլէք մեր գլխուն, աշխարհի վրայ անտուն-անտէր մնացանք... մեր տունը, արտերը, պախչաները, այգիները, մեր պաղուկ աղբիւրները ձգեցինք անխիղճ թուրքին, սափախաք ելանք, հասանք առ պէպախտ օրերուն... է հէ՛յ, շատ աղուոր էր, դրախտ էր մեր երկիրը, ա՛յ օղուլ, մէյ մը տսնալի՛ր էդ այգիները, պախչաները, ծառերը, թո՛ւթը... մէյ մը տսնալի՛ր, ուտէ՛ր... ի՛նչ թութ էր, ըստպալ՝ ձունի պէս... մեր թութը շատ քաղցր էր, Խալիք, մենք հոն կարմրուն թութը օշխրներուն կու տայինք... երկրին ամէն ինչը լաւ էր, խա՛ւս, աղուոր... այդտեղի մէկ ձմերուկը աշտեղի տա՛որ ձմերուկէն աւելի մենք էր, խոշո՛ր, համո՞վ... հպա նո՛ւաք, խնձորը, միշտի՛նը, տա՛նձը... այդտեղի ամէն ինչը ուրի՛շ էր, ափսոս, ուրիշներու մնաց... օղորձած տէտէդ (թուրքերը զարկին) այդի մը ունէր, ի՛նչ ըսեմ, ինչպէ՞ս ըսեմ, խաղողին հատը մարդրիտ էր, մարդրիտ... ա՛խ մեր այգին, մեր երկիրը...

Այսպէս ուրեմն,

Առած էի այլեւս Հայոց Պատմութեան անդրանիկ դասը, մեծ մօրմէս: Մանուկի իմ վառ երեւակայութեամբ, հողիիս մէջ պատկերացուցի մեր հայրենիքը հետեւեալ ձևով. — Պարտէղնե՛ր, պարտէղնե՛ր... անսահման պարտէղներ... կանա՛ւ, կանա՛ւ ամէն կողմ... Ծառե՛ր, միա՛յն ծառեր, ծանրաբեռնուած խոշոր, կարմրաշտ խնձորներով, տանձերով, աստղահատ ողկոյզներով եւ լեցունկեկ ընկոյզներով... Ծառե՛ր, որոնց տերեւներուն եւ

տին քաղցրացող թութեբու հերմակութիւնը կը թաքնուի, կամ, ծիրանին կը  
յաղթէ շրջապատող կանաչին...

Իմ մանկական սիրոյս անունը, ժիա՛կ իմաստը պարտէ՛ղ էր, թթենի-  
նեբու, խնձորենիներու, տանձենիներո՛ւ պարտէ՛ղ...

Ու ես՝

Շատ փոքր տարիքիս, սիրեցի մեր... պարտէ՛ղ-Հայրենիքը. բայց ի՛նչ  
կա՛նք սիրեցի...

Բնական է, ուղեցի տեսնել դայն, վայելի՛ւ...

Ճերմա՛կ թութ...

Խոշո՛ր ձմերուկ...

Մեծ թխակարմիր Հատերով նո՛ւռ, խաղո՛ղ, ծիրա՛ն, տա՛նձ... քե-  
րանս ջրատիկ սկսաւ, ու խնդրեցի.

— Նէ՛նէ՛, Նէ՛նէ՛, է՛նչ կ'ըլլայ, վաղը երկիր երթանք... Նէ՛նէ՛, չէ՛, այ-  
սօր երթանք... Հիմա՛ երթանք, եր՞, երթանք, Նէ՛նէ՛, եայտէ՛, էլի՛ր...

— Ախ, եայտուս, իտո՞ր երթանք...

— Քալէլո՛վ, Նէ՛նէ՛...

Խէ՛լքս սիրեմ, երկիր՛ը երթալ... Եւ... քալէլո՛վ...

Իմացայ որ անկարելի է այս մէկը. ո՛չ քալէլով, ոչ ալ կանքով...  
մեղ չեն ձգեր հոն...

Բացարձակ անկարելիութիւնը, այո՛, տիրեցուց զիս, բայց երբեք  
չկրցաւ պաղցնել տաք սէրս, ուր արժատացաւ մանկական յանդուգն որո-  
շում մը.

— Շուտ, սակայն շա՛տ շուտ... մեծնալ, անկարելիութիւնները,  
որքան ալ բացարձակ ըլլան անոնք, պարտութեան մատնել, ու երթալ, տես-  
նել, վայելի՛ւ մեր պարտէ՛ղ-Հայրենիքը. ԱՆՊԱՅՄԱՆ:

Բ.

## «ԽԵՆԹՈՒԹԻՒՆՍ»

Որեք անցան, դացի դպրոց՝  
Թիթեղածածկ, աղքատիկ դասարաններու մէջ Հայոց Պատմութեան  
ուրիշ դասեր առի:

Հոգիիս, դատողութեանս պատճառին վրայ նկարուած մեր պարտէ՛ղ-  
Հայրենիքը աւելի՛ գեղեցկացաւ...

Մտերէն վեր, Հայաստանի կապոյտին մէջ, պտակերացան ձիւնապատ  
դադաթները մեհափառ Մասիսներուն, Արագածին...

Անդին՝ Պինկէօլի հայլա լեռներուն ակերը սկսան շողշողալ արծաթէ  
արեւներու պէս, աղբիւրները ամէն կողմէ կարկաշեցին սարերն ի վար...

Էօ՛, Էօ՛, սէջ Սիփանն ալ գլուխ վերցուց...

Յետոյ,

Կանաչապարզ բլուրներու կողին, Հայկական սօսիներու վերալացու-  
թեան ընկերացան Հայակապ զմբէթները մեք-թիւրուն տաճարներուն...

Աւելի ետք՝

Հայոց Պատմութեան եւ Հայերէնի ուրիշ դասեր՝ հողիս, երեսակա-

յուրեանս պատուովն ծառերէն շատերը արբեցին, ու, հոս-հոն, լերան մը կողերուն կամ լճի մը եզերքը, վանքի մը մօտ կամ բերդի մը շուրջ նկարեցին համայնապատկերները մեր հայրենի քաղաքներուն, գիւղերուն...

Ես, ներսէս՝ զմայլանքով դիտեցի կանաչադարձ Վանը, բարձունքներով վեհացած Տարօն Աշխարհը, տանարներով պերճացած Անին, հայկական կայսրութեան չքեղ մայրաքաղաք Տիգրանակերտը, Խարրերդը, Սեբաստիան, Էրզնկան, Կարսն ու Կարինը...

Դիտեցի Վարուժանի Բրդնիկը, Սրամանթոյի Ակնը, Մեծարեւոյի Բինկեանը, Թոթովեցի Մէլլըն, Համաստեղի Փէրէնը՝ հասուն արտերով ոսկեզօծուած...

Դիտեցի մեր զարաւոր բերդերը, պալատներն ու աշտարակները հըպարտ...

Այսպէս, հոգիս հոգի ըլլալէ զտգրեցաւ կարծես, եղաւ հայաշխարհի անճո՛ւն պատկեր...

Այդ պատկերով արբեցայ, անով մտայ վեցերորդ դասարան...

Զմանէի՛ բարով...

Մենէի աշակէս, հայրենիքի աղուոր պատկերը արտիս մէջ, կամ՝ սիրտս աղուոր պատկերին մէջ հայրենիքի... մեռնէի՛...

Այս խօսքերուս համար, ռոմանթիկ մի՛ ըսէք ինծի, խնդրեմ՝ չիտակնայն է, որ շատ սիրած եմ ու կը սիրեմ Մանուէլ Մամիկոնեանին Էրէկէ մարդու վայել զգացումները...



Ուրեմն՝

Եղայ նախակրթարանի բարձրագոյն կարգի աշակերտ:

Հայոց Պատմութեան փառաւոր էջերը տեղի տուին սեւաւորներուն...

Հպարտացնող դրուագներուն յաջորդեցին տխրեցնողները...

Յաղթանակներուն՝ պարտութիւնները...

Նաւասարդեան չքեղ տօնախմբութիւններու փոխարէն, նահատակութեան սեւ հանդէսներ կազմակերպուեցան հայրենի հողին վրայ...

Սիրալի հայ կեանքը վերածուեցաւ սուգի...

Հզօր Արաւշէսները, Տիգրան Մեծ Կայսրը, փառապանծ արքաները, Մամիկոնեանները, Արշակունիները, Բապրատունիները, Կամսարականները, Խրոխտ Խորխորունիները, Մարդակատունիներն ու հայ Պահլաւունիները լեզուան դասարան, չհպարտացուցին մեզ...

Զեկան Ռշտունիները, Սիւնիները, Գոռ Խախաններն ու Գալլ Վահանները, մեզ ձգեցին ոչխարային խեղճութեան մէջ...

Առիւծ Մհեր, Մասունցի Դաւիթ, Վահագն անմահ դիցապաններն ալ մահացան կարծես...

Հայկական բանակները յաղթութեան երգեր, «Ի զԵմքներ, «Ի մարտքներ չփոթորկեցուցին...

Հայոց Պատմութեան մէկ զրգէն միւսը՝ փոխուեցաւ ամէն բան:

Մեր իրիշխ աշուածին շատ կորսեցուց իր խիղախութենէն...

Արծրունեաց արեւափայլ զեղարդները զէպի երկինք չցցուեցան, Ժօն Ղրօշներ չծածանեցան ալիւս...

Հայաստանի պայծառ կապոյտը մթնցաւ...

վահագնի՝ ճամբան ալ կորսուեցաւ հայոց բախտի խաւարին մէջ...  
 Յոյսի աստղերն իսկ մարեցան...  
 Հաւատացէք, այդ փոքր տարիքիս, մենք տոհմապանքով լմբոնեցիք, թէ  
 Հայոց Պատմութեան շքեղ բնթացքը շեղած էր այլեւս ու դժոխային դուռ մը  
 բացած վանտալ, շնագայլ ցեղերուն դիմաց...  
 Մեր աղղային ճակատադրի աստերուն վարդադոյնն ալ սկսաւ սեւնալ  
 հետզհետէ...

Իւ,  
 Ափսո՛ս չէն Հայաստանին՝  
 Մէկը միւսին ետեւէն քակուեցան արշաւանքները թաթարներուն, մոն-  
 ղոլներուն, մեմլուքներուն, սելճուքներուն եւ թրքական ալլ վահմակնե-  
 րուն...

Ինչպէս պիտի բռնէր Արտփեան՝  
 — վա՛յ մեր քաղաքաւազ զոյգի քնտէր գլխին, սեւ իջաւ մեր վրայ,  
 լա՛յ մեր ազնիւ վաքանին...

Վա՛յ...  
 Լէնկթիմուր, Ճէնկիզխան, Ղազան Խան, Շահ Աբաս, յետոյ՝ Սուլթան  
 Համիտ, Թալաւաթ, Էնփէր, Ճեմալ, Շաքիր, Խան Ռիւանչիք, Յամսըզ Շրէշ-  
 եեր, Յամալարներ, ամէն կողմ արին տւեր ու մահ տարածեցին, մեծապէս  
 դժբախտացուցին մեր շինող ազգն ու չէն հայրենիքը...

Անի քաղաք նստաւ, լացաւ...  
 Կործանեցան, այրուեցան հայրենի միւս քաղաքներուն բերդերը, տա-  
 լարներն ու տունները, որոնք, աւա՛ղ, ապարանքի պէս մեն էին ու շէնգ...

Այս բոլորէն հաք՝  
 Եղաւ 1915, եղաւ Ապրիլ 24...  
 Աւերուած հայրենիքը ամայացաւ...  
 Հողիկս կանաչադարձ պատկերը Հայաստանի թէւեւ շատ բան կորսն-  
 ցուց իր սիրունութենէն,

Բայց՝  
 Սրբութիւնը բաղձապատկուեցաւ տեքին վրայ...  
 Հայրենիքին Նուիրականութիւնը ինքզինք գերազանցեց.  
 Ա՛յնքան՝  
 Որ կիսաւեր տաճարներուն, բերդերուն, փրած տուններուն եւ ամայա-  
 ցած վայրերուն տխուր խորհուրդովը լեցուեցաւ ողջ էութիւնս:  
 Ես անդամաճնելի ճիւղերով եղայ այդ խորհուրդին:

\*\*\*

Վեցերորդ կարգի աշակերտ եղած տարիս, Մայիսի վերջին օրերուն,  
 մեր բնտանիքին պատմութիւնն ալ դժբախտ եղելութիւններ ունեցաւ:  
 Նէնէս, մայրս, ես ու քոյրերս նստեցանք հօրս զաղաղին շուրջ եւ լա-  
 ցինք...  
 Այդ ատենուան նորահաս պատանիներուն պէս, ի՛մ ալ փափաքս կիւ-  
 րաւ երթալ, Միլիթանական ըլլալ էր:  
 Ակնածանքով, բարի նախանձով կը նայէինք՝ մեր դասարանէն շնոր-  
 ւապետ Նուպարեանին, որուն հայրը Հ. Թ. Մ. Ի ջոջերէն մէկուն հետ լու-  
 կայիկ կապեր ունէր, պորձը կարգադրած էր...

— Ամազիւրի հանդէսէն ետք, շատ պիտի շմեամ հոս. հաղիւ տասանըֆնդ օր, — խայծ շարժող գոհունակութեամբ կը խօսէր Ասպետ Նուպարեան, — հայրս բաւական դրամ պիտի տայ ինծի, նախ՝ հալէպէն Պէյրոն՝ պիտի երթամ, քեռիներու քով պիտի մնամ ժամանակ մը, յետոյ, վերամուտն, անդլիական մէ՛ծ շոգենաւով ճամբայ պիտի ելլեմ գէպի կիսրոս, Նիկոսիա...

Մեր հայերէնի ուսուցիչը լաւ ճանչցուցած էր մեզի Յակոբ Օշականը. — մեծ զրազէտ, խոշոր եւ արդարօրէն խի՛ստ քննադատ, շիտակ մարդ, հարադատ հայ...

Օշական, հեռուէն-հեռու, քաղաքական բան մը ունէր մեզի համար. լաւ հասկցած էինք եւ այնքա՛ն սիրած էր «Լուսաստուն»ը, «Պաշտօն» ու միւս «խմբարհմեր»:

Երանի կու տայինք Նուպարեանին. Օշականի՝ աշակերտ պիտի ըլլար...

Պատանեկան ուրիշ շահեկանութիւններ ալ կային մեր տուած գերանքներուն մէջ. Նուպարեան Պէյրոն պիտի երթար, հո՛ն պիտի մնար ասէն մը... յետոյ, ծովայի՛ն ճամբորդութիւն պիտի ընէր... անդլիական շոգենաւով... մեծ՛եծ շոգենաւով... մանաւանդ՝ բաղձալի կղզի՛ն պիտի տեսնէր...

Այս բոլորը հերոսութեան պէս քաներ կը թուէին մեզի...

Երբեմն, կիպրոս երթալու փափաքը ա՛յնքան կը մեծնար մեր մէջ, որ կը կենայինք մեր դասարանի պատէն կախուած տարածուն քարտէսին դիմաց, սիրով ու երկա՛ր կը դիտէինք Միջերկրականի կապոյտով շրջապատւած, կարմիր-կարմիր կարծեա փայլող կիպրոսը, եւ զայն կը նմանցնէինք... «Ի՞նչ լէ մէն!» ըսող Զօրոյի՝ ասորճանակ բռնած ձեռքին...

Դասերիկերեկս շատեր, Զօհրապը, Միկրտիչը, Սարգիսը, Մինասը, տնչուշտ Նուպարեանն ալ, հասան իրենց փափաքին...

Հօրս մահուան պատճառով, իմ բաժինս «ասորճանակին» փամփուշտը եղաւ միայն...

Բախտիս հետ՝ մեղքոնեանական, Օշականի աշակերտ ըլլալու իղձս ալ փրաւորուեցաւ...

Ստիպուած, պործի վացի, արհեստ սորվեցայ, մեքանիստ եղայ:

Ո՛վ դիտէ, եթէ ուսումս շարունակէի, մտաւորական մը ըլլայի թե՛ բեւա: Ծուկայի մարդ, երկաթի հետ զործ ունեցող դարձայ սակայն: Տասնութեանցայ մեքենաներու տակ, կեանքս աղաւառ իւղերու մէջ անցուցի, ի վերջոյ՝ կոշուեցայ... Ուսումս Հրայր:

Բայց՝ շնորհիւ հողիիս անմաշկի զաշնակցականութեան եւ կարդացած բաղձաթիւ գրքերուս, աւերուած հայրենիքիս տխուր խորհուրդին գիտեմքը ըլլալէ ո՛չ միայն չղաղրեցայ,

Այլեւ՝

...Աւելի «խենթացայ»...

Ու, տարիներ առաջ, երբ հասուն երիտասարդ էի այլեւս — ԱՅԴ ԹԻՆՐՈՒՆ, ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՄ ՀԱՅԿԱՅԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ԱԼ ԽՍԾՈՐԷՆ ԱՐԳԻԼ-ԻԱՅ ԳՕՏԻ ԷԻՆ ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՋ — գէպի որբացած Հայաստան ուխտի երթալու «խենթութիւնը» յաջողեցայ՝ կատարել:



Գ.

# Պ Ո Լ Ս Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

Հալէպէն մինչեւ Պոլիս օրինաւոր ճամբով դացի. ըսել կ'ուզեմ՝ փա-  
փորով, վիզայով:

Իսկ թէ ինչպէ՞ս շարունակեցի ուղեւորութիւնս Պոլսէն դէպի հայկա-  
կան նահանգները, այս մասին՝ յետոյ:

Միմարէններով խնդրուած իսթանպուլը, գիտէ՞ք՝ երբեմնի բիւզանդիոնն  
է. Արեւելեան Կայսրութեան չքե՞ղ մայրաքաղաքը...

Ի հէ՞յ... Խոմանոս Ա., Վասիլ Բ., Յովհաննէս Չմշկիկ, Յուստինիա-  
նոս հայադղինները այս քաղաքին մէջ ապրած են եւ... կայսերազորած:

Ես ալ, իմ կարգիս, կամ, ինչպէս կ'ըսեն պոլսահայերը՝ ինծի կէօրէ...  
հայրանոս մը եղայ թրքացած Բիւզանդիոնին մէջ, կայսերական կեանք մը  
ապրեցայ, ի՞մ ճաշակով:

Պոլիս մնացի աւելի քան երկու ամիս:

Կոկիկ գումար մը ունէի արդէն. որչա՞ծ էի երկար ժամանակ թափա-  
ռիլ Թուրքիոյ քաղաքներն ու գիւղերը. հետեւաբար, պէտք չունէի անապա-  
րելու. ուր մնաց, Պոլիսն ալ անապարանք պատճառող քաղաք չէ արդէն.  
համարիտ կը խօսի Զարեհը. — ՎԻՍՍԱՆՊՈԼՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՆԻՅ.  
բայց... չա՞տ գեղեցիկ. միլիտարի պէս քեզ իրեն կը թաշէ. ալ եթէ կըր-  
նաս... պղնձացիք եւ շուտ հեռացիր...

Ես, թէ՛ իրրեւ մարդ, թէ իրրեւ հայ, չփափաքեցայ երկաթ ըլլալ  
ու ինքզինքս շլանձնել Պոլսոյ մագնիսականութեան...

Գիշերները, երբեմն, ժամանակ կ'անցընէի Մոսա Պուրմիի դրօսա-  
փայրերուն մէջ, կ'երթայի թատրոն, պառ:

Կեղծ սօֆիսթեան պէտք չկայ. ես անկեղծ, բաց էաքք խօսիլը կը  
սիրեմ. մի քանի գիշերներ ալ՝ Եթէ նայիս կ'ըսես՝ հիմա կը վարիս գեղեց-  
կութեամբ թրքահայերէն վայելեցի (օ՛ր ըրի՛ր, ըսէ՛ք). Դուրեանի ծանօթ բա-  
նաստեղծութիւնը, տարիներ առաջ, մէջս վառած էր «մարգար» լեռանկի թրք-  
քուհիներ վայելելու ցանկութիւնը. իշխէ հասայ մօրազիս...

Ուրեմն, գիշերները... այսպէ՛ս:

Իսկ ցերեկները գոտարկապտոթի մը պէս կը թափառէի Պէշկե-Քաշի,  
Դաւալ-Գիւղի, Բանկայթիի, Սամաթիոյ, Կէտիկ փաշայի, Գուժ-Գափուի,  
Ղալաթիոյ, Գանատիլիի, Ալմազայի եւ այլ թաղերու, արուարձաններու մէջ:  
Հայոց Պատմութեան, Հայ Գրականութեան անցած են այս վայրերը, զորս  
չտեսած՝ գիտէի արդէն իրենց մասին. ահա՛ թէ ինչու, երբեմն, բազմաթիւ  
անկամներ կ'անցնէի նոյն տեղէն, նոյն հրապարակէն, այնպէ՛ս՝ ինչպէս մարդ  
հեռանալ չ'ուզեր երկար առեմէ ի վեր շտեմած զէն չճնալ արիւթից, մտերիմ  
նախնորհից», ուր անցուցած է իր մանկութիւնը:

Ես՝ Պոլսոյ մայրքերուն վրայ, բայց միւրքս անցեալ դացած, կը թա-  
փառէի՝ Հոգեկան հանդիպումներ ունենալով... Հայ պատրիարքներու հետ.  
ներսէս Վարժապետեանի պէս գիւսանազէտ, սակայն վշտահար փաթրիք է-  
նիստիներ, որոնք պատուիրակութեան գլուխն անցած՝ Բ. Գուռ կ'երթային,  
գաւառներու հայութեան անտանկի վիճակը Սուլթանին ներկայացնելու, ա-  
րեւաշատութիւն մաղթելով՝ զո՞ւթ, բարենորոգում ազդեցելու...

կր թափառէի, միշտ յուսալով... տեսնել տոբթ. Երոնան Լէփսիւտի, փրոֆ. Պրայսի պէս մեծ-նոր միսիոնարներ, որոնք Համալիսարհային Ա. պատերազմի սեւ օրերուն, Պոլսոյ այս ճամբաներէն, դէպի սէրապէրիէք, դէպի էնփէրի, Թալաթի որջը կը շտապէին՝ տառապող Հայութեան Համար մէրիամէք հայցելու իթթիւտ կուսակցութեան իթօղլի-ի'ք ղեկավարներէն...

Բնական է, որ Հայ Գրականութեան մէջ արձանագրուած այս փոքր-ներու մայթերուն վրայ, Հոգեկան Հանդիպումներ ունենաւ նաեւ Զօհրապի, Պարոնեանի, Օտեանի, Երուսանի եւ իրապաշտ այլ զբաղէականներու հետ... Ապրիմ հերկայութեան պատրանքը անոնց խոնարհ հերոսներուն, հոսսունե-րուն...

Նիւար, պիտաւոր ստ մարդը... Մանուկ աղան բլլալու է... կեր-կուրի պատրաստութեան անհրաժեշտութիւններ կը տանի տուն. հիւրը՝ ան-շուշտ, Արիստղոս աղան է, որուն պնակ մը ապուր կերցնելէ առաջ, Թաղ-կանութեան ու Թորոս աղայի մասին պիտի խօսի երկար, ու իր պօշափաղա-թեամբ՝ արապիզոնցի սղէտ, անօթի, մեծահարուստին համբերանքը հատ-պրնէ պիտի...

Իսկ վայելուչ այն երիտասարդուհին, որ ձկնափաճառներու շուկայէն կ'անցնէ, Պալլէֆի Համբրիկին խանութը կ'երթայ անկասկած՝ իրրեւ դար-ման գործածուող Հաղուադիւտ ձուկիմ փսխարէմ, ճիտէն պազ մը տալու հայ ձկնորսին...

❖

Այսպէս՝ տարուելու, վերանալու, պատրանքներ ապրելու անօրինակ քաղցրութեամբ կը շեցուէր Հոյիս ամէն անգամ, երբ կ'անցնէի այն թաղե-րէն, այն տեղերէն, ուր ապրած են մեր երանելի մեծերը ու գործած:

Ճակատամարտի չէնքին առջեւ՝ անցեալի խորհուրդով գինովնալու պէս բաներ մը եղայ...

Կարծես պատրանքը իրականութիւն դարձաւ ինծի համար. Թերեւս թիշ մը... խմած էի, չեմ յիշեր... միայն գիտեմ, թէ պահելի մը, խելօք-խելօք, կեցայ չէնքին գիմաց ու... սպասեցի Հաւատքով...

Այո՛, սպասեցի՛ր...

Թերեւս բացուէր պատուհաններէն մէկը... Թերեւս տեսնուէր խմա-դրապետ Թորեհն Զարդարեանին պատկառելի գլուխը, ալիք ոլորուած պե-խերով...

Կամ՝

Սրեւէր անմոռանալի Շաւարշ Մխաբեանը, շնչաւոր նայուածքով...

❖

Բերայի Բանկալթի թաղը, ուրկէ յաճախ կ'անցնէի, ուշքո Կոմիտասով կը կլանուէր...

Գիտէի. հայ երգի Ս. Մանուկը, Պոլիս ապրած միջոցին, այս թաղին մէջ բնակած էր...

Բանկալթիի հին մայթերէն որքա՞ն անցած պէտք է բլլայ անձան վարդապետը...

Սա տուներէն՝ իրը ո՞ր մէկն է արդեօք...

\*\*\*

Կիրակի մը, Օրթապէտի հայոց եկեղեցին պահի:

Պատարաւի աճրողը տեւոզութեան, Արփիար Արփիարեանի «Կարմիր ծառուց» վիպակին Հայրապետ Էփէնտիով, Տէր Յուսէփով եւ պոլսահայ աղ-  
պային կեանքի հրքեմնի եռուղեքը երեւակայելով տ'յնքան տարուեցայ, որ  
խաշ մը հանելու, «Հայր մեր» մը բսելու տարրական... կրօնաքաղաքաւա-  
րութիւնն իսկ ժողոջայ կուտարել...

— Յուսիկ տէրպապան ո՛ւր է... Ե՛րբ պիտի աղաղակէ «Ազատութիւն»  
եղբայրք մերոց գերեզնիսը...

— Վսեմաշուք Հայրապետ Էփէնտի, Օրթապէտի աղեւաշուքներուն  
հետ ժամանած է անշուշտ... Հիմա խորհրդարանն է թերեւ... Խանլի խմե-  
լով, Պէշիկթաշի Հասան փաշայի մասին ո՞վ գիտէ ինչե՛ր կը յայտնէ Օղոս-  
տինոս խղային եւ շուրջիններուն...

\*\*\*

Ամէն անգամ, երբ կ'անցնէի Սուլթան Պալատի հրապարակէն, ինք-  
նաբերարար, մտքէս կ'արտայայտէի նահապետական Փարսիական հերոսական վեր-  
ջին խօսքը՝ ճօճուող շուտինն առջեւ...

— Թուրքիո՛ւր, դուք այսօր իսկ անցնէք քայքայեցէ՛ք, քայքայեցէ՛ք, որ  
տպագային իսկ անգործ տեղի հայեր պիտի գան մեր վրէժը յաւելու...  
Ինչե՛ք կը մեռնիմք հայրենիքի ազատութեան համար... ԵԱՅԱՍԵՐՆ ԷՐՄԵ-  
ՆԻՍԻԱՆ...

\*\*\*

Կալիթայի Օսմանեան Կեդրոնական դրամատան հին շէնքին առջեւ,  
երկար ժամանակ մնացած եմ լուս, երկնային...

Ես դիտած եմ դայն,

Իսկ հոգիս՝

— «Պաճաճ Օթման դրամած է

Դաշնակցութեան Կոմիտէն երդելով յոտնկայս՝ պատուի կեցած է  
ի յարպանս Բարդէն Սիւնիին, Արմէն Գարոյին եւ իրենց խումբի միւս հե-  
րօսներուն, Հրաշի՛ն:

\*\*\*

Ուրիշ Կիրակի մը Գուժ-Գափու պահի:

Պատրիարքարանի, Մայր եկեղեցւոյ ճամբան վրայ բաղձութիւն  
կար...

Նեղ փողոցին մէջ, երբ լսեցի հայոց զանգերուն սրտազրաւ զօղանքը,  
ինծի այնպէս թուեցաւ, թէ անցեալէն կու գար անիկա...

— Տա՛նկ, տա՛նկ... տա՛նկ, տա՛նկ... տա՛նկ, տա՛նկ... տա՛նկ,  
տա՛նկ... տա՛նկ, տա՛նկ...

... Թրա՛նկ, քրա՛նկ, քրա՛նկ... Օսմանեան թուրքական պատրիարքա-  
րանին ճակատէն փամփուշտներով վտը առին... ցո՛յց է, ցո՛յց... սրբազան  
պատրիարքը թունի նստեցուցին կառք, սուլթանին պալատը տարին բողոքէ...  
ցո՛յց է, ցո՛յց... Զրմէն տը փէրի վրայ կոխ կայ... ցուցա-  
բարները հեծեալ օրտուներու ընդհանուր հրամանատար փաշան ճակատէն

զարկին... Հայ Յեղափոխութիւնը դրօշ պարզած է Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքին մէջ...

Տաճկ, տաճկ... է՛, պատմական օրեր... պատմական զանդեր...

✱

Պէրպէրեան եւ Կեղրոնական վարժարանները, որոնք պարզ նախակրթարաններ են հիմա, դաժած են զիս իրենց դիմաց:

Անշուշտ տարբեր օրեր, տարբեր տեղեր իւրաքանչիւրը գիտած եմ, եւ, պոլսահայերէն բռնմ' հեյնանի եկած...

Սիւրբաթ, Մեծարենց, Աճառեան, Ռուբէն Սեւակ, Տիրան Զրաքեան, Լեւոն Բաշլեան, Թէքէեան, Զարիֆեան եւ այլ մտաւորականներ այս վարժարաններուն մէջ հասունցեր են...

Քարերը պազնեղ կու գայ...

✱

Ղալաթիոյ կամուրջը մտածել կու տար ինծի... Որիմեան Հայրիկին մասին:

Կ'ըսեն թէ՛

Տարիներ առաջ, կամուրջէն անցնողը պարտաւոր էր մի քանի պարզաւոր վճարել, իբրեւ... անցազին:

Որիմեան Հայրիկ իսկապէս տէրվիշ մարդ եղած է. ձեռքը անցած դրամը բաժնած է աղքատներուն, որբերուն, դպրոցներուն...

Պոլսոյ պատրիարք եղած շրջանին, ողորմութիւն ընելէն յաճախ ա'յնքան քափաւանցած է, որ Ղալաթիոյ կամուրջին մի քանի պարզաւոր անցագրիւն չէ կրցած վճարել...

Նրանեյի՛ք՝ աղքատութիւն...

✱

Պոլսոյ շրջակայ կղզիները — Բէօփէֆ Ատաւը, Տիւզ Ատա, եւայլն — տեսարժան են. մանաւանդ՝ Փրինցիփոն կամ Մեծ Կղզին. դրախտազեղ է. բայց իմ օրերս քիչ մը ախուր անցան հոն. միշտ կը մտածէի Զարիֆեանի մասին...

Թախծոտ սէրերու երգիչ հէք Մատթէոսը, իւր կեանքին վերջին օրերուն, այս կղզին փոխադրուած էր...

Քնալը Ատան ալ ուրիշ տեսակի գեղեցկութիւն ունի. հայերը մեծամասնութիւն են հոս. այս կղզին, Թուրքիոյ ողջ տարածքին վրայ, միակն է, ուր հայութիւնը ազատ-անվախ հայերէմ կը խօսի... Թուրքի'ն հետ մոյն-իսկ...

✱

Բիւզանդական կայսրեր, «մարօզ» թրքուհիներ, հարսպագի միսիոնարներ, պատրիարքներ, բանաստեղծներ, յեղափոխականներ, ձկնորսներ, հոսհոսներ, զանգեր, ցոյցեր, փողոցներ, արուարձաններ եւ կղզիներ իրաւ խառնեցի. անկապ բան մը հղաւ այս «Պոլսապատում»ը. հոգ չէ. ուր մնաց, իսթանպուլն ալ... իփսը'զ է արդէն...

(Շար. 1)

Յ. ՉՈՐԵՑԻ



Իմացական  
Հարիւր

**«ՄԴԻՏԱԿ ԹՂԹԻ ԱՌԶԵԻ»**

Յառաջիկայ ամսոյն ին, Երևանի իջև պիտի կայանայ Հայաստանի գրողներու Յրդ համագումարը, որուն ժամանկցելու համար հրախրուած են նաև արհեստագործական գրողներ:

Յայտնառչաւ այս համադրամարին Նախորդող նախորդ համադրամարիննու նախորդ  
հանգնելուն հետ համեմատելի եղբեր չլսին: Նախորդներուն, ի մասնաւոր ճիշդերը-  
դին առիթով, եռուցներ օրհաւ: Հինգ-վեց ամիս տալի, մինչդեռ այս անգամ համարա՛մ թէ  
չհաճում է չկայ թերթներուն մէջ, բաժան չկայ, կան միայն ընդհանուր բաներ ըսող  
հաստիկներ որոս թերթներին առ ամիսի:

Իրականում ուշագրավ է այս ընդհանուր լուսթիւնը:

ԳրանդանԹանն անորառ ցինիին պղտոր խուրթ խառնող այդ ձնաթաղին անխթով՝  
 էր թուփ, թէ ալլեւս ո՛չ վերէն հաւանդեմբ տալու տէրտ մնացած է ճարդաց եւ ոչ ալ վա-  
 րէն արժապանդեմա արամադրաթեւն:

Համահառութիւններ ընելա պարագային, կարին է հարկաւ ըսել, թէ այն համա-  
դասարան միջնորդող աւելի առողջ էր, քան այն միւսին միջնորդող, քանց ցարէ կայացած  
համապատասխանեբէն եւ ո՛չ մէկը զբախան անդրալայած ունեցած է զբողին վրայ: Հոն բառա-  
մեւաւած բոլոր առաջնորդանքները մնացած են մեծեւոյ աստ, հակառակ մանց լուրջ զբո-  
յած միաձայնութիւն եւ պաշտօնական հազորդապարտութեանց մէջ յեղծարար ուղենիւններու  
յաւազմոտ քննարկման:

Այսուհանդերձ, Համագումարի գործիչներ բոլորովին անհասա գործիչներ ժը է՛, կարելի է պատրաստենք կապել անոր, կապել ա՛յն յոթը, զոր հինգերորդ Համագումարի նախորդածի՛ն, Վիլիսոսկ քաղի առջնի՛ն խորագրին օտակ՛, Հետևեալ տողերուն մէջ ձեռագրեալ անո՛ւ Հաւատարմի հոգաւորաւ արժանի՛ն վաւերական դէմքերէն հարան Մաթեւոսեան։

«Համագումարը դրդել փոխարեմ, ի հարևել, չի կարող գրել, բայց ի դուռն է ահալել: զքնյում հաւաար պատառաբեր մի բան, ստեղծել այն Վճռադատը, որի մէջ գրողն ինքն զգալ այս երկրի տեղն ու պատասխանիլը, որպէսզի սպիտակ քաջի դէմ գրողն մտաւ քէ որդակն աստղայայտեմ կ'ատարադատ ասլակիր, այլ որդակն ամլայայտեմ գրակեանքնան ու կենսմի բարոյ ինդիւիդները բացալայտալ աւտոցիքը»:

Արտոշովին բաժնեկր իշխանապետ Կրաչևեթին առաջինը՝ «ամբողջական սրտով կը մտադրենք, որ նոր համայնությանը ի վիճակի ըլլայ առեղծիք բաղաձախ Բժիշկները և Հայաստանի զորքը դառնալ ամբողջական զորք, այսինքն՝ անխաղաղութիւնը պնդող ու կանխ- քա հո՞րս անհեղհանութիւններով Հայաստանցի առաջնական զորքն էր։

## ԿԱՐԱՊԵՏ ՓՈԼՍԵԱՆ

## Զ Ր Ո Յ Յ

## ԲԵՆԻԱՄԻՆ ԹԱԺԵԱՆԻ ՀԵՏ

Ո՛վ է Բենիամին Թաշեան, ի՞նչ տեսակ մարդ է : Ածականներու գործածութեան մէջ ժողովալ մնալու համար, պիտի գործածեմ անոնցմէ մէկ հատը միայն :

Աղուոր մարդ մըն է Բ. Թաշեան : Կրնամ ըսել, թէ իմ ճանչցած բոլոր մարդերուս մէջ, ամէնէն համակրելիներէն մէկն է :

Գիտեմ, որ ան պիտի պաշտէ իր յօնքերը, երբ կարդայ այս նախադասութիւնը, ո՛չ միայն այդ մէկ հատիկ անականի համար, այլ մա՛նաւանդ ամէնէն՝ ստալին էին համար :

Այդ մասին քիչ յետոյ : «Յուսարիք» խմբագրին ծանօթացած եմ 1954ի Ապրիլին, Գահիրէ, Փրանսացի մտաւորականներու եւ Շ. Նարդուանի հետ իմ շրջապատուի ընթացքին :

Կը ճաննայի զինք տարիներէ ի վեր, իր ինքնատիպ եւ կուռ յօդուածներով, զորս «Յառաջ» խմբագրապետը կանոնաւորաբար կ'արտատպէր իր թերթին մէջ :

Սոր համակրանք կը տածէի իրեն հանդէպ, զինք չտեսած :

Այդ համակրանքս մեծցաւ, երբ զինք դատոյ Շ. Նարդուանի եւ իմ կողքիս՝ Լիւք-Անտրէ Մարսէլի թարգմանութեանց ատթիւ յարուցուած վէճին ընթացքին :

Մեր մեծածախս շրջապատը կը պարտինք իր չքեղ յօդուածներուն, ինչպէս նաեւ «Յուսարիք» խմբագրատիւն՝ ողբացեալ Վահան Նաւասարդեանի համակրանքին եւ քաջադէրութեան :

Անկէ ի վեր, քաջաթիւ անդամներ եղած եմ Բ. Թաշեանի մօտ : Ամառային արձակուրդիս ճամբուն վրայ, հանդիպած Գահիրէ, յաճախ միմիայն զինք տեսնելու համար :

Ու նաեւ, յաճախ, այդ հանդիպումներս նմանած են, մացառներով ծածկւումով անտառի մը մէջ, անուշաբոյր վարդ մը քաղելու հաճոյքին :

1954ի այդ հետաւոր օրերէն ի վեր գրեթէ չէ փոխուած : Զիւնասպիտակ մազերը կը հանգչին նոյն փայլուն, անխորշ լոճ գէճքին վրայ : Մտացի աչքերը կը

ժպտին միշտ, հեղինախառն ժպիտ մը,  
բայց բարի, միշտ բարի: Գլխաբաց է ան  
միշտ, ու միշտ կը շարունակէ կրկն  
միջին շուրջ փութթուած Թաշկինան էր:  
Իրենին չէ՞ծ տեսած էր վրայ: Եւ ան,  
արդէն, արտաքինապետ զոհէ, չառ կը  
հետնի համայնագար մտաւորականի մը,  
արհեստահարի՞ց պտործաւակն Հազոյտուն  
ու հազոյտունը:

Արք համեմատ արտաքինին ուսել կայ  
 ուսկան, կայ ա՛նայսման հայ իրա՛ւ մը-  
 տաւորական մը: Մեծ հրաշալիագիր է  
 Բ. Թաւադեան իւր գրգռելն: Ան գրազէտն է  
 իր խորքային խոր տոգոյն մէջ: Ունի որդո՛ւ  
 չեսեւ ինքնատիպ ոճ, հրաշալի իմաստ,  
 նշխարան հրաշալի լեզու: Փրական հար-  
 ցեր զաղտնիք շուրհին իրեն համար: Լու-  
 զողողական է հին թէ՛ նոր հայ դրական  
 նութեան, ճարտարանիտն ինչպէս, մա՛-  
 նաւանոր Փրանսուականին: Մտիլ ընթերցող  
 է եւ չեմ դիտեր, թէ կա՞յ գիրք, որ կար-  
 ղացած չըլլայ, գերոյիշեալ գրականու-  
 թեանց մէջ: Ոմանք, իր սիրածները,  
 քաղած թէ ինչ ունենաներ:

Առտի՛ր ձե՛ծ նմանութիւններ՝ Ես-  
աւր Միսաքեանի՛ Հետ, ու նուա՛, որոշ  
մարդու՛մ մէջ, Եսաւաշ Նարգոսեանի՛ Հետ։  
Միեւնոբաւ՛ս, դարսկանութեան մէջ ե-  
րեք իրա՛ւ դրաղէտներ, սարեմտաւայ  
տրճակի երեք վարպետներ, որոնք իրենց  
գաղանդի ուժեւնափայլուն մասը բաժնի  
հանձնի հա՛, Հրապարակագրութեան։

Անոնք Հանդիսացան նահւ երեք արթուն պահակները, երեք ախոյեանները՝ արեւմտահայ մեր լեզուի մաքրութեան և գեղեցկութեան ի խնդիր:

Հատորներ կադմեցիին եւ դեռ կընան  
կադմէլ անոնց երեքին գրածները տյո  
մարդին մէջ:

Խնդրին արատաուշ կողմը ա՛յն է, որ  
մեր հրեք փխոյեաններուն երկուքը խուր  
էին, երրորդը՝ համր:

Այս վերջինը՝ Շաաբը նարդունի,  
 ժինն էրկորող Հաալաբաբային պա-  
 տերադմի վերջաւորութիւնը, քսէն քա-  
 նի մը Նախադասութիւն իրարու ետեւէ  
 լէր կրնաք արտասանելու Հետզհետէ լե-

գրուելու ձևէ հեղինակները: Հեղինակը, մինչ իրարու ետեւէ կ'անհետանալին հայ բեմի մեծ-թեւեղները: Ան մէկու, միւրին ալ նախընտրել գրել իր մաները, քան խօսել յանգիստաւտից: Հասարակ խօսակցութեանց մէջ իսկ հնուռ էր փայլելէ եւ իր գիւղայինական «խմբեր» յաճախէր փոխարինելն մասուրմի ըն ընդլայտելու:

Աւելի գրի ծարդ էին երկու Շա-  
ւարչները, քան խօսքի: Նոյնը Բ. Թաշ-  
եանին համար:

Մրտաւուրը ա՛յն էր, որ անոնց լեզ-  
ւական գէճերը նմանեցան յաճախ խոլ-  
եամբներու խօսակցութեանց, առանց ոչ  
անոնցմէ մէկը յարողէր համողել միւսը :

Խնդրին ողբերգականը սակայն ա՛յն էր, եւ իր շարունակէ մնալ ալիպէտ, որ Սփիւռքը խուլ մնաց անոնց ցուցմունքներուն ու յորդորներուն:

Ժամանակն է կարծւմ սկսելու մեր  
բուն հարցադրոյցին:

— Միբեի՛ր Թաշեան, ե՛րբ եւ ո՞ւր  
ծնած ես, ի՞նչպէս անդամ են մտնելու-  
թիւնդ ու պատանձկութիւնդ :

— Ծնած եմ Առաքապար, 1896 ՂԷԿ  
տեմբեր 20ին: Նախնական ուսումս ստա-  
ցած եմ Ծննդապարսիս մէջ: Նոյն դպրո-  
ցին աւագեւոր եղած է նաեւ Շաւարշ  
Նարդուեան: Կարծեմ երկու կապը ցած  
էր ինձէ: Զայն աւարտելէ ետք, մեծ  
փափաք մը ծնաւ մէջ, Պոլիս, կառա-  
վարական զգրոց մտնել, «Լիւմբլի-  
շիւրիւմէր»: Բաւական չաբերէլ դռնէն,  
մտնաւանք լաւ թրքերէ: Եկայ եւ քրե-  
նախնան անցորէ: Քննելու Նիացաւ թրք-  
երէնէն ժրայ, բայց տակաւին տարբեր  
փոքր գտնելով: Թխադրեց, որ մէկ-եք-  
կու տարի չհետեւիմ ընդհանուր ուսմանց,  
այսպէս մտնեմ Նախարարան:

Մտալ «Նոր Դպրոց», զոր հիմնած  
էր ու իր վարէջը հիմնդէան:

Պոլսոյ մէջ Հռչակաւոր ուսուցիչներ  
ունեցած էմ, վահան թէքէհան, Օշա-  
կան, Եզդէէ Աբգ. Դուրեան, Տիգրան

Ձեռնարկներ, Կոստան Ջարեան, Գա-  
վաֆեան, Ստեփան Կուրտիկեան:

Այդ տարիներուն, տեսած եմ Սիմոն  
Ջաւարեանը, Խաթալը, Բ. Ջարդարեա-  
նը, Վարդպէս Սէրէնկիւիւսեանը, ուրիշներ:  
Տեսած եմ զանոնք Հեռուէ Հեռու, դա-  
տախտութեանց ընթացքին, բեմերէն:

Ժամանակին յօդուած մը գրած էի  
«Առատութեան թերթին մէջ»: Թուշեան ազ-  
գանունն սխալ տպած էին, բրած Թաշ-  
եան: Այդպէս ալ մնաց:

Վրայ հասաւ 1915 թուականը: Բո-  
լոր ուսումնական ծրագիրներս ընդ-  
կան, ի հարկէ:

Մեզ աջոորեցին Աֆիոն-Գարաշի-  
տար: Իրեն աշակերտաւոր յաջողեցայ մը-  
նալ: Խաղախորդարանի մը մէջ աշխա-  
տեցայ: Վստահելով թրքերէնէն, ուղեցի  
սպայ բլաւ, շնորհունեցին, առարկելով,  
որ զինուորական տարիք չունէի:

1918ին, Ատափազար: Քեմալական  
չարժումը սկսաւ արդէն քանի մը ամիս  
ետք: 1922ին, շուշա առի վարձեալ Պո-  
լիս, Ժանը Հիւանդութենէ մը ետք: Մը-  
նընդամայրիս մէջ, չուկային վրայ, Ժա-  
ռերէն կախաւած 10-20 մարդ տեսած էի,  
ահաւոր վախ մը զգացած ու անկողին  
ինկած:

Պոլիս հասնելու, ուղղակի դացի  
«Ճակատամարտ» խմբագրատունը:

— Ատափազարէն կու գամ, լուրեր  
բերած եմ, — ըսի շնչահատ, դրան մօտ  
նստած մարդու մը:

Վերջին իմացայ, թէ Գուրգէն Մի-  
թրեանն էր ան:

— Ներս մտիւ եւ խմբագրապետին  
ըսէ ըսելիքներդ, — թելադրեց ինծի:  
Մինչ կ'ուղղուէի ներքնասենեակը, հտե-  
ւէս պոռաց:

— Բարձր խօսէ՛:

Ներսը, աւագ Ուրբաթի նմանող  
մարդ մը նստած էր: Նոյն ինքը, Շա-  
ւարշ Միսաքեանը:

Կրկնեցի զուրսը ըզածս:

Թուղթ մը տուաւ եւ ըսաւ.

— Նստէ՛ դրէ՛:

Ի՞նչ ալ գիւրդն-դիւրին կը խօսէր,  
«նստէ՛ գրէ՛»: Հո՛գ, ի՛ր դիմաց:

Ի՞նչ գրէի, ի՞նչպէս գրէի: Մինչեւ  
այդ ատենները աւելի ոտանաւոր կը զը-  
րէի, քան արձակ: Ժամ մը շարժաւու-  
ցայ: Ոտանաւոր գրէի, թէ արձակ,  
Վերջապէս յաջողեցայ երկու էջ մտնել:

Նայեցաւ, օրօրեց զլուրի:

— Լա՛ւ է, — ըսաւ:

Ես դուրս փախայ: Յաջորդ օրը ալ-  
պեցին գրածս:

Այլ ամէն օր կ'երթայի խմբագրա-  
տուն: Պոլիսը սկսաւ դարձեալ ալիկ-  
ծիլ: Ետի-Գուրգէն որբանոցը ուսուցչու  
թիւն կ'ընէի: Ազգային խնամատար-  
ութեան մէջ պաշտօնեայ եղայ յետոյ, Վա-  
րամ Թաթուլի Հետ: Պոլիսը պարզուե-  
ցաւ:

Պոլսէն Յունաստան, 1923ի Մարտի  
վերջերը՝ Եզիպոտոս:

Հակառակ քանիցս կրած յուսա-  
րութիւններուս, բոլորովին չէի հրաժա-  
րած բարձրագոյն ուսման Հետեւիլու Ե-  
ւրոպէս: Կ'ուղէի Ֆրանսա անցնել, Սոր-  
պոնի դասընթացներուն արժանազոր-  
ւել:

Բարեկամ մը գտայ, որ յօժարեցաւ  
Ժախքերս հոգալ: Կը բնակէի ընտանիքի  
մը մօտ, մայր ու աղջիկ: Թուղթերս  
պատրաստուեցան եւ մեկնելու վրայ էի,  
երբ իրիկուն մը բնակած սենեակէս բե-  
ցի բարերարիս եւ տանտիրուհիս միջեւ  
խօսակցութիւն մը: Մայրը կ'ուղէր իմ  
աղջիկը ինծի կնութեան տալ: Բարերարս  
համաձայն էր:

Յաջորդ օրը, տունէն հեռացայ: Քա-  
նի մը տարի ետք մեռաւ աղջիկը, ինչ-  
պէս մեռած էր, դեռ չծնած, Սորպոնի  
երազս:

— Թերեւս ալ լաւ եղաւ, սիրելի  
Թաշեան. մեր խմաստուն ժողովուրդը  
կ'ըսէ, թէ ամէն շարիքի մէջ բարիք կայ:  
Եթէ Ֆրանսա մեկնած ըլլայիր, ո՛վ գի-  
տէ ինչի՞ր պիտի պատահէին:

— Ի՞նչ կ'ուղէիր, որ պատահէր.  
խեղճ ու կրակ վարժապետ մը չէի ըլլար  
այսօր:



— Ինչո՞ւ վարժապետ, խմբագրապետ, Վճռաբերքի խմբագրապետ...

— Դո՞ւն ալ ազատ ծաղրել զիս. ինչո՞ւ խմբագրապետը: Մեր տպարանի տղոց ակնկալութիւնները ունիս դուն ալ, կ'ուզես, որ քեզի՞ ալ պատասխանեմ նոյն ձեւով:

— Ի՞նչ են այդ ակնկալութիւնները եւ ինչո՞ւ քարկացար, սիրելի թաշեան:

— Մեր տղաքն են, կու գան ինծի օրերու. թղթակցութիւն մը հազիւ կըրնան գրել: Ամէն առաւօտ կը սպասեն ժամանումիս:

— Բարի լոյս, ընկեր խմբագրապետ, — կը բարեւեն ժիւղերան:

Երբեմն կը ծիծաղիմ, երբեմն ալ չեմ դիմանար ու կը պոռթկամ:

— Մօ, լակոտանե՛ր, ո՛ւր են այս թերթին խմբագիրները, որ զիս խմբագրապետ կ'անուանէք: Խմբագրապետ կ'ըսէ ինծի, որպէսզի ես ալ խմբագիր՝ կոչեմ ձեզ...

— Հա՛, հիմա հասկցայ, սիրելի... Կերպարանքի՞ն...

— Աւելի լաւ է չխօսիլ այս մասին, չխօսիլ այսօրուան անտանելի կացութեան մասին:

— Համաճայ՛ն, չխօսինք: Վերադառնա՛նք 1923ին: Երբ չկրցար Սորպոն երթալ, ի՞նչ ըրիր, ի՞նչ գործով զբաղեցար:

— Վահան Նաւասարդեանն ու Գուրգէն Մխիթարեանը նոր եկած էին եւ կ'աշխատէին Վճռաբերքի խմբագրութեան մէջ: Ես ալ յաճախ անոնց մօտ կ'երթայի, ժամանակ անցընելու համար:

Այդ պարին, Աղեքսանդրիոյ մէջ ընտրութիւնները մերիները չահեցան: Ուսուցչական պաշտօնի կանուկացայ Պաղտեան վարժարանին մէջ, Տնօրէնն էր Նիկոլ Աղբալեան: 1928ին, պէ՞տք կազմուեցաւ եւ մենք կորսնցուցինք, Դուրս հանցին բոլոր դաշնակցական ուսուցիչները, Աղբալեան, Շանթ, Հ. Շէմս, Գաբրիէլ Թադևոսեանն ու զիս:

— Եթէ պէ՞տք չէր, չեմ. դիտե՛ր, թէ ի՞նչ պիտի պատահէր: Կրնար ըլլալ, որ

Պողոսեան վարժարանը շեմարանի վերածուէր, կրնար չըլլալ:

Յամենայնդէպ, այսօր, Փաշանեան շեմարանը գոյութիւն պիտի չունենար, ո՛չ ալ թերեւս Համազայիներ: Եւ հոս, ե՛ս, աւելի իրաւամբ կրնամ ըսել զի մը առաջուան քու ըսածդ. ամէն շաբաթ մէջ բարեք կայ:

Գացի Զակարիկ, Կամարական Եւթախտի գործատան մէջ պաշտօնեայ: Տնօրէնն էր Գասպար Իփէկեան: Հոն մընացի մինչեւ 1932: Ուսուցիչ Գալուստեան վարժարանի մէջ, 1932էն 1934: 1934-1936 պրակներ հրատարակեցի, քանի մը վէպեր: Այդ տարին մտայ Նուպարեան վարժարան, զարձեւ իբրեւ ուսուցիչ: 1946ին մտայ Վճռաբերքի խմբագրութեան մէջ:

Յաջորդ տարին, Ամերիկա մեկնեցաւ Գուրգէնը: Վ. Նաւասարդեանի կողքին, անոր մահէն ետք առանձինն մնացի խմբագրութեան մէջ մինչեւ 1960: 1961ին հրատարակեցայ, նուիրուելու համար դրական աշխատանքներու:

— Հրատարակուած կամ հրատարակելի ի՞նչ գործեր ունիս:

— Մինչեւ այսօր հրատարակուած են չորս շնչին գրքոյկներ.

1) «Ներածութիւն հայ գրական պատմութեան», 1961ին:

2) «Լստաւն հայ լեզուի», 1962ին:

3) «Լեզուական հարցեր», 1963ին:

4) 1968ին հրատարակուեցաւ իմ չորրորդ շնչին՝ «Թիւրք ու քերին»:

Տպագրութեան համար պատրաստ են երեք դիւբեր. 1) «Գրական հարցեր», 2) «Հայ յեղափոխութեան թեր ու դէմ», 3) «Իմ մեծ ընկերներս» (յուշեր՝ տասը տականոր դէմքերու մասին):

— Որո՞նք են այդ դէմքերը:

— Անոնց մէջ կան Աղբալեանը, Շանթը, Օշականը, Համօ Օհանջանեանը, Վ. Նաւասարդեանը, Ռուբէնը, Դրօն, Գ. Իփէկեանն ու Շաւարշ Մխաճեանը:

Հրատարակուած գործերու... մէջ

պէ՛տք է յիշել արդեօք Հայ լեզուի ընթերցանութեան գասագիրքերու շարքը՝ «Հայկարան», ութ գիրք, նախապատրաստականէն մինչեւ բարձրագոյն ընթացք։

Ատեն մը, ճերբ պատանի էին, բանաստեղծութիւններ կը գրէին։ Ետքէն, երբ քիչ մը աւելի մեծցայ տարիքով, սկսայ կարճ պատմութեանքներ գրել։ Պարզանքերու բերումով՝ բանաստեղծութիւնն զլորեցայ ինկայ Հրապարակագրութեան բացա՛յալը, որ դարձաւ իմ վերջին կայքս։

— Ի՞նչ է, սիրելի թաշնան, կարծիք լեզուի եւ գրականութեան մասին։

— Ինծի համար՝ լեզուն ո՛չ միայն գիտութիւն է, այլեւ՝ արուեստ։ Ես հեռաժողով եղայ գիտութեան, որովհետեւ չկրցայ հասնիլ արուեստին։ Չեմ կարծեր, որ մինչեւ Հիմա բրածա կամ աղւտած բան մը կ'արժէ։ «Պարապ վախտի յաղաղիք», պիտի ըսէի, եթէ իրապէս պարապ վախտ ունենայի...

— Եստ համեստ ես, գրական դասագան այս հարցերուն դեռ կ'անգրաւաւանեմ մեր զրոյցին ընթացքին։

— Ձտոնամ աւելցնելու, թէ գոնէ ունիմ այն միթարութիւնը, որ Հայ լեզուն սիրողներուն մէջ ես յետիններէն եմ։ Մնացի միշտ համբալ աշակերտ. այս տարիքէս ե՛տք պիտի կրնամ տարբեր բան մը ըլլալ...

— Ձխարունակենք այս ուղղութեամբ, որովհետեւ...

— Որովհետեւ չկա՛յ, սիրելի Փայտեան, այս՝ ա՛յս է...

— Լա՛ւ, այդպէս կարծէ գուն... Մեր զրոյցին հիմնական հարցերուն մօտենալէ առաջ, կ'ուզէի գիտնալ, թէ մեր գլուսաւոր զէմքերէն ուրիշ որո՞նք ճանչցած ես, որոնց հետ աւելի մտերիմ եղած ես։

— Այո, մէջ ճանչցած եմ, բացի քիչ մը առաջ յիշածներէս, Հրանդը (Մեղրեան կրեմեան), Բարսեղ Եսայազը, Երանոս Փաւստը, Հմ. Խոսրովեանը, Մի-

նաս Ձերայր, Լ. Խաւանեանը, Դանիէլ Վարուժանը եւ քաղամ ուրիշներ։

Բայց ես այս գրականորեն ճանաչած չեմ, Հայրէ միայն տեսած եմ եւ մեծարանքէ ու պատկանաւքէ զատ ուրիշ գագոյցում կամ տպագրութիւն չեմ ունեցած։

Աւա՛ղ, չեմ կրցած տեսնել անկրկնելի Զօհրապը եւ Թուխ Արամազը (Ս. Ահարոնեան)։ Տեսած եմ Համաստեղը, որ Միջին Արեւելքի իր չընկալալիք թացքին հանդիպած էր նաեւ Զակարիկ։

Ապա հետզհետէ րեղաշնեցաւ չընկալալի Մօտիկ եղած եմ մեր առաջնաւոր Համոյին, խիզախ Ռուբենին, պատահաբար ճանչցած եմ, միշտ Գահիրէի մէջ, Ռուբէն Դարբինեանը, Արշակ Զաւալեանը, Կախարդօրէն քաջ Դրոն, Յակոբ Խալմատեանը, Եղ. Սահակեանը, մեր երախտաշատ ու վաստակուոր ընկերներէն Կոմսը, Վրացեանը, Սասունին եւ ուրիշներ։ 1954ին, բախտը ունեցայ Գահիրէի մէջ մօտէն ճանչնալու Նարգիսին, Ժան Պալարը, Լիւքսեմբուրգի Մարսէլը եւ քե՛զ, սիրելի Փայտեան, եղբայր ի գրոց բարբառ։

Նախ Պոլսոյ, ապա նաեւ Գահիրէի մէջ տեսած ու ճանչցած եմ Հրապարակագիր գրադէտը կամ գրագէտ Հրապարակագիրը՝ Եսայազը Միսաքեան, զոր սիրած եմ մեծ եղբոր մը պէս։ Հիմա տեղը չէ կարծիք յայտնելու անոնցմէ իրաքանչիւրին մասին։ Ըսի արդէն, թէ յուշեր գրած եմ իմ մեծ ընկերներէն ոտանին մասին։

Եստ մօտիկ եղած եմ մեր գրականութեան զմեծ աղաքին՝ Յակոբ Օլաւանի, զոր ճանչցած եմ նախ Պոլսոյ, ապա յաջորդաբար Գահիրէ, Կիպրոս, Երուսաղէմ։ Իրեն հետ ունեցած գրական զրոյցներս Հրատարակուած են մեծ մասամբ, իսկ փոքր մաս մը կը մնայ ղեռ անտիպ։

...Աղաչեցի-պաղատեցայ, որ այս մեծ սերմնացանները իրենց շնորհներէն եւ մեծութենէն գոնէ մասնիկ մըն ալ ինծի տային։ Ձտոնին կոծիները...

— Գրական եւ ուրիշ հարցերու մասին դեռ հարցումներ ունիմ։ Կը փափաքեմ սակայն, որ առանց աւելի երկար սպասելու մօտենանք մեր դրոշմի հիմնական նիւթին, — Սփիւռքին։ Յետոյ, եթէ տրամադրուի՞նք եւ ժամանակ ունենանք, կը վերադառնանք գրականութեան։

— Պիտի նախընտրէի տարածուել այս վերջինին շուրջ։ Ի՞նչ կ'ուզես, որ ըսեմ Սփիւռքի մասին։ զիտես որ ես լատեններէն չեմ...

— Գիտեմ. զիտեմ նաեւ որ գրականութիւնը երկուքիս ալ գտատաւն է, բայց եւ այնպէս պէտք է խօսիմք այդ միւս խնդիրներու մասին ալ, որոնք ուզալի կեպ ունին մեր հաւաքական կեանքին հետ։ Արտասահմանի մէջ մեր դաշտակաւոր, մեկմէ իւրաքանչիւրին համար քիւ մէկ իւրացն է։ Կենսականը, նախապայմանը մեր հաւաքական կեանքն է. մնացածը՝ գրականութիւն, արուեստ, ուսում, ազդային դատ, կու գան յետոյ, ալ ի նախապայմանէն կախում ունին։ Եթէ մենք ձուլուինք, հետզհետէ կորսնցնենք մեր ազդային նկարագիրն ու զիմազիւծը, ամէն ինչ ինքնաբերաբար կը փոշիւնայ։ «Լինիլ թէ չլինիլու» հարց դրուած է մեր առջեւ։ Ըսել կ'ուզեմ, որ մենք գնչուներ չենք, մենք «լըվանք» ենք չենք։ Ա՛ղբ ենք, դեռ չենք հրաժարած ազգ բլլալէ, ու կ'ուզենք մնալ իբր աշխարհին։ Քաղաքակրթութեամբ ազդի մը բոլոր տուեանները ունինք, դարաւոր պատմութիւն, ամէնէն հիններէն եւ ամէնէն փառաւորներէն. ունինք մշակոյթ, դարձեալ ամէնէն հիններէն եւ ամէնէն փառաւորներէն։ Ասոր հետ մէկտեղ, հայութիւնը միայն անցեալ մը չէ, կ'ապրի զեռ ներկային մէջ, չէ՞ սնանկացած, չէ՞ փակած իր հաշիւը իր անցեալին հետ։ Դեռ ունի յոյս ու քաջութիւն, իրազորօնիք ապագայ իտէալներ։ Ունի լօշափելի տուեաններ՝ հպարտութեամբ եւ վստահութեամբ նայելու դալիք օրերուն։ Այսօր, ունինք ծաղկած Հայրենիք մը, հոծ Հայութեամբ, մշակութեամբ ա-

ռաջնակարգ դիրքի վրայ, ունինք նոյնքան հոծ Հայութիւն, Հայրենիքէն դուրս, չինդ ցամաքամասերու տարածքին։ Բայց ինչ որ քեզի ե ինձի համար աւելի կարեւոր է, հաստատուելս դիտեալն է, թէ Հայութիւնը, մայր հողին վրայ ապրող թէ ցրուած աշխարհի շուրս ծաղկերուն, հայրենասէր է։ Ունի հաւաքական իտէալ, խիզճ, վախճանաբերութիւն՝ իր զէմ գործուած անարդարութեան դէմ, ունի արժանապատուութիւն՝ պահանջելու, հետապնդելու եւ ստանալու բոլոր կարելի միջոցներով, իր արդար իրաւունքը։ Դեռ կենսական է մեր ժողովուրդը, ստեղծագործ, միշտ տաղանդաւոր։

Այս ըսածս ճիշդ է հարկւրին հարկւր տոկոսով՝ հայրենիքին մէջ, ու կարծուածէն աւելի կարեւոր համեմատութեամբ՝ արտասահմանի շատ մը դաշտակաւորներուն մէջ։ Մի՛ սրտնեղիր, մի՛ յուսահատիր, սիրելի Թաշեան, երբ նոյնքան շատեր հայրենի չեն դիտեր. երբ քեմ, թէ ամէնէն վստահաւոր կարծուած շրջաններուն մէջ իսկ՝ ամէն յոյս եւ ակնկալութիւն կտրելու իրաւունք չունինք։ Կը պաշարինք մեր տրամադրութեան տակ ունեցած բոլոր գէներով։ Երբ չենք կրնար պահպանել լիզուն, կ'աշխատինք մաս պահել Ողիւն։ Երբ չենք կրնար մեր խօսքը հասկնալի ընել հայուն, կը գիտենք անոր մարդկային խղճին ու արժանապատուութեան։

Բայց ես ինչո՞ւ կ'ըսեմ այս բոլորը քեզի, սիրելի Թաշեան, դուն ինձմէ լաւ գիտես. ճու խմբագրի հանգամանքով աւելի տեղեակ՝ անցած-դարձածին։

— Ըսի արդէն ու կը կրկնեմ, — ես յոռետես եմ Սփիւռքի ապագային մասին։

— Յոռետեսութեան պատճառներ չեն պակսիր ոչ մէկուս եւ ես գիտէի արդէն, թէ դուն, սիրելի Թաշեան, յոռետես ես այս հարցին մէջ։

— Իսկ դո՞ւն, սիրելի Փօլատեան, դուն ի՞նչ ես։

— Ես կը գտնուիմ յոռետեսներուն եւ լատեններուն ճիշդ մէջտեղը, ամէն

բանով. մտածելակերպով, տարերքով ու լայն աշխարհագրական դիրքով:

— Այդ մէկը լաւ չհասկցայ: — Օրինակ, դուն կ'ապրիս Եգիպտոս, իսկ ես՝ Ասիո-Ապապա, գրեթէ եօթը տարիներէ ի վեր, 2500 մեթր բարձրութեան վրայ: Տարբէքս եւ այս վերջին հանգամանքը կը կարծեմ, թէ կու տան ինծի երկու տրամագրութիւններուն միջեւ գատաւորի, աւելի ճիշդը, հաշտաբարձի դեր մը կատարելու:

— Քեզ կը հասկնամ, սիրելի Փօլատեան եւ տարիներէ ի վեր հաճոյքով հառաւանդեալ եմ ո՛չ միայն մտաւորական պարկեշտութիւնդ, այլեւ ազնիւ շրջահայտնողութիւնդ: Բայց...

— Բայց ի՞նչ, սիրելի Թաշեան, ի՞նչ բանն է քեզ մտահոգողը: Հա՛, քիչ մը առաջուան ըսածներուս վրայ չմոռնամ աւելցնելու հետեւեալը. խնդիրը միշտ իմ մասին է, հազա՛ր ներողութիւն: Քու եւ Վահէին վրայ ուրիշ առաւելութիւն մըն ալ ունիմ: Պարագանքներու բերումով աւելի սերտ շփման մէջ եղած եմ մեր ժողովուրդի զանազան զանգուածներուն հետ: Մօտէն կը ճանչնամ Ֆրանսահայ գաղութը, երկրէն գաղթած սերունդը եւ հոն ծնած ու հասակ նետած սերունդը: Այցելած եմ ու կը կարծեմ ճանչնալ Միջին Արեւելքի հայութիւնը: Բացի Լիբանանէն, Սուրիայէն, Եգիպտոսէն, Յունաստանէն, անցեալ տարի եղայ նաեւ Պարսկաստանի հոծ գաղութի ծոցին: Ասկէ դատ, ես Հայաստան եղած եմ, դուք երկուքդ՝ ո՛չ: Ուստի ես աւելի լայն եւ ամբողջական համայնապատկեր մը ունիմ աչքիս առջեւ, քան դուն եւ Վահէն: Մայրենի հողը եւ այդ հողին վրայ ապրող հարազատ հայութիւնը տեսնելու հանգամանքը մա՛նաւանդ՝ մեծապէս կ'ազդէ մեր հայեցակէտին վրայ՝ հայութեան ներկային եւ ապագային նկատմամբ: Եօթը տարիներն ու այցելումներու տեղեկութիւնները բաւարար չեն: Հարկ է իր սեփական աչքերով տեսնել այսօրեան մեր հայրենիքը: Անկէ վերադարձին, անպայման տարբեր կը տեսնէք ու

կը դատէք խնդիրները: Զեմ ուղեր երկարել, բայց մտահա՛ եմ, որ կը հասկընաք դիտ: Ներողութի՛ւն այս երկար միջանկեալին համար: Հարցունքած էի քեզի, սիրելի եղբայր, թէ ի՞նչ էր քեզ մը տահուկողը:

— Մենք, ես, դուն, Վահէն ի՞նչ հանգամանք ունինք այս խնդիրներուն մասին խօսելու: Թող մեր ազգին ճակատագիրը վարողները, թող մեր զինվարները մտածեն, տնօրինեն պարտն ու պատշաճը: Պետական փորձառու մարդիկ ունինք, կաթողիկոսներ, կուսակցութիւններ: Ես հայ մշակոյթին նուիրուած համեստ սպասարկու մըն եմ, ուրիշ ո՛չ մէկ յաւակնութիւն չեմ սնուցաներ:

— Եւ ո՛չ ալ ես, ամենազոյն չափով: Ծիծէ՛ է ըսածդ. մենք մեր ժողովուրդին սպասարկուներն ենք: Մեղմէ իւրաքանչիւրը, իր ազատ կամքով, ինքզինք զբաժնէ անոր տրամադրութեան տակ, մի՛միայն անոր ծառայելու անհաւանդիր եւ անկեղծ մտադրութեամբ:

Պատճառ մը եւս աւելի որ մտածենք մեր ժողովուրդին մասին:

Նախորդ սերունդը հարցեր ունիլ դրուած իր առջեւ: Այս կամ այն ձեւով ջանաց լուծումներ գտնել: Լուծեց անոնցմէ ոմանք, ուրիշներու համար միջոց եւ ժամանակ չուենցաւ:

Այսօր մեր առջեւ դրուած են բոլորովին տարբեր տեսակի խնդիրներ, աւելի դժուարին: Ստիպուած ենք լուծումներ որոնել եւ գտնել: Մեր կարելիութեանց սահմաններուն մէջ, ի հարկէ:

Մեր միւս զրուցակիցը, Վահէ Օրսկան մասնաւորապէս կը ծանրանայ այս հարցին շուրջ, խիզախ գաղափարներ կը յայտնէ: Արտասահմանի մէջ ստեղծագործող գրապէտէն շատ խիստ պահանջներ ունի, անոր կը վերապահէ մեծ առաքելութիւն մը: Ուստի պիտի փափաքէ ի նաեւ ունենալ քու տեսակէտներդ այս մասին, կարենալ բաղդատելու եւ եթէ կարելի է, հասկացողութեան մը դալու, եղբայրացութեան մը յանգելու:

— Ես կը կարծեմ, թէ սխալ դուռ դարկած ես, սիրելի Փօլատեան: Ես այդքոյ փնտռած մարդդ չեմ:

— Չեմ կարծեր, որ սխալում եմ:

— Ես Հանդարտ խօսող մարդ եմ, կը սիրեմ տասը մտածել, մէկը արտայայտել, պրպտել, ուսումնասիրել, ջանալ վերլուծել:

— Հրաշալի՛, ճիշդ ա՛յդ է ուզածս, ա՛յդ է, եւ ո՛չ ուրիշ բան:

— Կ'ուզե՞ս, որ կարծիքս յայտնեմ Սփիւռքի մէջ գործող երեք սերունդներուն մասին:

— Այո՛, ի հարկէ, ա՛յդ է ուզածս: Անպայման լուծումներ գտնելու յաւակնութիւնը չունինք, ո՛չ դուք, ո՛չ ես: Մեր դարուն եւ մեր վիճակին մէջ զբաղեցող ժողովուրդի մը համար չկա՛ն եւ չեն կրնար ըլլալ հաստատուն ու վերձեական լուծումներ: Մեր լուծելիքները մարքեմաթիքի խնդիրներ չեն: Եստ աւելի բարդ ու կենդանի, յարափոփոխ, յաճախ անշօշափելի հարցեր են: Որո՞նք սակայն կան, գոյութիւն ունին, լուծման կը սպասեն:

— Հիմա խօսքը քուկդ է, սիրելի Քաշեան: Որո՞նք են այդ երեք սերունդները եւ ի՞նչ կը մտածեն անոնց մասին:

— Լա՛ւ, Լա՛ւ, քու ձեռքդ ապաստել չկայ... Ուրեմն մեր մէջ հիմա՛ ալ, ինչպէս միշտ, կը գործեն երեք սերունդներ, — երէց, միջին եւ կրտսեր: Երէցները առաւելութիւն մը ունին միւս երկուքին վրայ, — փորձառութիւնը, զոր կրնանք խաղաղ իմաստութիւն կոչել: Այս սերունդը ո՛չ թէ պատմութիւն սերտած է, այլ պատմութիւն գրած է: Դիտող չէ եղած, դերակատար եղած է: Ականատես չէ միայն պատմական դէպքերու, նաեւ մասնակից ու բաժնեկից է:

Մեզ նախորդող սերունդը հայրենիք ստեղծեց: Կարեւորը ստեղծելն է: Արարչազործութիւն չէ: Արարչազործութեան վրայ բան մը տեսցնելը... արարչազործութիւն չէ: Յաւելում է, յօրինում չէ: Յաւելումը բան մը կ'արժէ անշուշտ, բայց յօրինումին մէջ է բուն արժէքը:

Նորերուն յանդիմութիւնը կը սիրեմ, եթէ տակաւը պարապ չէ: Ի՞մ ճաշակիս յարմար չէ պարապութիւնը, տակաւին մէջ ըլլալ թէ տակաւին դուրս:

Միջին սերունդը կը քալէ երէցներու հետքերուն վրայէն: Հասուն սերունդն է, թերեւս նոյնիսկ հանդիմա՛ն սերունդը: Եթէ «պատմութիւն» չունի դեռ հիներուն պէս, սակայն աւանդութիւններ ունի: Եթէ քոյրովին անցեալ մը չէ, յաճեալն ուզէս ապագան ալ չէ: Իշխան դասը չէ, իշխող դասն է: Զօրագրուած բանակը չէ, զօրուն բանակն է:

Կրտսերները առաւելաբար ձեռնարկ են Հանրային կեանքին համար, սակայն բուն գերակատարը չեն դեռ: Առաջիններուն փորձառութիւնը չունին, ո՛չ ալ երկրորդներուն հասունութիւնը ունին: Բայց ունին անսպառ եռանդ, խանդավառութիւն, հաւատք, զօգոհութիւն եւ բաւական, — նոյնիսկ բաւական աւելի յաւակնութիւն: Այլ խօսքով՝ անցեալը չեն, ներկան ալ չեն բոլորովին, աւելի բան մըն են, — ապագան են: Իրենց պատմութիւնը վերի վեր իրենց դիմագիծը պիտի ունենայ, — դեղեցիկ կամ աղեղ, սուր կամ բութ, յառաջդիմական կամ յետադիմական:

Երէցները գրականութիւն ըլլած են, միջին սերունդը գրականութիւն կ'ընեն, կրտսերները գրականութիւն պիտի ընեն: Չեմ ըսեր՝ գրականութիւն չեն ընէր հիմա, բայց դեռ նկարագիր մը չեն, խոստում մըն են: Ոմանք խոստումէ աւելի բան մըն են:

Զարմանալի պիտի ըլլար, եթէ երեք սերունդներն ալ միատեսակ մտածէին, միատեսակ գործէին եւ միատեսակ ապրէին: Դա՛րձեալ, զարմանալի պիտի ըլլար, եթէ տարբեր սերունդներու պատկանող մեր մտաւորականները չփոթանալու տեսիլն ունենային իրարու՝ կեանքը լուստախնայ նմանէին իրարու:

Ուստի՝ ընաւ տարօրինակ չէ, որ իրենց կեանքի աշնան, ամբան կամ դարձնան մէջ ապրող այս երեք սերունդները տարբեր ջերմաստիճան ունին: Տարօրէ-

նակ չէ նոյնպէս, որ երէցները, միջինները եւ կրտսերները զփոշն են իրարմէ, յաւախ չեն հաւնիր իրարու, երբեմն կը քննադատեն ու կը խծածեն իսկ զիրար: Դժգոհ են, որ չկրցան ու չեն կրնար տալ այն քանդակը, որուն ամէն մարդ կը ձգտի հասնիլ, բայց որուն ոչ ոք կրցած է հասնիլ երբեք: Անմատչելին մատչելի է միայն Աստուծոյ:

Որոշումի մէջ է համայն աշխարհի երիտասարդութիւնը:

— Հրաշալի՛, տեսա՞ր որ եկանք հաւանք մեր նիւթին: Ոնդրեմ, շարունակէ:

— Այո՛, բան մը կայ, որ չի՛ քաշեր կամ ծուռ կը քաշէ: Փիլաւ մը կայ, որ չ'եփիր եւ հում կը մնայ:

Պիտի ընդունինք, որ մեծերը հետերնին կը տանին իրենց առաքինութիւնները եւ թերութիւնները միայն կը ձգեն մեղի:

— Դիչ մը առաջ գործածեցիր դրժ—

(Շար. Բ յաջորդ թիւով)

գոհութիւն բառը, կ'ուզե՞ս քիչ մը սեւիկն ըսել այս մասին:

— Ես կ'ը հաւատամ, որ դժգոհութիւնը յառաջատար ուժ է: Ըսողներ իսկ կան, որ իր ստեղծագործութենէն դժգոհ է նաեւ Արարիչը ինք (եւ հերետիկոս չեմ առանկ բան մը րսել համարձակելու համար):

Փաւստոս Բիւզանդ, գծելէ ետք Յուսիկ Կաթողիկոսի դիմանկարը, կ'անցընէր... «Նա սուրբ հոգով խօսեմբը կը րում էր՝ ինչպէս մէջքին կապած ասոր: Յուսիկ Կաթողիկոսը ես... անձամբ չեմ ճանչնար եւ չեմ գիտեր, թէ ինչ էր մէջքին կապածը: Գիտցածս սա՛ է, որ հայ մտաւորականը եւս սկսեց է դառնայ Յուսիկ Կաթողիկոս եւ Սուրբ Հոգին խօսեցրը կըէ իր մէջ, «ինչպէս մէջքին կապած սուրբ»: Դադրի սրճարանի պարոն ըլլալէ եւ դառնայ առաքեալ: Չմտնէ իշխելու մասին, այլ մտածէ ծառայելու մասին, Բանին սպասարկելու մասին:

Եւ գործով հնձէ ինչ որ խօսեով կը ցանէ:

Կ. Փ.



ԴԱՐԵՐՈՒ ՆԱՅ ՄՇԱԿՆԵՐ



**Գ Ր Ա Գ Է Տ Ը**

**ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ**

**Մ Է Զ**

•

Ա.— ԳՈՐԾԻՁԻ ԵՏԻՆ՝ ԳՐԱԳԷՏԸ

Հարիւր քսան տարի կ'ընէ՝ Խրիմեան Հայրիկ երգած է իր առաջին բանաստեղծութիւնը, եւ այնուհետեւ յիսուն եւ աւելի տարիներու ընթացքին՝ դրական իր գործերը աճած են ու կողմած պայծառ փառք մը ԹԹ. դարու երկրորդ կիսուն բարձրացող հայ վերածննդ մշակոյթի լուստկամարին վրայ:

Խրիմեանի մէջ՝ առհասարակ գրագէտը չէ ճանչցուած իրրեւ տիրող դիմագիծ: Իր ժամանակակիցներուն կողմէ Հայրիկը ճանչցուած է աւելի իրրեւ ժողովուրդի ազատատենչ պայքարներուն պատկերը դարձած նահա-  
պետ: Իր քաղաքական եւ ազգային գործիչի ու քարեկարգիչի գիմաղիծը ա՛յնքան աւելի գրաւիչ եղած է, որ շուքի մէջ մնացած է գրագէտի գիմագի-  
ծը: Յարդ մեղի հասած վկայագրութեանց մէջ ալ, կենսագրողները իրենց  
յերբին գրեթէ ամբողջութիւնը յատկացուցած են Հայրիկի սահմանադրա-  
կան, ազգային, վարչական, կրթական, քաղաքական գործունէութեանց եւ  
անցողակի միայն տեղ տուած են գրագէտին:

Օրինակ, Հայկ Աճէմեան, հայրենի ամէնէն երկարաշունչ կենսագի-  
րը, հազիւ տեղ-տեղ ակնարկներ ունի-չունի Հայրիկի գրական հրատա-  
վրայ: Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, միայն անոր գրական հրատա-  
վրայէն թուելով կանգ կ'առնէ՝ հոս էջ  
րակութեանց ժամանակագրական երևումին առիթով կանգ կ'առնէ՝ որ հայ-  
մը, հոն կէս էջ, իրրեւ լուսանցքի նիւթեր: Իսկ Ա. Թէրզիպաշեան, որ հայ-  
մը ընկէ Վասպուրականի շրջանի առաջնորդութեան պատմութիւնը յուշագրած  
ընկէ Վասպուրականի շրջանի առաջնորդութեան պատմութիւնը յուշագրած  
է իրրեւ ականատես, երբեք չէ խօսիր անոր գրականութեան մասին: Զօգան-

digitised by

A.R.A.R.@

եան, Օշական, Աւագեան եւ ուրիշ գրադատներ ունին անշուշտ էջեր իրիմեանի գրական գործերու մասին, բայց ո՛չ լման ներկայացումով:

Խրիմեան գործիչը, ռեբմն, լաւ ծանօթ է — ու թերեւս պէտք եղածէն ալ աւելի — բայց խրիմեան գրագետը գրեթէ անծանօթ մնացած է, եւ յաճախ իր տեղն ալ գիշած է խրիմեան քարեկարգիչիմ: Բայց տարկա համեմատութեանց կշիռքէն դուրս երեւոյթ մըն է:

Իրողութեան մէջ, խրիմեանի մէջ քնածին ամօր քանաստեղծ-գրագետն է, որ այլապէս՝ Հանգամանքներու պահանջներով ու ժամանակի բերումով՝ դարձած է արտայայտիչը իր միւս գործունէութեանց: Բայց այժմ, ժամանակի սահմանով, երբ հետզհետէ դէպի մշուշոտ հորիզոն կը խորանայ իր մէջ ազգային գործիչը կամ քաղաքական գէմքը, միւս կողմէ՝ նոր սերունդներու միտքին մէջ պիտի բարձրանայ եւ աւելի փայլի իր մնայուն արժէքը կազմող գրապէտի գիմադիծը: Եւ արդէն՝ անոր ազգային գործունէութենէն ուրիշ լման մնացած չէ իրեն, եթէ ոչ յուսախաբութիւն, իր իսկ խոստովանութեամբ, եւ անդարձանելի կորուստներու յիշատակ: Իսկ վանահայրի, Առաքինորդի, ապա նաեւ Պատրիարքի եւ Կաթողիկոսի գործերն ալ միահամուռ դիտարկելի չեն արժանացած: Օրմանեան, օրինակ, մնայուն արդիւնք մը չի տեսներ իրմեանի մէջ, որ արդարացնէր «Հայրիկ» կոչումը, ու կը դարձանայ ալ, «առեղծուածային գէմք մը» կը կոչէ զայն: Սակայն ինչ որ անուարկելի արժէքով կը մնայ իրմեանէն՝ իր գրականութիւնն է, հոգարեակ մը ընտիր էջերով:

Ազգային կեանքի բազմաթիւ ճամբաներու ուղղութեամբ տարածուող անձ մը եղած է իրմեան: Իր ժամանակները ըրած են զինք այդպէս: 1821-1847, իր կեանքի 86 տարիներու շրջանին, ան տեսած է արեւելահայկազայութեան վերակազմութիւնը՝ 1836ի Պոլսէնիայով, տեսած է Օսմանեան պետական բարեկարգութիւնները՝ 1839ի Թանգիմարով, 1856ի Խաթթը-հիւմայիւնով եւ 1876ի Սահմանադրութեամբ: Իսկ Արեւմտահայ կեանքէն ներս, ան տեսած է ազգային ներքին էնսաֆական, ամիրայական ու յարանուանական պայքարները, 1860ական թուականներուն՝ Հայ Ազգային Սահմանադրութեան ծնունդն ու գործադրութիւնը, Հայ Ժողովուրդի հրաշալի մշակութային ու քաղաքացիական վերադարձումը, Հայկական Հարցին անուամբ եւ միջազգայնացումը, դաւաճաներու բարենորոգման ծրագիրներուն յուսադրութիւններն ու յուսախաբութիւնները, աշխարհը ալեկոծող մեծ պատերազմները, վեհաժողովներն ու ազգին ազատութեան ծիրանի պօսիները: Եւ այս բոլորին զուգընթաց, Հայ Ժողովուրդին կրած հալածանքները, պանդխտութիւնը, ըմբոստութիւնները, չարչարանքն ու վարդերը, — բայց նաեւ շատրոգ յոյսերը ու տարօրինակ հաւատքը վերականգնումի:

Ուղղակի մեր ազգին հետ կապ ունեցող այս բազմատեսակ իրադարձութիւնները իրմեանի անձը դարձուցած են, ինչպէս պիտի դառնար ազգին վեհակին հանգէպ արթուն միտք եւ զգայուն սիրտ ունեցող առաջնորդ մը՝ բազմակողմանի: Ան եղած է, իր Ժողովուրդի պատմութեան ամէնէն փոթորկալի մէկ շրջանին, եկեղեցական առաջնորդ, քարոզիչ, գրագէտ, բարեկարգիչ, դաստիարակ ու մարգարէ, ու, վերջապէս, ազգին հողերը գերագոյն արժուին բարձրացած Հայրապետ, Հայ Ժողովուրդի Հաւատքին ու



ողեւորութեան մէկ անձնաւորութիւնը: Բայց իր բոլոր դործունէութեանց մէջ եւ ամէնէն վեր կը փայլի բանաստեղծ-գրագէտի իր հարազատ առդանդը:

Յորմեանի մէջ բնածին գրագէտին ապացոյց կրնայ նկատուիլ սա մէկ իրողութիւնը, թէ ան բանաստեղծ էր դեռ «Հայրիկ» շկոյում, զեռ վարդապետ իսկ շնորհաւորութեամբ: Տակաւին աշխարհական վարժապետ՝ ան գրած ունի բանաստեղծութեանց հատորներ, իր զոյգ «Հրաւիրականները», իր ամբողջական երկերուն մէկ-չորրորդէն աւելի երկարութեամբ, որոնց մէջ եթէ թերի ալ տեսնուի իր արուեստը, եւ խորթ՝ իր լեզուն, գրաբարով, սակայն թրթռուն է իր գլխացումը, եւ ջերմ՝ ազգին սէրը: Սէրը, զոր ան երգեց եւ անով առաջացեալ, բայց երբեք չլքեց յոյսը ազգին արշալոյսին, որ պիտի պայթէր խաւարի մէջէն: Իր մէջ բնածին այդ բանաստեղծ-գրագէտն էր, որ պիտի պայծառանար ու լեզու տար եկեղեցականին ու բարեկարգիչին:

Եւ այս ճանաչումը հիմա մեզի իրաւունք կու տայ հաւատալու, թէ իր գրական տաղանդի այդ հիմնաքարին վրայ պիտի բարձրանայ Յորմեան Հայրիկի մեծութիւնը քաջիք բոլոր ժամանակներու մէջ:

Ան որ պիտի ազդէ Հայոց դարերով՝ գրող Յորմեանն է:

#### Բ. — ԽՐԻՄԵԱՆԻ ԱՆՁԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԼՄԱՅՔԸ

Ազգին վեհագոյն աթոռին վրայ նստած պարզագոյն անձը եղաւ Յորմեան: 1821ին, Վանայ մէջ ծնած՝ համեստ բնածին մը, մանուկ հասակին՝ կտաւագործութեան հետ՝ նաեւ ընթերցանութեան վարժութեամբ, աշակերտութիւն իր հօրեղբոր, յետոյ՝ Վարդայ վանք գացած եւ աշտեղ պարարտ հայնքէն լեզուն սորված, ու պատանի հասակին սկսած զգրել իւր երգերը, ինչ-պէս կ'ըսէ Բաքիթին: Յորմեան, 17 տարեկանին, Պոլիս եկած է եւ արհեստի մասն, բայց արհեստէ վեր՝ իր արհեստակիցներուն զբերակաւ սորվեցը՝ ներով զրազած, եւ այդ ճամբով՝ քիչ ատենուան մէջ վարժապետութեան համարսին տիրացած: Յետոյ, Վան վերադարձած, հայրը մեռած գտած, բայց մօրը եւ մեծ եղբոր հոգածութեամբ ամուսնացած, աղջիկ զաւակ մըն ալ ունեցած է:

Այդ միջոցին Այրարատեան ու Վասպուրական նահանգները չըբնջելով՝ ան գրի կ'առնէ իր առաջին երկարաշունչ բանաստեղծութիւնը՝ «Հրաւիրական Այրարատեան»: Բայց իր ժամանակի պահպանութեան նման ինքն ալ ընտանիքը լքելով, Պոլիս կու գայ 1850ին, եւ անկէ երաւսաղէմ, ուր եւ գրի ընտանէ «Հրաւիրական Երկրորդ Աւետեաց» երկրորդ երկարաշունչ բանաստեղծութիւնը, 1851ին:

Այդ է Յորմեանի նախա-ազգային ընթացիկ կեանքը: 1852ին, կը վերադառնայ Վան, բայց՝ ի՞նչ դժբախտութիւն՝ մեռած կը գտնէ իր կնիք եւ զաւակը, զոհեր՝ սարսափելի հրդեհի մը... Ալ այնուհետեւ կեանքը անկայուն եւ փնտռէ այդ մենաւոր կեանքին իմաստը: Ուսուցչութիւն կը փորձէ եւ արհիւքներու կը հանդիպի. կը տեսնէ, որ գիտութիւնը գործ է ժողովուրդին ծառայելը: Վերջապէս կը գտնէ ազգին դարաւոր հոգեւոր հաստատութեան միջոցով ժողովուրդին ծառայելու ճամբան. եկեղեցական կը ձեռնադրուի 1854ին, պատմական Աղթմարին մէջ:

Ձեռնադրութեան օրէն սկսած՝ արդէն Յորմեան «տարբեր» դէմք մըն

է, քան ժամանակակից եկեղեցականները. վերադարձնում է տարօրինակ տեսչության իր մէջ: Ժողովուրդին կեանքը, ժողովուրդին կացութիւնը, ժողովուրդին գարգացումը, ժողովուրդին անդորրութիւնը, ժողովուրդին ապագան եռան իր դիտակէտը եւ քարոզութեանց Ուիթը, խրատներում իմաստը եւ աշխատութեանց նպատակը, համեմատելով այդ ամէկը անդիմադրելի յիշատակներով եւ առաքիկային յոյսերով, կը յատկանշէ Օրմանեան (ՀԱՅԳԱՎԱՍՏԱՆ, էջ 4170): Ժողովուրդին մէջէն բարձրացած՝ ժողովուրդին համար վառող ջուր մըն է իր կեանքը:

Այլեւս ազգին առաջնորդը բաց է իր առջեւ: Պոյն ու դաւառ, կը ըլլի, կ'ուսուցանէ, կը հրատարակէ, տպարան կը հաստատէ, վանք կը բարեկարգէ: Պոյն, Վան, Մուշ, Կովստա, ու Կրկին Պոյն ու Կրկին դաւառ: Պատրիարք է Պոյն մէջ 1869ին, թէեւ հազիւ 3-4 տարիներ պիտի հանդուրժէ նստիլ այդ աթոռին վրայ, որովհետեւ պաշտօնականութեանց ու ժողովականութեանց համար ուսման համար մըն է ինք: Գաւառի լուսաւորութեան, ժողովուրդի արթնութեան գործը ազատ աշխատանքի կը կանչէ դիմքը: Ձուներ բարձր ուսում ու վարչապետական կարողութիւն, բայց ունի տաք սիրտ, անկեղծ բնավարութիւն, ուղղամիտ գործունէութիւն, անարուեստ, բայց սրբաւարութիւն ու համարձակ խօսք, մանաւանդ ժողովրդանուէր բնավարութիւն: Բարձրանալով, որոնք կը ծածկեն իր ուսումնական թերութիւնները: Խրիմեան ոչ միայն արժարժողն է, այլև ստեղծիչը հայ ժողովուրդի մէջ ազդեցիկ ինքնադիտակցութեան արթնութեան եւ իր արժանի իրաւունքներու պաշտպանութեան գաղափարին: Եւ անկողմած ա՛յլ է իր հայրիկի կոչումին իմաստը:

Եւ յաջորդող երկու տասնամեակներու ընթացքին, ամբողջ Հայութեան սէրը եւ հաւատքը ա՛յնքան զօրաւոր աճած է իրեն հանդէպ — հակառակ պետութեան կողմէ իր գործունէութեանց օտոմանափակումին եւ իրեն անպաշտօն քաղաքացիներու երդաստեղծի վանքը դրկուելուն — որ Խրիմեան ազգին ներկայացուցիչներու միաձայնութեամբ կաթողիկոս կ'ընտրուի 71-72 տարեկանին, 1892: Եւ այդ բարձրագոյն զահուն վրայ կը յայտնուի ազգին քաջարի հովիւը, պաշտպան մանաւանդ իր Աթոռի եւ ժողովուրդի կալուածական ու դպրոցական իրաւունքներուն՝ բնդդէմ ցարական կառավարութեան հետապնդած սեղծումի ու ենթարկումի քաղաքականութեան<sup>(\*)</sup>:

(\*) Հայց. Եկեղեցւոյ տասնամյակական պաշտպանութեան իմաստով՝ լատ յատկանշական գրուածք մըն է, զոր անձամբ լսած ենք յեղափոխական Ռոստոմիրեանի՝ Տիկ. Եղիսաբէթ Զօրեանէն, 1890ին, երբ Զուիցերթոյ Հայ Դպրոցացի մէջ միառին ուսուցչութիւն կ'ընէինք: Տիկ. Զօրեան կը հաւատէր, թէ ինքն այն անձամբ լսած էր այդ ստույգ գրուածքը, ըստ որուն՝ երբ Խրիմեան ցարական մայրաքաղաքը կ'երթայ, Ռուս Օրթոտոքս Եկեղեցւոյ պետը հարց մը կը դնէ իրեն՝ խոհարար ժպիտով մը.

— Անդդ Ամենապատուութիւն, ինչո՞ւն ենք Հայոց Եկեղեցւոյն խորամը այնքան աւելի բարձր է շինուած, քան մեր Որթոտոքս Եկեղեցւոյ խորամը...

Ու Խրիմեան՝ պատրաստարան ու նոյնքան ժպտուն՝ կը պատասխանէ.

— Անդդ Ամենապատուութիւն, մեր Եկեղեցւոյ Մ. խորամը բարձր է, արդիւնաւոր ճեղքներով, իսկ եթէ դուք բարձրացնէիք ձերիմը, մենք կը ցածցնէինք մերիմը... Սակայն երբեք երկուքը չեն կրնար իրարու համեմատար ըլլալ...  
Բ. Ն.

Ձինք պաշտօնյա շափ կը տիրեն ո՛չ միայն հայերը, այլև՝ այլազգի բր-  
նիկները Հայաստան աշխարհին: Յուզիչ է գրուագը Ա. Թէրզիպաշեանի դեր-  
քին մէջ այն թւարտ նահապետին, որ կը դիմէ Հայոց Հայրիկին, որպէսզի  
զինք եւ իր մարդիկը քրիստոնէայ մկրտէ: Փոքր գրուագ մը, որ ցոյց կու  
տայ, թէ ի՛նչ մեծ հետեւանքներու կրնար հասնիլ Հայ եւ քիւրա եզրայրու-  
թեան քաղաքականութիւնը, զոր իր Ռուջոնոպոթեան օրերէն ի վեր հետա-  
պնդած էր Ռիմեան, եթէ միայն այս երկու բախտակից ժողովուրդները  
հանշնային դերար, եւ փոխանակ Համիտեան կառավարութեան դրոշմներով  
խորտու դէմ լարուելու՝ ներգաղնակէին իրարու բնական շահերը եւ հաւաքա-  
կան դործունէութիւնները:

Ռիմեան շարունակ կը քարոզէ ու կը տեղեկագրէ թւարտերու կրթու-  
թեան ու բարեկարգութեան մասին: Միայն լուսաւորութեան ու բարեկար-  
գութեան ճամբով էր, որ թւարտերը պիտի դադրէին հայոց դէմ աղէտ բլլա-  
լէ, կամ Համիտեան կառավարութեան ձեռքին մէջ շար դործիք դառնալէ:  
Պատրիարքական շրջանի իր նշանաւոր Վրապիւր Բարեկարգութեանց տեղե-  
կագրին մէջ յաճախ կը խօսի ու Յաւելուտին մէջ դարձեալ նոյնը կը շեշտէ.

«Սակայն, ո՛չ միայն կրօնը, այլև տէրութեան ու մարդասիրութեան պար-  
տիք կը պահանջեն, որ թւարտին եւս արժանի համարուին տէրութեան շնորհաց ու  
կրթութեան: Ուստի՝ ձեռնարկուած բարեկարգութեան մէկ զորակ ու բնական մի-  
ջոցն այս է, որ տեղական կառավարութիւնք թւարտերու պատկազ կրթութեան հոգ  
տանին: Գէթ Թոսունքերու զուտկները կուտակուի թեանց մէջ հաստատուած ՎՄԵ-  
ԲԵՎԵ-ԲԻՆՆԻՆԻՆԻՆ տէրութեան զորոցներուն մէջ ընդունիլ, պէտք կ'ընէ ուսումը  
առնել, որով միայն հնար է թւարտերու վայրենի բարքը անգործի ու բարեգիւ  
եւ զանազ հեղուկեան քաղաքակրթութեան մէջ գնելով՝ տէրութեան եւ երկրին հաւա-  
տաբոժ ժողովուրդը կազմելը»:

Յամանեան կառավարութեան պաշտօնական հաւանութիւնը ապահովե-  
լով, այդ հովանիին տակ հայ եւ քիւրա բարեկամութեան ու զարծակցու-  
թեան մեծ ծրագիր մըն էր առիկա, եթէ սակայն վերածուէր երկուստեք դի-  
տակից ազգային քաղաքականութեան մը: Արդէն թւարտերն ալ Ռիմեանի ան-  
մին հմայքովը շատ դիւրաւ պիտի կարենային հետեւիլ անոր ցոյց տուած  
«բարեկարգութեան» ու բարեկամութեան ուղիին: Վերակոչենք ուրիշ իմաս-  
տալից գրուագ մը Հայրիկի առաջնորդական կեանքէն:

Օր մը, մէկ-քանի թւարտեր, կալառուած ու զաւաղիւր, Հայրիկին ա-  
ռանձին ճամբորդած մէկ պահուն՝ յանկարծ դէմը կ'ենլին, պատրաստ զայն  
զաշունահարելու... Բայց Հայրիկի վեհ ու անխուժ կեցուածքէն կ'ընկճե-  
լին, իրենց ձեռքերը կը դողդաղան, ու կու գան կ'իյնան անոր ոտքին առջեւ.  
— Ներե մեզի եւ օրհնէ... Մենք զրկուած էինք քեզ յապնուելու, բայց  
անա Աստուած մեր ձեռքերը կ'ապեց:

Հայրիկը վեհութեամբ ոտքի կը հանէ զանոնք, ձեռքերնէն սուրերը կը  
հաւաքէ, ու Թոգութեան աղօթք արտասանելով՝ զանոնք կը դարձնէ իրենց  
ճամբուն:

Կարծէք կը կրկնուէր ինչ որ դարեր առաջ Մ. Գրիգոր Լուսաւորչի որդ-  
ւոյն՝ Վրթանէս Հայրապետին պատահեալ էր, զայն սպաննելու եկած, բայց  
ոչն՝ Վրթանէս Հայրապետին պատահեալ էր, զայն սպաննելու եկած, բայց

*ձեռքերին «բռնուած» շարագործներու դրուագով, ինչպէս կը պատմէ փա-  
ւրստու Ռիզախը:*

*Խրիմեանի տնձին մեծ հմայքը իրեն քաշեր ու կապեր է բուրդ դինք  
ճանչցողները, մինչեւ իր խոր ծերութիւնը: Աւետիք Խաչակեան, 1901ին,  
երբ առաջին անգամ կը տեսնէ զինք — մահկութեան օրերէն ի վեր տնչա-  
ցեր էր տեսնել զայն — տպաւորութիւնը կ'ունենայ հայոց հին նահապետնե-  
րէն մէկուն ոգին տեսած ըլլալու:*

«Ամբողջ գիշեր եւ օրս քովի ձայնի, օրս արծուների հայեացքի ազդեցու-  
թեամ տակ էի: Ինձ քուտ էր, քէ ապրում էի մահապետական օրերու, եւ երբեմ-  
կաւթիւնն էի ունեցել խօսելու հին մահապետներից մէկի հետ: Հայ ժողովուրդի յո-  
ւերի եւ տնչանքի կրօն Հայոց Հայրիկը՝ իմ Երեսկայաթեան մէջ միշտ պատմա-  
կամ, կամ՝ աւելի ճիշդ առած՝ առասպելական լուսապատկով էր զարգարեալը:

*Օրմանեանն իսկ, որ վերեւ բսինք, թէ Խրիմեանը «առեղծուածային»  
կը կոչէ, կը փորձէ բացատրել այդ առեղծուածը անոր անձին ու նկարագրին  
դիմումը: Խրիմեանի մահուան առիթով, հաշուեկէիտ մը բնկելով՝ կը վկայէ՝*

«Բարձրահասակ, ամենայ, վեհ դէմքով եւ բառաչ կազմով ամէ մըն էր  
խրիմեան: Բնութեամբ զուարթ, պարագայից յարմարող, ա՛յ խիտաբարեամբ ընկ-  
եւող եւ ա՛յ յազոգութեամբ ճշխացող, արտաքինայարդար ձեւերէ հեռու, միշտ ծղ-  
ուում եւ կատակախօս- հմտութեամբ ազգային շրջանակի մէջ հարուստ, տասպակով  
աւելումով երգիչ մը, որ միմչեւ վերջի առեղծուած խօսող մը ու գրող մը մնաց իմա-  
տալից գիտերով ու գրաւիչ ոճով:

«Երբ ազգային ժամանակակից պատմութիւնը առեղծուածական դէմք մը  
կ'ընդունի, եւ ինձ դէմքերու հանգիտակ անբացատրելի անձնութեամբ մը գո-  
յութեանը կը հաւանի, այն ալ Մկրտիչ Խրիմեանն է անշուշտ, պաշտելի դարձած՝  
իւր Հայրիկ մակդիր կոչմամբը: Հաշուելով իրեն գաւառացի վարդապետ, իրեն  
Տարածայ Առաջնորդ, իրեն Կ. Պոլսոյ Պատրիարք, իրեն Երեսկայաթեան աւագան  
եւ Վարդապետ Վանահայր, իր արդիւններում մուսապետիւնը՝ պատմագիրը կը վա-  
րանի ինչպէ՞ս արդարացնել Խրիմեանի անունի վայելած ընդհանուր համակրութիւնը:

«Բայց իրականութիւն մըն է, որ Խրիմեանի անունը համակրելի եղաւ իւր  
քերութիւններով: Երբ ժողովրդային ըմբռնմանց խորը քափանցեմք, կը տեսնեն  
որ շատ անգամ զգացմունքը մտածումներէն վեր կը քարձարանայ: Խրիմեան գարգա-  
զային եւ օտարագոյի տարրերով ճոխացած չէր: Գործի ճաշակ եւ չափակեցեալ հա-  
մեմատութիւն չէր մանկար, վարչական համարը պակաս ըլլալու չափ էի չէր, հե-  
ռաւանս ու մախտես զգուշութիւնը իւր տպաբեղը չէր, համարու մախտապարտա-  
տութեամբ եւ կշռագատութեամբ ձեռնարկները իրեն սովորութիւն չէին: Բայց ու-  
նէր բնածին ուղիմութիւն մը, որ իր ըմբռնելու եւ յիշելու, որոշելու կարողութիւնը  
կը կազմէր: Ունէր գրաւիչ ոճ եւ ազդեցիկ խօսք, որով գիտէր սիրտներու վրայ Խի-  
րապետի: Եւ ամենում վրայ՝ ունէր անկեղծ եւ ազդիզ զգացում մը, որ ամեն քե-  
րութիւն կը լրացնէր, արեւածը կը շտկէր, եւ որեւէ պակասութիւն կը ծածկէր:  
Ինքը գոյիւն եղած է ազգասիրական եւ հայրենասիրական զգացումներում, որոնցմով  
ազգը տալարեցաւ յիսուն-վաքսուն տարիներէ ի վեր եւ նոր կեանք մերթնեց,  
նոր գործունէութիւն ազգեց եւ նոր առաւելութիւն բերաւ հայ տարրին վրայ»:  
(Օրմ, «Ազգապատմ», էջ 5832, 5834-36):

Բայց կ'ուղէինք նաեւ սա բացառիկ իրողութիւնը նկատի առնել, թէ Խորհրդային մէջ կեդրոնական ամօրը եկեղեցական է: Ինչ զործունէութեանց մէջ ալ գիտենք զինք, ան կը խօսի մեզի իբր եկեղեցական: Ժողովուրդին տէր կանգնած հովիւի մը գրականութիւնն է իրենը:

Եւ սակայն — այս է կարեւորագոյն մեր նկատումը — ինչպէս իր միւս գործունէութեանց մէջ, իր գրականութիւնն ալ չի հակասեր իր եկեղեցականութիւնը: Ան նման, օրինակ, Թիւրքմենի կաթողիկոսին, կամ Խորէն Նարայէրին, որոնց մէջ եկեղեցականը կը նայի դէպի խաչ, իսկ պրագմատիկ՝ դէպի իր եսին զգայութիւնները: Խորմեանի մէջ պրագմատիկ, քարեկարգիչը, առաջնորդը շարունակ կը նայի հոն, ուր պիտի նայէր եկեղեցականը — իր ժողովուրդի լուսաւորութեան եւ ազատագրումի բարձր նախնին:

Մեծ արժանիք է Խորմեանի մէջ իր այս ամօրն միաբնակ: Իր բազմակողմանի կեանքը կենդան աւելի իր մէջ միշտ նոյն անձը: Նոյն ոգիւրը կը բարախէ Հայրիկին ամէն գործին ու գրութեան մէջ: Իբր եկեղեցական, կամ իբր յեղափոխական, կամ գրագէտ, կարելի չէ իր անձը մասնաւոր բաժնել: Խորմեան անկեղծօրէն եւ ամբողջովին ինքզինք տուած է իր կրօնական կոչումին: Միեւնոյն ոգին աւ ձգտումը կը գտնենք իր կեանքի ամէն էջին վերայ: Միաւորուած ու ներդաշնակ կեանք մըն է իրենը, եւ կատարելապէս իր բոլոր կողմերը իրարու հաշտեցուցած ունի: Անձին միութեան այս իրողութիւնը կ'ապացուցանեն իր նպատակի պայծառութիւնը եւ կեդրոնական շատախաղէակ ուղղութիւնը իր գործունէութեանց:

Եւ այստեղ է ազահովարաբ Խորմեանի հմայքին զաղտնիքը, իր բացառիկ անձին գառնող ծառայի լուծումը: Հայրիկը ինքն իր մէջ պայքար ունեցող բաժանալ անձնաւորութիւն մը չէ: Կատարեալ միութիւն մըն է իր տեղը, ամէն տեղ նոյն մարդը, նոյն սիրտը, միտքի նոյն սեւեռումը, հասարակ իր կողմէ գործութիւնը, ամբողջականօրէն ներդաշնակուած անձնաւորութիւն մը, որուն բոլոր կարողութիւնները կը շառաւիղին միեւնոյն կեդրոնի շուրջ: Մէկ կէտի վրայ խառնուած focus եղած է իր հոգւոյն լոյսը, եւ ուտաի ջերմ է ան ու գորաւոր:

Եւ իր անձին բերեղեղեղ պարզութեան շնորհիւ, զժուար գործ չէ ախօր մեղի համար ուրուագծել Խորմեանի գրագէտի գիմաղիծը: Վարազոյրի մը ետեւէն չի խօսիր ան մեղի: Մենք պէտք չունինք ձեռքի՝ Թափանցելու համար իր գրածներուն խորհուրդին: Իր գրականութեան խորհրդաւորութիւնը թշնամուկուած կամ արուեստական սնի մը մէջ չէ, այլ՝ հաղորդած ճշմարտութեան ու հոգւոյ պայծառութեան մէջ: Ան պատկերողն է կեանքի — հայ ժողովուրդի կեանքի — ինչպէս ինք կը տեսնէ ու կը զգայ այդ կեանքը: Ու զովորդի կեանքի — ինչպէս ինք կը տեսնէ ու կը զգայ այդ պատկերը: Իր հոգւոյն ցոթայտի տակէն բխող ջուրի նման յստակ է այդ պատկերը: Իր հոգւոյն ցոթայտէն է իր գրականութիւնը, եւ ուտաի՝ հոգւոյն պէս ալ պայծառ է իրմէ եկող այդ պատգամը:

Ու եթէ մենք այսօր, իրմէ երկու տարւոյնէ ետքը, կ'ուզենք բանալ պատմութիւն գարձած այդ էջը իր գրականութեան, թարմ է անկա աւ լուսաւոր՝ արեան այն գիծով, ուրկէ անցաւ հերոս իր սերունդը՝ էջ մը՝ մազադաթի պէս հնարոյր, բայց սուրբի մը նկարին պէս կենդանի ու հոգեբայ զօրութեամբ:

## Գ.— ԽՐԻՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԵՌՆ ՈՒ ԽԱՒԱԼԸ

Մենք պէտք չունինք ուրեմն դասարան նստելու եւ գրականութեան չափազանց ուսուցչի մը ծուռնկերուն առջեւ էջեր բանալու՝ հասկնալու համար հայրիկի գրականութիւնը, թէ ի՞նչ տէրեր է մղուած գրած է ան, ի՞նչ աղբ-ցութիւններ կրած, որո՞ւն ուղղած է իր խօսքը, իր նիւթը ի՞նչպէս է ձեռնած, ինչպէս միաւորած իր ոճը, կամ արուեստի ի՞նչ ձեւեր է որդեգրած, եւայլն, ի՞նչ անսակ պաշտօնավարժ գրողատի հարցումներ պիտի վարժացնէին իրիմեանը զի՛նքն ալ։ Ընդհանրապէս, այդպիսի հարցումներ պիտի զարմացնէին բոլոր ինքնատիպ գրապէտները։ Գրապէտները կը գրեն, առանց սեռի եւ ար-ւեստի կանխակալ կաղապարներու։ Գրականութեան մաստակաւոր ուսուցիչնե՛րն են միայն, որ կ'ուզեն — ու երբեմն քանադոսիկ պայմանագրու-թեամբ — գրապէտներու գործերը յարժարցնել առ՝ մէկ չափուած, կամ մի՛ւս՝ մէկ արուած կաղապարաւորարին, որ պարզապէս իրենց պատրաստած մէկ արժեքափն է՝ գրապէտները հասկնալու իրենց ողորմելի ճիպին մէջ։ Այսպէս են գրապտները առհասարակ. չեն կրնար հասկնալ գրապէտը, առանց զայն իրենց ձեռքի կանգունո՞վը չափելու։ Տարբեր կը հաշուեն սակայն գրապէտ-ները իրենք զիրենք։ Ուղղեցէ՛ք լաւ գրողի մը ձեռն հարցումը.

— Դուք ո՞ր դպրոցի կը հետեւիք, վիպապա՛շտ թէ իրապաշտ, ռեչպի իրապա՛շտ», թէ...

Եւ ան ժպիտով պիտի պատասխանէ ձեզի.

— Մենք դպրոցի մտահոգութիւն չունինք. մեր սէրն է միայն գրել. մարդիկը եւ իրենց գործերը դասաւորելով «դպրոց» կազմելը՝ կը թուի՝ ձեռք մէկ մտասեւեռումն է։

Ինչպէս Վասպուրականի լեռներուն վերեւ արծիւը կը սաւառնի բարձր, որովհետեւ արծիւ է, կամ հովիւը կը նուագէ իր սրինգը, որովհետեւ հովիւ է, իրիմեան կը գրէ սրտառուչ եւ բմբոստ կամ հողապաշտ, որովհետեւ իր մէջ կը կրէ հայոց աշխարհին պատմութիւնը եւ հայոց ժողովուրդին սիր-տը, որ սրտառուչ է եւ բմբոստ եւ հողապաշտ. կ'ուզէ այդ ժողովուրդը լու-սաւորել, բարեկարգել եւ ազատութեան բարձրացնել։

Իրիմեանի յատուկ սեռ մըն է իրիմեանի գրականութիւնը։ Ո՛չ Սըր-ւանձտեանց կամ Թլկատինցի ու Զարդարեանի դաւառական գրականութիւնն է իրենք, թէեւ ունի այդ շնչաւ եւ ուղեցոյց եղած է անոնց այդ սեռին մէջ, ո՛չ Վարուժանի ու Սիւսանթոյի պիւրկ բմբոստութիւնն է, թէեւ ունի զար-թուցիչ շնորհի նախահնչիւնը անոնցմէ առաջ, Ո՛չ ալ վիպապաշտական արուես-տի նրբութիւնն ունի Բաֆֆիի եւ Ահարոնեանի, թէեւ սիրուն պատկերներու գրաւչութիւնը ցոլացնեն իր պատմումները։

Ի՞նչ է ուրեմն իրիմեանի գրածը, Նախապետական գրականութիւն մըն է, եթէ ընտրիկ իմաստով ուզենք հասկնալ այդ բացատրութիւնը։ Դասա-կանութեան շունչը եւ արդիականութեան կորովը կը միանան իր մէջ, իր նմանը կայ մարդարէական գրականութեան մէջ. լուսաբացի կոչ, յորդոթ, յանդիմանութիւն, պատգամ ու կեանքի անցած մեծ պապիկի խօսք, իր ժա-մանակն է, որ զինք կ'ընէ այդպէս մարգարէաշունչ. ժողովուրդի ինքնադի-տակից արթնութեան ու հայրենի հողին վրայ ամբացման ու ցեղին հարստու-թեանց վերածաղկման հրաւէր մըն է իր գրականութիւնը։

Մենք այստեղ տուած եղանք արդէն բանալի մը՝ հայ գրական սերունդ-ները խումբերու բաժնելու մասին։ Աւելի բնական կերպ է՝ հայ գրականու-

թեան հոռանքները բաժնիլ ժամանակակից ազգային շարժումներու գուգրն-  
քաց խումբերու, քան թէ այդ ժամանակներէ անջատ ու վեր «արուեստի»  
սեռերու կամ դպրոցներու: Մեր գրագէտներն ալ համընթաց քաղած են միւտ  
մեր ազգային կեանքի յեղաշրջումներուն, եւ իրենց գործերուն մէջ կը ցո-  
լացնեն իրենց ժամանակներու յատուկ յեղաշրջումներն ու մտայնութիւննե-  
րը: Օրինակ, 1860-1890 թուականներու գրականութիւնը ճանաչել իրեն  
Ստիվամարթական վերակազմութեան գրականութիւն, այնուհետեւ շարու-  
նակուող շրջանը՝ ազատագրական պայքարներու գրականութիւն, ինչպէս որ  
այդ ժամանակները կը յատկանշուին իրենց յատուկ շարժումներով ու գրու-  
կան ստեղծողործութիւնները համապատասխան կ'ընթանան այդ շարժում-  
ներուն:

Այս առնակէտով, Խրիմեանի գրականութիւնը կը միանայ այն երկու  
խումբերուն, որոնց ձգտումը եղաւ հայ ժողովուրդի վերականգնումն ու ա-  
զատագրումը: Այդ օրերուն, ամէն նոր բացուող բերան հայրենի ազատու-  
թեան երզը ունէր իր շրթներուն:

— Տէ՛ր, եթէ իմ շրթներս բռնաս, ես պիտի երգեմ աղբիս ազատու-  
թիւնը:

Խանդի ու երդի եւ ազգային միամտութեան շրջան էր ան: Երիտա-  
սարդութիւնը կը կարդայ ու կ'երգէ Նալբանդեանի «Ազատն Աստուած»ը,  
Պատկանեանի «Մայր Արաքս»ը, Պէրկիթաշեանի «Եզրայր Եմք մեմք», Նար-  
պէի «Հայ ապրինք եղբարք»ը: Ներշնչումի աղբիւր են Մերենցի «Թողոս Լե-  
ւոնի»ն ու «Թէոդորոս Ռշտունի»ն, Բաֆֆի «Ենեմք»ին երազը ու «Կայծե-  
ր»ու կենդանի նկարագրութիւնները ազգային կացութեան: Ամէն կողմ են հո-  
ղեցունց պատմութիւններ ու թատերգութիւններ, դպրոցներու մէջ, ժողո-  
վրդային բեմերու վրայ, կուսակցական ակումբները, խենթ ու զուարթ եր-  
զեր ու մանկունակ ոգեւորութիւն:

Այսպիսի շրջանին, ահա՛, յառաջ կ'անցնի մէկը, որ ունի շեփոթ մը  
ձեւքին եւ պիտի հնչեցնէ հայութեան բողոքն ու հաւատքը, խառն՝ յոյսով  
ու երազով, որ անապատէն հնչող բարբառի պէս պիտի փոթորիկ եւ սարսէ  
մեծամեծ պալատներու սրահները: Պիտի բերէ աւետիսը ազատութեան, հրա-  
ւէր պիտի առայ հայրենեաց, բայց ապա ծունկի եկած՝ Տէր-ողորմեայի պէս,  
շաւերու մէջէն պիտի ազայ գոյժը ջարդերու եւ աւերներու եւ արիւն կաթի  
իւ քնտրէն: Խրիմեանն է ան, որ համազօրէիլ պիտի ըլլայ իր ժողովուրդի  
ընդհանուր այդ խանդավառութեան ու սարսափին ու յուսահատութեան: Ո՛վ  
է՛ երգած այն օրերուն:

«Եկե՛լ է գայումն, ստիպել սիրումն,  
վարդի քուփին տակ, Հայրիկ քան,  
երգել հայրենիք»:

կամ այն միւտը.

«Հայրիկ, հայրիկ. քո հայրենիք,  
վասպուրական մեր աշխարհ,  
վարդի փոխան Քեզ փաշ բերաւ»:

Վարդի ու փուշի շրջան մըն է իրենց։ Ու տարօրինակութեանց ու հասարակական շրջան։ Ազգին շնորհուրեցաւ Սահմանադրութիւնը, բայց անմիջապէս ասոր հետեւեցաւ հարուածը Զէյթունի գլխուն, 1895ին։ Մշակութային վերածաղկում տեղի ունեցաւ քաղաքացիական ազատութեան օրէնքով պաշտպանուած շրջանակին մէջ, բայց շուտով վերածուեցաւ քաղաքական լուսաւորութեան կանխահաս շարժումի մը, որ ճակատները հակադրեց հայ եւ թուրք տարրերու միջեւ։ Համաժողովներով միջազգայնացուեցաւ Հայկական Հարցը, բայց անկէ օգտուողները պիտի բլլային օտա՛ր պետութիւնները, որոնք Հայութեան արեան գետով իրենց առանձնաշնորհումները պիտի սակարկէին օսմանեան պետութեան հետ։ խոստացուեցան բարենորոգումներ, բայց սոսկալի ջարդերու ծրարիրներու փոխուեցան, 1895ական թուականներէն սկսեալ։ Վերականգնեցաւ Օսմ. Սահմանադրութիւնը, բայց կիլիկիոյ հայոց Վարդի գետով, 1908ին։ Ու դեռ պիտի գային նոր երազներ ու յաջորդէին նոր աղէտներ։ Եւ այսպիսի շրջանին, Հայրիկի գրականութիւնն ալ տարօրինակ էր ժայնը պիտի խառնէր ընդհանուր խառնաշփոթութեանց։ Երբ մը՝ վարդի ու փուշի։

«Հայուն քաղաքական միտքը, այդ օրերուն, դեռ կազազարուած չէր, — կը վկայէ Հայրիկի գործերը առէն օր տեսած վկայ մը՝ Ա. Թէրզիպաշեան, — Եւսիլի Եւսէմ Է, որ յեղափոխական գրականութեան եւ Խոր յաջորդօք կուսակցական գործունէութեան իրը հետեւեալ, հայուն մէջ շեշտուեցաւ, այնքան փակատաքու-կանօրէն, իտէալիզմը եւ ասմալիզմը, որոնք հետզհետէ ա՛յն աստիճանը պարարե-ծող գտած անք մէջ, որ՝ իր անհատական կեանքին ալ գործին մէջ պետականական եւ հեռաւոր համարուած հայը՝ համայնի կեանքին մէջ դարձաւ չափազանց միա-միտ եւ յախուած»։ (Ա. Թէրզիպաշեան, «Արծիւն բոյնի մէջ», էջ 61)։

Ու խորմեան Հայրիկ ինքն ալ՝ բնութեամբ դադադարապաշտ ու լաւատես՝ հակեցաւ ու խառնուեցաւ զգացական այդ հոսանքին։ Իր մէջ, դեռ-թէ դիւրահաւատ ընդխառնումը կայ գրականութեան ու քաղաքականութեան։ Ինչ որ չէր կարելի լուծել դիւանապետութեամբ՝ դիւրաւ լուծած է գրակա-նութեամբ — կարծած է լուծել։ Այդ պատճառով՝ կը տեսնենք իր էջերուն մէջ բողոք, խաղաղասիրութիւն, սպառնալիք եւ ազգային տենչ միաժամա-նակ։ Երբեմն կու լայ, երբեմն կը փոթորկի, երբեմն յանկարծ կը դառնայ իր ժողովուրդին հին եւ աւանդական ամբողջութիւններուն, բարբերուն ու հողին, ու կը կանգնի միշտ յուսալից։

«Եւ, — բտր է անգամ մը խորմեան Հայրիկ Պոլսոյ Ազգ. ժողովին մէջ, — եւ Հայաստանի ցուոց պատկերն եմ»։

Պատկեր Հայաստանի ցաւերուն։

Իր դամբանաքարին վրայ ալ՝ կ'ըսեն՝ դրուած է այդպէս։

«ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ»

✱

խորմեանի երկու «Հրաւիրակներէն առաջինը, «Հրաւիրակ Այրարա-նան», պանդուխտ Հայոց ուղղուած սիրտի խօսքեր ունի։ Հայրենիքի կարօ-





Ահա հատուած մը այդ քերթողութեան առաջին մասէն, աշխարհարարի վերածուած մեր կողմէ.

«Քեզի, քեզի, արեւելեան պերճ իմ աշխարհի Հայաստան,  
կը հրաւիրեմ քու արդիւններդ արունք պանդուխտ եմ հետաքսած.  
Գիտե՛մ՝ ամռանց կը կարօտիս դուն իբրեւ մայր արգելադրոյս,  
Բայց առաւել քու գաւակներդ իրե՛նք քեզի եմ կարօտ,  
Որոնք հրէ՛ն ա՛յ մարմնեղէն աչքերով, գէթ անձկայրեաց սիրտի սիրով,  
Կու գան ճեմել քեզ՝ հայրենի վայրերդ դաւար ու տարփատեմը:  
Հնչեցէ՛ք արդ, հովե՛ր, իբրեւ Նոյեան երկնայնայն դարերուն,  
Ջիւս ձեր քեւին առած՝ տարէ՛ք Այրարատին իմ հայրենի.  
Եւ ինձ նման սիրտի քեւով քեւած՝ եկէ՛ք դուք հայեր,  
Որ աշխարհի ոլորտներուն կը քափառիք տարասփիւռ.  
Ահա ես ձեզ հրաւիրակ՝ ձեզ կը տանիմ հայրենիք»:

Ապա կը թռի, ցոյց կու տայ Այրարատը իր գեղեցկութիւններով, կանգ  
կ'առնէ Անիի աւերակներուն առջեւ, ուրկէ՛ հին հայրերու ուրուականներ կը  
խօսին հետը: Կ'անցնէ Արտաշատ, Սեպուհ Հեռ, Մեսրոպի հանգստարանը՝  
Ուլական, նաեւ Վարդանի նահատակութեան վայրը, ու Տարօնի մեծ աշխարհ-  
հը, Վարդազ ու Լիմ ու Կոտուց վանքերը. մէկ առ մէկ գերեզմաններէն դուրս  
կը կռչէ պատմական յիշատակները, կը օղբոյցնէ՝ յուշելով հանդերձ: Ի՞նչ  
էք շունչով, օրինակ, կը խօսի Մեսրոպի շիրմին առջեւ (կարդանք աշ-  
խարհարարով):

«Այլ ես այնպէս քու աշակերտդ եւ աշկերտիդ քերթողաբօր,  
Անոր նման՝ այսպէս նստած քովը քու լոյս շիրմիդ,  
Բայց ա՛յ անոր ողբի կանչով, այլ աւետի՛ս կը հնչեցնեմ,  
Ո՛վ դու դայիր շնորհափառ, ով հոգեհրաշ Հայր Սուրբ Մարտի.  
Ահա քու այն ծակեղարը կրկին դարձաւ ի Հայաստան...  
Որ քեզ եւ քու աշակերտացդ՝ կը հիւսէ պսակ մօր գովեստով,  
Ու կը հրաւիրէ դարձութեանդ՝ շատ ու շատ մօր աշակերտներ անձնուէր:

Ու երբ իր հայրենի պաւտը Վասպուրական կը հասնի, կ'երգէ.

«Եկած ահա հասած եմ քեզ, ո՛վ դուն վայր իմ ծննդեան,  
Գաւառ Տոսպեան Վասպուրական եւ հողակեալ Բաղաբէ՛ր՝ վաճ,  
Ձեռնդ ահա երգի կ'առնեմ ու կը մտազեմ երկար հնչմամբ»:

«Հրաւիրակներուն երկրորդը, «Հրաւիրակ երկրին Աւետեաց», նոյն  
ունով ու նոյն ծրագրով տրուած, բայց այս անգամ ուխտաւոր կը պատգնէ Ս.  
Երկիրը, Երուսաղէմ Քաղաքի մէջ եւ շուրջը: Կը սկսի Նազարէթ քաղաքէն,  
ու հետզհետէ հետեւելով Քրիստոսի քայլերուն, կը շրջի ամբողջ Ս. Երկիրը:  
Եօթը երգեր են ամբողջը, եւ ամբողջ պիտի լինի կերպով մը՝ «Յիսուսի Կեանքն»  
է, քերթողաբար դրուած: Երբ կը հասնի Յիսուսի ծննդեան այրին, տնայնա-  
քով կը համբուրէ քաղաքը, ուր լոյսը խանձարուրուեցաւ: Յետոյ, կը յառա-  
ջանայ վայրէ՛ վայր, Տիրեբեական ծովէն, Յիսուսի անցած լեռներէն, քա-

դաքնեբէն, կը հասնի մինչեւ Չարչարանաց Շաքաթը եւ Յարութեան ու Հաժ-  
րարձման տեսարանները, ու յաղթական տարածումը Քրիստոսի իշխանու-  
թեան մինչեւ համայն աշխարհի տարածութիւնները:

Օրինակ, ի՞նչ պեղեցիկ է ու սրտաբուխ իր աղօթքը Քրիստոսի լոյս  
պերեզմանին առջեւ ծունկի եկած: Աստուածային լոյսի ու սիրոյ փոխարէն,  
որ իջաւ աշխարհ, բանաստեղծը չունի տալիք ուրիշ բան, քան իր փոքրիկ,  
բայց սրտաբուխ սիրտը: Կարգա՛նք դարձեալ աշխարհաբարձ վերածուած:

«Մինչդեռ մանուկ էի տրիսաւ, մէջս քաճուցիւ կայծր սիրոյդ,  
եւ վառեցիք ճրագը խօսքիդ, որ լոյս կու տար կեանքիս շաւղին:  
Արդ նա տեա հասումն կեանքի քեւակոխած դեռ կարօտ եմ քու լոյսիդ-  
հաւար է շուրջս աշխարհ՝ եթէ քու լոյսդ չվառի մէջս:  
Տէ՛ր, մի՛ հաւնեք հոգիդ ինձմէ մինչեւ իջնեմ ես մահաւան:  
Տա՛ւր ինձ արեւ, որպէսզի ես գիեզ երգեմ, լուսաճապա՛ւ:  
Որքան ասեմն հոգիդ խօսի իմ մէջս՝ պիտի երգեմ քու փառքդ,  
ու թէ մահն ալ կոտորէ գրիչս ու խորտակէ ճնարն հոգւոյս,  
նա դարձեալ իմ գերեզմանէս կ'երգեմ քու սէրդ շնորհալոյս:  
Ուրիշ ի՞նչ տրիտուր կրնայի տալ, ո՛վ մեծատուր շնորհաց աղբիւր,  
Ամբաւ սիրոյդ քու փոխարէն:  
— Ունիմ սիրտ մը. գա՛յն կու տամ քեզ»

Բ. ԵՂԻԱՅԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)



## ԷՕԺԷՆ ԻՈՆԵՍԲՕ

Թ Ա Տ Ր Ո Ն

Ե Ի

ՀԱԿԱ - ԹԱՏՐՈՆ

Նոճէն Իոնեսքոյի նուիրումն Մարթին Էլիին՝ այս ուսումնասիրութեան առաջին երկու գլուխները լոյս տեսան Վազինքի անցեալ տարուան թիւ 10 եւ 11-12 թիւերուն մէջ: Շարունակութիւնը ուղացաւ տեղի անձկութեան պատճառով: Ամբողջութիւնը, որ հայացումն է Վազինքի երիտասարդ խմբակի անդամներէն Գեորգ Զինպալեանի եւ Էյո Սարաճեանի կողմէ, պիտի ներկայացուի յաջորդաբար, առանց ընդմիջումի:

ԳՐԻՑ՝

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻ



Շուպերթ մանր քաղօրհնի մըն է, որ Հանդարտորէն կ'անցընէ իր երեկոն կնոջ հետ, որ զուլպաներ կը կարկտէ: Թատրոնի Հանդէպ իր տեսակէտները կ'ենթարկուին ամօթիլական քննարկումի: Կը յայտնուի ռճրազործներ երեւան Հանոզ բաժնի ոստիկաններէն մին: Ան պարզապէս եկած է փնտաւելու դրացիները, որոնք տունը չեն: Ոստիկանը կ'ուզէ ստուգել, թէ Շուպերթի յարկարաժնին նախորդ վարձակալը, «Մալլոթ» իր անունը «Թ»-ով կը հեզէր, թէ «Տ»-ով: Շուպերթն երբ ներս կը հրաւիրեն ոստիկանը, որ երիտասարդ եւ բարեձեւ անձ մըն է: Բայց ան իր ուր ըլլալը ստուգելէ առաջ, կը դիտակցի, թէ Շուպերթ երրորդ աստիճանի գոհ մըն է: Ան երբեք ճանչցած չէ Մալլոթը, կամ Մալլոտը, բայց ինք հրահանգ ունի Շուպերթի ենթադիտակցութեան մէջ պնդելու եւ ստուգելու հարցին պատասխանը, որ պարզապէս հոն կը գտնուի: Ոստիկանը, հոս, հոգեվերլուծող մը կը դառնայ, յայտնաբերելով

Թատերախաղի եւ հոգեվերլուծական տրամալի մէջ եզոզ տարբերիչ յատկութիւնը:

Այն ատեն, երբ Շուպերթ աւելի եւ աւելի կը խորասուզուի իր ենթադիտակցութեան յատակը, կ'ինք՝ Մատլէն ինք եւս կ'ենթարկուի փոփոխութեանց: Ան նախ՝ կը դառնայ մոլորեալ մը, ապա՝ պառաւ կ'իյն մը, եւ վերջապէս՝ ոստիկանին հոմանուհին: Շուպերթ ա'յնքան կը խորանայ իր ենթադիտակցութեան մէջ, որ խորտակելով ձայնի եւ տեսողութեան սահմանները՝ կ'աներեւութանայ: Կրկին երեւան եկած ատեն, ան կը վերածուի մանուկի մը, Մատլէնը կ'ըլլայ իր մայրը, իսկ ոստիկանը՝ հայրը: Դիւրբերբ բեմը, տրամային մէջ խաղալով իր սրտնումը, մինչ Մատլէնն ու ոստիկանը իր Հանդիսատեսներն են: Բայց Շուպերթի ամբողջ տեսածը լայնաբախ փոս մըն է: Փորձեր կ'ըլլան ղիկնք կրկին վեր բերելու փոսէն, բայց ան չատ խոր ինկած է եւ

digitised by

A.R.A.R.@

այժմ կամաց-կամաց կը բարձրանայ, կը սլանայ աւելի բարձր, քան Մոն Պլանը, և օդին մէջ մնալու վտանգին մէջ է: Նոր տիպարներ կը սողոսկին խաղին մէջ: Նախ՝ բեմին անկիւնը նստած կին մը կ'ե-րեւայ, որուն միւսները պարբերաբար կը դառնան եւ կ'ուզեն սա խօսքը — «Այն-պէս չէ», տիկին»: Ապա՝ ուրիշ տիպար մը, մօրուսաւոր մարդ մը, Նիքոլա տ'էօ անուամբ (ոչ անշուշտ Ռուսիոյ վերջին ցարը՝ Նիքոլա Երկրորդը), որ խօսակ-ցութիւնը վերատին դէպի թատրոն կը բերէ, մինչ Շուպերթ կը շարունակէ Մոլլոթի աւրելութեամբ ունեցած իր անբախտ հարցը:

Նիքոլա նոր տեսակի թատրոնի մը յարմար տիպար մըն է, որ կը ներգաշ-նակուի յայտնութիւններու արդի ողբի ընդհանուր հոսանքին... Մենք պիտի ձերբազատուինք նոյնութեան նշանաբա-նէն եւ տիպարի միութենէն... Իրեւ նիւթ եւ շարժառիթ՝ չխօսինք անոնց մա-սին... Այլեւս ո'չ արամա եւ ոչ ալ ող-բերգութիւն. ողբերգութիւնը կը վերած-ւի կատակերգութեան, կատակերգութիւ-նը՝ ողբերգութեան, եւ կենսքը կը դառ-նայ աւելի կենսութիւն... Ասոնք, ան-շուշտ, Իոնեսկոյի քաջածանօթ տեսա-կէտներն են, երեւութապէս թեթեօրէն դաւժնաւանացուած: Վերջապէս, այս ամէնուն խաչ պատճառով, Նիքոլա կը խոստովանի, որ չ'ուզեր գրել: «Մենք ու-նինք Իոնեսկոն եւ ատիկա կը բաւէ»:

Այդ միջոցին, ոստիկանը հասի մեծ քանակութեամբ մը կը կերակրէ Շուպեր-թը, կասեցնելու համար իր յիշողութեան լայնեւթի փոսը: Նիքոլա տ'էօ յանկարծ կը դառնայ ոստիկանին, որ կը գալար-ւի ցաւէն եւ կ'անք կը հայցէ, բայց ա-նողջաբար կը դաշունահարուի նոյնինքն Նիքոլայի կողմէ: Ան կը մեռնի պոռա-լով. «Երկար ապրի ներմակ ցեղը»: Մատչէն, որ սուրճ կը բերէր այդ միջո-ցին, ի տես դէպքին՝ կը ցնցուի եւ ձեռքին՝ պտուածները կը թափին, լե-ցընելով ամբողջ բեմը: Մատչէն կը

իշնցնէ իրենց, թէ տակաւին չեն գը-տած Մալլոթը: Ուրեմն, Նիքոլա կ'առ-նէ ոստիկանի դէրը եւ կը սկսի հացով կերակրել բողոքող Շուպերթը: Ոստիկա-նին պէս, Նիքոլա պարզապէս իր պար-տականութիւնը կը կատարէ: Ան պար-տականութեան զո՛ւ մըն է, ինչպէս Մատ-չէնը, ինչպէս Շուպերթը, ինչպէս բոլո-րը: Ի՞նչ պարտականութիւն: Թատերա-խաղին սկիզբը դրուած հանելուկին լու-ծում մը փնտռելու իրենց ճիղին մէջ ա-նոնք բոլորը կը նմանին իրարու: Ըլլա-լով տիպարներ թատերախաղին մէջ, ա-մէն պարագայի, պէ՛տք է դռնէն լուծու-մը: Անոնք ստիպուած են պատասխանե-լու հարցումին, թէ Մալլոթ իր անունը «Յօ»-վ կը հեղէր, թէ «Տօ»-վ: Որովհե-տեւ, այս պարագային, մենք կը դառն-ւինք «չիմեռու-արամին» իշխանութեան տակ:

«Պարտականութեան գոնքը» (Vic- times du Devoir) Իոնեսկոյի նախախրած թատերախաղերէն մէկն է: Անիկա կը գրադի Իոնեսկոյի սրտին ամենամօտիկ նիւթերով, այսինքն՝ թատրոնի հակառ-ակադամներու եւ սահմանափակում-ներու հարցով: Ոստիկան-հոգովերլուծու-ող ռաեղծուած է՝ առաջարկելու համար, որ գոյութեան խորհուրդները կրնան լուծուիլ: Հիմշ կը վերաբերի ինձի, — կ'ըսէ, — կը մնամ Արիստաւէիան քը-րամաբանութեամբ, իրաւ՝ ինքզինքիս հանդէպ, հաւատարիմ՝ պարտականու-թեանս, եւ յարգալիր՝ իմ գործատէրե-րու և նկատմամբ... Եւ չեմ հաւատար ան-հեթեթին, ամէն ինչ իրարմէ կախում ու-նի, ամէն ինչ իմանալի կը դառնայ մա-մանակի ընթացքին... Ենթադրեան-քիւն մարդկային մտքի եւ գիտութեան նուաճումներուն: Բայց Շուպերթ, հա-կառակ անոր, որ կը խորանայ իր ենթա-գիտակցութեան մէջ, այնուամենայնիւ, չի կրնար լուծում մը գտնել հոն: Կը գտնէ ուշադրութեան լայնեւթի փոս մը միայն, հոռու՝ գոյութեան առեղծուա-ծին թաքուն լուծումը պարփակելէ, եւ անոր մտքին ենթադրական կանաչ

կը վերածուի անյատակ փոսի մը, բացարձակ դատարկութեան մը:

Ինչպէս Սերժ Տուպրովսկին մատնանշած է, թերեւ իոնենքոյի գործին չըւերուած ցարդ ամենախոր աւտումասիրութեան մէջ, Փրէօյտեան Հոգեվերլուծումը կը հակադրուի Սարթրի գոյապաշտական դոյաբանութեան եւ Հոգեբանութեան: Դիտումաւոր կերպով կամ ոչ (չափ հաւանաբար երկրորդը այս պարագային), Իոնենքո Հոս կը լուսարանէ Սարթրի առաջադրութիւնը, թէ՛ մարդը գոյութեան մէջ փաս մըն է, թէ՛ ան «ոյն» արարածն է, որուն միջոցաւ ոչընչութիւնը մօտէ կը գործէ աշխարհ եւ թէ՛ «գիտակցութիւնը էակ մըն է, որ իր գոյութեան մէջ գիտակից է իր գոյութեան ոչընչութեան»: Մարդը ոչինչ է, որովհետեւ ան ունի բնորոշութեան ազատութիւնը եւ ուրեմն ա՛յն է, ինչ որ է ինքզինք ընտրելու արարչին մէջ — մընայն կարողականութիւն մը, քան իրական գոյութիւն մը: Ոստիկանին եւ ապա Նիքոլա ա՛նիօյի կողմէ արուած հացի ոչ մէկ քանակ կրնայ, որեւէ, ինչպէս Տուպրովսկի կը հաստատէ, լեցնել Շուպերթի գիտակցութեան պարապ փոսը, կամ սալ անոր «հիմնական գոյութեան մը մտածումը»:

Բայց եթէ դարձեալ մէջըրենք Տուպրովսկին, թէ՛ գիտակցութիւնը ու լընչութիւն է, ապա ուրեմն անհատականութիւն եւ նկարագրի կ'անհետին ի խրեղի լաւին: Եթէ մարդ կրնայ փոխել ինքզինք կեանքի ամէն մէկ զէպի առիթով, նկարագրի վերջնական ըմբռնումը իրեւ անվերծանելի էութիւն — պղատոնական դադափար — իւրաքանչիւր անհատի մօտ կ'անհետի. ինչպէս Նիքոլա ա՛նիօ կը յիշէ այս պարագան իր «Պարտականութեան գոհերը» անուն թատերախաղին մէջ — «Մենք իմեզիմենք չենք, ամենատակաւորիւմ գոյութիւն չունի: Մեր մէջ միայն ուժեր կան, որոնք կա՛մ իսկապէս են եւ կա՛մ հանրապէս չեն... Նկարագրները կը կորստանան իրենց ձեւը պատշաճականութեան

թեան տօնաւորեան (formlessness) մէջ: Իրաքանչիւր տիպար իմեզիմենք այնպիսի է՝ որպէս ուրիշ մը: Շուպերթ փաշտուն կերպով դրած է յաջորդականութիւնը զէպի մարդկային էութեան խորութիւնները, եւ զէպի երկինք անոր հետեւող հրեղէն թռիչքը ցուցադրութիւն մըն է այս առաջադրութեան ռալին: Մինչ կը հասնի խորութեան եւ բարձրութեան զանազան աստիճաններուն, կը վերածուի տարբեր տիպարի մը, որ անհրաժեշտաբար նախկին տիպարներուն մէջ չի մնար: Միաժամանակ, իր կնոջ նկարագրին ալ կը կրէ կարգ մը փոփոխութիւններ: Երկու պարագաներուն ալ, երբ Շուպերթ կը տեսնէ տարբեր Մատլէն մը՝ իր անձին տարբեր մակարդակներուն վրայ, եւ նաեւ երբ իմե՛ք Մատլէն կ'ըլլայ տարբեր անհատականութիւն մը, կը պատահանէ իր նկարագրի փոփոխութիւններուն: Օրինակ, երբ Շուպերթ փոքրիկ մը կ'ըլլայ, կրնէ՛ք Մատլէն կը դառնայ տնոր մայրը եւ այսպէս կը շարունակուի:

Տուպրովսկի յօդուածը հիմնուած է ա՛յն ենթադրութեան վրայ, որ Իոնենքո կը կերպրէ տարբեր այս Հոգեբանութիւնը եւ հեղինակի կ'ենթադրէ Փրէօյտեան Հոգեվերլուծումը: Հաւանական է նաեւ, որ Իոնենքո կը հեղինէր թէ՛ Սարթրը եւ թէ Ֆրէյտը: Ի վերջոյ, երբ Նիքոլա ա՛նիօ, մարդկային նկարագրի չեղուկ համարող անձը, սպաննած է Փրէօյտեան հետազոտութիւնը, անձնապէս կը վերսկսի Մատլէի փնտռութիւնը եւ կը շարունակէ հաց թխել Շուպերթի կոկորդէն վար: Այլ խօսքով՝ երկու տեսարանները կրնան փոխարինել զիրար, եւ Շուպերթ, փոքր մարդը, մէկուն բռնականալութեան տակ կը տանջուի ա՛յն քան, որքան միւսին իշխանութեան տակ: Միշտ վտանգաւոր է իոնենքոն շատ լուրջի առնել: Միւս կողմէ՛ք իր փորձառութեան մեծ մասը կը թուի հետեւած ըլլալ հակահոգեբանական տրամային, հերքելով հարցերու պատրաստի լուծումներ, զորս ինք կ'առաջադրէ եւ իրեւ անհատական էութիւն կ'ընդունի

նկարադրի սուրբ գաղափարը, օրինակ, Նիգոլա ա՛հոյի մեկնաբանուած տեսաւորանք: Բայց «Ոչ»ի հեղինակին, Իոնեսքոյի համար գոյուար պիտի չըլլար հաւատք ընծայել եւ հեզնել միտածանակ իրարամերժ իրերու ինքնութիւնը:

«Պարտականութեան գոհերը», յաւանանդէպս թատերգութեան հանդէպ Իոնեսքոյի ունեցած տեսութիւնը ներկայացնող պարզ թատերախաղ մը չէ (Մոլիէրի «Էմփրուփիւ տը Վերսայլ» (Impromptu de Versailles) չափին մէջ առաջինն է իր տեսակին մէջ): Անիկա հողերտնական եւ փիլիսոփայական հարցադրում մը չէ միայն, կամ նման հարցադրումի մը զանաւանդանք, աւելի շուտ՝ յաճախակի մղձաւանջ մըն է՝ իր հեղինակին անհեթեթեան փորձառութեան եւ գոյութեան ժապին խորապէս զգացում տառապադին արտայայտութիւն մը: Իոնեսքո, Փաֆլայի եւ Պէճէթի նման, գլխաւորապէս մտահոգուած է լինելութեան իր սեփական զգայնութիւնը հազորդելու նկատմամբ, ըսելու համար աշխարհին, թէ ի՛նչ կը թելադրէ այդ զգայնութիւնը, թէ՛ ի՛նչ կը նշանակէ այդ իրեն համար երբ կ'ըսէ. «Ես կամ» եւ կամ «Ես կ'ապրիմ»: Այս է մեկնակէտը իր բոլոր գործերուն:

«Գիտակցութեան երկու անկումներ» կացութիւնը հիմը կը կազմեն բոլոր թատերգութիւններու: Այդ երկու հիմնական գագաւմներն են մընայնոյնին զգացումը, ունայնութեան եւ գոյութեան յորդումը, աշխարհի անհրաժեշտ թափանցիկութիւնը եւ անթափանցիկութիւնը... Անգաւորին ըզգայնութիւնը ծնունդ կու տայ անձկութեան, այսինքն՝ գլխապտոյտի: Բայց երբ այս բոլորը կրնան պերնախօս դառնալ, անձկութիւնը յանկարծ կը վերածուի ազատութեան: Գիտակցութեան այս վիճակը շատ ինքնադէպ է: Ես յաճախ կը գտնուիմ հակասական զգացումի մը տիրապետութեան տակ... Թեթեւութիւնը կը վերածուի ծանրութեան, Թափան-

ցիկութիւնը՝ խտութեան, աշխարհը ծանր կը կշռէ ու տիեզերքը կը ճզմէ գիւ: Վարագոյր մը, հաստաբետ պատուար մը կը կանգնի իմ եւ աշխարհի միջեւ, իմ եւ իմեզիմքիս միջեւ. Ուրիշ կը լեզնէ ամէն ինչ, կը գրաւէ ամբողջ միջոցը, իր ծանրութեան տակ կը բնաջնջէ ողջ ազատութիւնը... հոսքը կը փշրուի...»:

Նիւթին բազմացումը (proliferation) աթոռներ, հաւկիթներ, կահեր («The New Tenants»ի մէջ) կամ, այս պարագային, Մատլէնի սուրճի գաւաթներուն գիտակցութեան ծանր, զանդաղ, յուսախար եւ ընկճուած վիճակին արտայայտութիւններէն մէկն էր: Նիւթին բազմացումը կ'արտայայտէ «միասնութեան թանձրացումը, հակահոգեկան ուժերուն յաղթանակը»: Եւ երգիծանքը միակ ազատագրումն է այս անձկութեան:

«Պարտականութեան գոհերը» յրստակօրէն կը պատկանին Իոնեսքոյի զարգացման ընթացքին ունեցած ընկճուած շրջանին: Թատերախաղը առաջին անգամ ներկայացուած էր 1953ի Փետրուարին, Ժագ Մոլիէրի կողմէ, երիտասարդ բեմադրիչ մը, որ հետագային վերականգնացուց Իոնեսքոյի «Աքտիւն»ը: Այն եօթը կարճ թատերախաղերը, զորս ժագ Փոլիէրի ներկայացուց այդ տարուան Սեպտեմբերին «Լիւշէթ» անուն փոքր թատերասրահին մէջ, մեծապէս թեթեւ էին, երգիծական եւ բարեհոնչ: Անոնցմէ միայն երեքը՝ «Իմեզնալարժի սալոնը» (La Salon de l'Automobile), «Ամուսնութեան թեկնածու երիտասարդ աղջիկը» (La Jeune Fille à Maitre) եւ «Ուսուցիչը» (Le Maître) յոյս տեսած են: Իսկ միւս չորսը՝ «Զայն կը ճանչնա՞ք» (Le Connaissez-Vous?), «Բանդա՞նք» (Le Rhume Onique), «Զարմաւիշ-հարա» (La Nièce Epouse) եւ «Մեծ ջերմութիւնները» (Les Grandes Chaleurs) (Քարաճիւղ անուն ունեւանցի թատերակին գործին մէջ պատշաճեցումը) կը թուին կորսուած ըլլալ՝ ձեռագիրներուն հետ:

Յիշատակը երկրորդական թատե-

բախագեր են, քապարէի յարմար սէշններ: Այսուհանդերձ, անոնք շատ յատկանշական են ցցուն կերպով կը բացայայտեն իոնեստոյի երգիծական թեքիքը: «Ինքնաշարժի սայուն» անուն թատերախաղը իրեն խարխուլ ունի մոքաբարձրութեւն մարդ արարածներու միջեւ հղած տարակարծութիւնը: Գնողը կը հեծնէ նոր սայլ մը, որ կը պտտկանի իզական սեռին եւ որուն հետ կ'որոշէ ամուսնանալ: Յուշարարը լեցուած է աղարակի բակին մէջ ցուցադրուած կտուքերու աղամուկով: «Ամուսնութեամբ քեկնածու երիտասարդ աղջիկը» թատերգութեան մէջ երգիծանքի նիւթը անկնկալ մը կը պարփակէ. կին մը կը վերլուծէ իր երիտասարդ եւ անմեղ աղջիկը, որ նոր աւարտած է ուսումը: Հոս կը յայտնուի երիտասարդի մը անմեղութեան վրայ կառուցուած անակնկալը: Ի վերջոյ աղջիկը երեսն կու դայ. «Երեսուն տարեկան մարդ մըն է ամ, ուժեղ, ամուսնացած, սեւ պիտերով եւ գորշ տարագով»: Երգիծական նոյն սկզբունքը կիրարկուած է նաեւ «Աւազիկը» թատերախաղին մէջ, Ռատոյի խօսնակ մը եւ երկու երիտասարդ տոյններ կ'արտայայտեն սպասողականութիւն մը, տեսնելու համար անձի մը մէջ մեծ մարդու մը յայտնութիւնը: Բարձրացող պաշտամունքի այդ արարքները խանդավառութեն կը ներկայացուին բեմէն դուրս: Մարդը կը համարէ փոքրիկները, կ'ուտէ անոնց ձեռքի ուտելիքները, կը ստորագրէ յուշատետրերուն մէջ, կը հազնի միշտ արդուկուած տաբատ մը, եւ այլն: Երբ վերջապէս կը յայտնուի, արդէն անկուլ մարմին մըն է:

Իոնեստո կը սիրէ արտայայտուիլ կարճ թատերգութիւններով, կամ աւելուազն մէկ արարնոց թատերախաղերով, որոնք կրնան զարգանալ առանց որեւէ ընդմիջումի: Ան երեք արարներով ներկայացուող թատերախաղերուն մէջ կը տեսնէ զբաւական արուեստական բաժանում մը: «Թատերախաղը կը վերջանայ, յետոյ կը վերսկսի, կը վերջանայ մօրէն,

կը սկսի դարձեալ... Ձեռք կարծեր, որ մէկը պէտք է շատ քանակ տեղաւորել փոքր թատերգութեամբ մը մէջ: Երեք արարնոց թատերախաղի մը մէջ՝ անխուսփելիորէն պիտի գտնուին անկարելի բաներ: Թատերախաղը պէտք է ունի շատ պարզ գաղափարական մը, մէկ մարդկայնութիւնի եւ պարզ ու շատ յստակ եւ ինքզինքն բացատրող զարգացում մը: Երեք արարնոց թատերգութիւն մը զրեւու համար՝ իոնեստոյի առաջին փորձը «Ամէտէ» (Amédée) եւ կամ «Ինքնաշարժ» օտարազատիլ ատկէ» (Comment s'en débarrasser) թատերգութիւնը կատարելագործութիւն մըն է, որուն մէջ կրնան սկստագործներ տեղի ունեցած բոլոր, իրեն հետեւանք անոր երկարութեան, բայց որ կը պարունակէ իոնեստոյի ստեղծած ամենէն ցնցիլ յաճախանքները: Թատերգութիւնը ծնունդ կ'առնէ իոնեստոյի ամենէն մտայն եւ յուսահատ տրամադրութեան եւ կը ներկայացնէ ա'յն՝ որ ներկայիս մօտ զօրաւորագոյն խորհրդակիցը կը մնայ, այսինքն՝ նիւթին ամուսնու հողիին վրայ նիւթին բանեցուցած հեղձուցիլ ճշուածը:

«Ամէտէ» թատերախաղին հերոսը՝ Ամէտէ Պուշիներին, իոնեստոյի պէս դրող մըն է: Իրականութեան մէջ, ան զրեւու վրայ է թատերգութիւն մը, որուն հերոսները պիտի ըլլան ծերակ մը եւ պառաւ մը: Այս երկու ծերունիները, ձեռով մը, կարելի է համարել նաեւ ընթացող թատերգութեան նախադրարները: Բայց յիշուած տարուած ալ խառնաբէն ետք, Ամէտէ կրցած է զրեւ միայն երկու տողնոց երկարատեւութիւն մը:

ՊԱՌԱԽԻԸ.— Կը կարծե՞ս, որ պիտի ըլլայ:

ԾԵՐՈՒԿԸ.— Ինքն իրեն՝ ո'չ:

Ամէտէ եւ իր կինը Մատիէն (գարձեալ Մատիէն, «Պարտականութեամբ զոհեալ» անուն թատերախաղին կնոջ պէս) կ'ապրին ախարհէն կտրուած կեանք մը: Անոնք իրենց յարկաբաժնէն դուրս չէին ելած տասնըհինգ տարեկանէ ի վեր եւ



նոյնիսկ իրենց տան աղբը կողովով մը պատահանէն յետք կը թափէին։ Այսուհետեւ, Մատլէն տակաւին կը պահէր արտաքին աշխարհի հետ հաղորդակցութեան իր կապը, եւ աստիկա՝ դուրծին բերումով։ Ան կ'աշխատէր իրենց նախասենեակին մէջ գետեղումով հեռաձայնալսին կոնակներու վրայ եւ օրուան որոշ ժամերուն հեռաձայններ կը փոխանցէր եւ նոյնիսկ գիծեր կը կտայէր հանրապետութեան նախագահի գրասենեակին։

Այս գոյգին յարաբերութիւնները լաւ չէին ընթանալ։ Անոնք կանոնաւորաբար կը կռուէին։ Մատլէն կոչու էր անգղա-կալի արարած մըն էր։ Ամուսնութիւնը մոայլամած դարձնող զլիսաւոր շուքը, սակայն, քովի սենեակին մէջ գտնուող երիտասարդի մը գիտէն էր։ Այս երիտասարդը, տասներեւեք տարի առաջ, եկած է անոնց տունը եւ կ'ըսուէր, թէ Ամէտէ՛ն, նախանձէ՛ մղուած՝ սպաննած է զայն, թէն ոչ մէկ ձեռով կարելի է ապացուցանել այդ ոճիւրը։ Թէպէտ խնդրոյ առարկայ գիտէր բնաւ ալ Ամէտէի կնոջ սիրտնարին դիակը կրնայ ըլլալ։ Տեղ մը, Ամէտէ ակնարկութիւն մը կ'ընէ, թէ ինչ տունը չէր գտնուէր զոճերին օրը։ Ատիկէ զատ, գիտէր կրնայ ըլլալ նաեւ զրացիներէն մէկուն պոպոկին գիտէր։ Պատկը թիւեւ ձգուած էր Ամէտէ ընտանիքի հոգածութեան եւ ատկէ ետք ոչ ոք հետաքրքրուած էր անով։ Այդ պատգամային, սակայն, մանուկը ինչո՞ւ պիտի մեռնէր։

Գովի սենեակին մէջ գրուած մարմինը կրնայ մեռած ըլլալ։ Այսուհետեւ զերծ, անիկա շատ գործօն է։ Մօրուքն ու եղունգները կ'անձին, աչքերը կը փայլին անարկու կանաչ լոյսով մը, եւ գիտէր ինքը կ'անձի եւ կը մեծնայ։ Մարմինը կը տատապի մահուան անբուժելի արտէն — Երկրաշարժի անցում —։ Ո՛րքան խաղաղ զարգանայ, ա՛յնքան կ'արագանայ անուժը։ Գովի սենեակին դուռը պայթումով մը կը բացուի եւ հսկայական ոտքեր բռնէն ներս կը խուժեն։ Մինչ գիտէր կը մեծնայ, սուսկ կը կ'անձին յարկաբաժնին

մէջ — ներս մի եւ տարալուծութեան տեսարաններ։

Ո՛վ է կամ ի՞նչ է այդ գիտէր, որ կ'անի այսպէս անսահմանօրէն։ Յետագարձ տեսարան մը առիթներ կ'ընծայէ՝ զանազան համար հանելուկին լուծումը։ Այդ տեսարանին մէջ, Ամէտէ եւ Մատլէն կը ներկայանան իրար հօր ամուսնացեալ ամուսնի մը։ Ամէտէ կը սիրէ, ան տաղտկալի է ու վիպական։ Մատլէն գիտազրգիս է, կախքն, եւ անտրամադիր է ընդունելու Ամէտէի սիրային բողոքները ու միշտ պատրաստ՝ փշուրու անոր վիպական զաղափարները։ Խօսակցութիւնը յետակորէն կը կրէ սեռային բնոյթ մը։ Կաջութիւնը հետեւեալն է — գոյութիւն ունի կրքոտ սիրահար մը, ինչպէ՞ս նաեւ ազնիւ մը, որուն համար տղուն բոլոր արարքները կոչուութիւն եւ տհասութիւն կը դրսեւորեն։ «Ձայնդ շատ սուր է, դուք կը խլացնես զիս, կը ցաւեցնես, մի ցուրտ խառնա, Սատիսք», Սատիսքը։ Մինչ Ամէտէի երիտասարդ հոգին կը լսէ Կարենի ազգուկը, մանկներու կանչը, Մատլէնի ուրուականները կրնայ իմանալ միայն հայտնութիւն եւ կրկնոց։ Տեսարանը կը հասնի իր զաղաթնակէտին, երբ Ամէտէ կը սկսի սէր մուրալ։ «Ինչ որ հետու է՝ կրնայ մօտ ըլլալ, ինչ որ չորցած է՝ կրնայ կանաչալ վերադառնալ։ Ինչ որ քաժմուած է՝ կրնայ վերադառնալ։ Ինչ որ չկայ այլեւս՝ քաժմուալ պիտի ըլլայ։ Բայց մինչ Ամէտէ կ'երազէ իրենց ապական տան, մէջ ապրուելիք երջանկութեան մասին, Մատլէն կ'ընդդիմանայ անոնց՝ փակուելով պողպատեայ տան մը մէջ, ուրիշ խօսքով՝ թեթեւութեան, երջանկութեան եւ քաղցրութեան դէմ յանդիման կը բերէ ծանրութեան, յուսալքութեան եւ մըրսայութեան պատկերը։

Նախընթաց տեսարաններուն վրայ շող մը նետող այս տեսարանը կը յատկացնէ ա՛յն հանգամանքը, որ միւս սենեակին մէջ գտնուող գիտէր քոյրին մեծած ուրիշ գիտէն է, անոնց սեռային անհերքաշանկութեան գոհը։ Անիկա զըզ-

ընտանիքով, յանցանքով եւ զգուսնքով կերտուած դիակ մըն է։ Անիկա նեխած սուկերով եւ նիւթի տարազազրուումով կը թունաւորէ մթնոլորտը ու կը մեծնայ օրէ օր, ժամէ ժամ։ Ամէտէ շատ յստակօրէն կը հաստատէ, թէ իրենց տան մէջ նեխած տմէն ինչ՝ հետեւանք է սիրոյ բացակայութեան։ «Գիտն՝ս, Մատլէն, եթէ իսկապէ՛ս սիրեմք գիրար, ասոնցմէ եւ ո՛չ մէկը կարենարութիւն պիտի ունենար։ Բայց Մատլէն եղած էր բիրտ, անզգամ եւ կը դաւանէր ա՛յն իրողութիւնը, բոտ որում» «Աէրը չի կրնար մարդիկ ձերբազատել իրենց տառապանքներէն»։

Ամէտէ պէտք է ձերբազատուի դիակէն, որ կը սպառնայ տարածուիլ յարաբաժինէն դուրս։ Գերմարդկային ուժով մը՝ ան կը փորձէ պատուհանէն դուրս հրել «անկերջանալի» մարմինը։ Բեմադրութեան համար տուած իր ցուցմունքներուն մէջ, ինչպէս կը շնչէ Բոնեքօ, պատուհանին մօտ քաշքշուող դիակը պէտք է ձգէ ա՛յն տպաւորութիւնը, որ «անիկա իր հետ քարշ կու տայ սմբողջ տունը եւ երկու տիպարներուն մերսի աշխարհը»։

Երբորդ արարին մէջ, Ամէտէ կը քաշքշէ դիակը դէպի Սէն առաջնորդող փողոցներէն։ Ան կը հանդիպի զանազան անձերու, ի շարս որոնց՝ ամերիկացի դիւտարի մը, որ սրճարանէ մը կամ հանրատունէ մը դուրս դալու վրայ էր։ Ամէտէ, որ անկարող է հաղորդակցելու այդ անձանցին հետ, կը բացատրէ անոր, որ դիւտար վրայ է թատերախաղ մը, ուր պարողի մը դիմաց ինք պիտի ստանձնէ մեղածի մը դերը։ Խնդրոյ առարկայ թատերախաղին թեման ոչնչականութեան դէմ հակաճառութիւն մըն է եւ կը պաշտպանէ նոր մարդկութիւնը։ Ան, Ամէտէ, թեր է դիմումին եւ կը հաւատայ յառաջդիմութեան։ Այդ միջոցին տեսարանը աւելի՛ եւ աւելի՛ կը խճողուի մարդոցմով, աղջիկներով, դիւտարներով եւ ոստիկաններով, մինչ Ամէտէ անընդհատ կը շարունակէ վստահեցնել ա-

մէնքը, որ ինք կողմնակից է ընկերաբան իրապաշտութեան եւ դէմ՝ քայքայումին եւ ոչնչականութեան։ Այդ միջոցին, դիակը վերածուած է տեսակ մը օդայարիկի եւ Ամէտէ գրեթէ կը ծփայ օդին մէջ։ Մատլէն կ'ուզէ, որ անիկա վերադառնայ իրեն, սունկերը օդայարիկին մէջն են, բայց Ամէտէ կը ծփայ ու կը կորսուի երկնքի տարածութեան մէջ։

«Ամէտէ» թատերգութեան մէջ մենք կը տեսնենք Բոնեքօյի կեանքի փորձառութեան երկու տարբեր երեսները կողք կողքի. նիւթին ծանրութիւնն ու արդաօտարութիւնը՝ առաջին երկու արարներուն մէջ, իսկ թեթեւութիւնն ու ցնդումը՝ երրորդին մէջ։ Անմիջապէս, որ Ամէտէ կը ձերբազատուի իր մեղած սիրոյ դիակէն, ուրդ հեղձուցիչ ներկայութիւնը յանկարծօրէն կը վերածուի թեթեւութեան մը եւ դիմէ կը բարձրացնէ վեր՝ օդին մէջ։ Թատերախաղը, որ պարզապէս անուանուած է «Կատակերգութիւն» երեք արարներով, կատակերգութիւն է ազատութեան, այսինքն՝ անիկա սկզբնաւորութեան մը երազն է, որ պիտի գայ ջնջելու անցեալը։

Ինչպէս «Պարտականութեան գահերը» թատերգութեան, նոյնպէս եւ «Ամէտէ» մէջ ընկերաբան իրապաշտութեան դէմ եղած հակաճառութիւնը կը մնայ իրրեւ երկրորդական թեմա մը։ Տեղ մը, Մատլէն կը յայտնէ Ամէտէի, որ երկրորդ տեսակին մէջ դիակին ներկայութիւնը կը ինզաթիւրէ իրականութեան իր ըմբռնողութիւնը եւ պատճառ կը դառնայ իրեն աշխարհը տեսնելու ախտաւոր լոյսի մը տակ, որմէ կ'առաջանայ ընկերաբանական թատերգութիւն մը դըրելու վրիպանքը։ Բայց ինչպէս երրորդ արարի գործողութիւնները ցոյց կու տան, դրապէտին անձնական կեանքին հետ առնչուող իրականութիւնները աւելի անմիջական ազդեցութիւն մը ունեցած են, քան անոր ընկերային ձգտումները։ Թամենայնդէպս, որքան որ ինք կը պաշտպանէ յառաջդիմութեան եւ իստարկութեան հանդէպ ունեցած իր հա-

ւատքը, այնքան աւելի զինք զհետէն կը կտրէ իր հին սիրոյ եւ անձնական յիշատակներու դիակը:

«Ամէտէ» կը պարունակէ Թոնէսքոյի ամէնէն փայլուն պատկերներուն մէկ մասը: Իրրեւ ահռելի ուժի եւ անխուսափելի բախումի բեմական խորհրդանշիչ տոներած անող դիակը վատահ է անմահութեան իր կշիռին: Զօյգին նախնական աշխարհին պայմանական զգացումները՝ սրուած տուերի միւս վարձակալներուն կողմէ հանդուած խորքաբեմային ազմուսկով՝ ամոքուած են նաժարաբանի մը երեւումով: Այս վերջինը բերած է նամակ մը, որ զոյգը կը մխրճէ կատաղի վախի մը մէջ եւ կը ստիպէ մերժել յանձնումը մեծապայծառ թանձրացեալին: Թատերախաղին խոցելի կէտը կը զանաւորէրորդ արարին մէջ, որ կը թուի բլլալ աւելի քան նման Քէյստոնի կատակերգութեան, ուր զինուորներ եւ ոստիկաններ կը հալածեն դիրար: Բայց այս միտումը կարելի չէ եղած ամբողջապէս իրականացնել թատերգութեան մէջ եւ զժողովը եղած է բեմին վրայ սարքաւորել ա՛յն կամուրջը, որ պիտի տանի պայմանականութենէն դէպի թեթեւութիւն եւ ազատագրում:

«Ոսկեգործ» (Oriflamme) խորագրուած կարճ պատմուածքի (որ կը քովանդակէ թատերախաղի մը նախատարերը) վերջին արարի պատահարները կ'ընդգրկեն միայն մէկ էջ, հակադրուած ա՛յն տառներկու էջերուն, որոնք կը ներկայացնեն առաջին երկու արարները: Պատմուածքին վերջին պարբերութիւնը կը պատկերացնէ հեռացումը աւելի յստակօրէն, քան անոր թատերականացումը օրինակը:

«Ոսկեգործ» կը լսեմ ամերիկացիները, որոնք կը մտածէին, թէ ես ներկայա-

ցրեմք վրայ եմ մարգակամ իւրաքանչիւր ծուրիւմ մը եւ կը քարեւելիմ զիս «Բարեւ, տղայ», ըսելով: Ես նետեցի հագուստներս, սիկարէթներս. ռատիկանը քաժնեց զանոնք իրենց մէջ: Յետոյ մընաց Յարդազողի նախապարիւր, զոր ես անցայ, նստած Օրիֆլեմի սանդուխիմ վրայ»:

«Ամէտէ» թատերախաղը ծանուցուած է 1953ի Օգոստոսին, «Սէրէզի լա փալ» մէջ: Առաջին անգամ անիկա կը ներկայացուի 14 Ապրիլ 1954ին, «Թէաթր ար Պապիլոն»ի մէջ, Սան-Մարի Սերոյի բեմադրութեամբ: Քանի մը չարաթներու ընթացքին ամբողջացնելէ ետք «Ամէտէ»-ն, Իոնեսքօ յաջորդական երեք օրերու ընթացքին (14-16 Ապրիլ) կ'աւարտէ ուրիշ թատերգութիւն մը, որ կը ներկայացնէ Նիթին բազմացումը՝ վերանորոգուած ուժով մը: Այդ թատերախաղը կը կրէ «Նոր վարձակալ» (Le Nouveau locataire) անունը եւ կը ներկայացուի մէկ արարով: Գործողութիւնը կը պատկերացուի պարապ սենեակով մը, որ հետադիմապէս կը սկսի լեցուիլ նոր վարձակալին կարասիներով: Վարձակալը, աղնիւ, միջին տարիքով անձ մըն է, որ սկիզբը կը թուի կայկանդուած չլլալ աշխարհի տարկաներով եւ լայն ժամանակ կը տրամադրէ ուշադիր կերպով տեղաւորելու համար առաջին քանի մը կըրտորները, բայց վերջաւորութեան բառացիօրէն կը թաղուի տարկաներու անվերջանալի յորձանքին մէջ: Աւարկաները, նախապէս, ներս կը բերուէին երկու շարժուն բեռնակրներու կողմէ, բայց աւելի ուշ՝ անոնք իրենք իրենց կը սկսին հոսիլ ներս: Կ'իմանանք, որ երթեւեկը խնդուած է եւ Փարիզի բոլոր փողոցները ծածկուած են կարասիներով, ա՛նգամ Սէն Կետը ողողուած է անոնցմով:

(Շար. 3)

Պ. Մնացեանի «Կորստական թռիւնք» անուն վերջին գործին մասին մեր հրէջ եւ վատաւար երկու գէժերուն կողմէ ստորագրուած հետադաշ երկու գրութիւնները ստացածք զրէթէ միաժամանակ եւ, զարմանալի զուգարկալուծեամբ մը, երկուքն ալ, թէ՛ Գ. Սասունի եւ թէ՛ Ն. Պէշկեթաւեան կ'ընդգրկեն Նոյն յատկանիւր, «Կորստական թռիւնք»-ուն ներառարհային բնոյթը:

Միաժամանակ ստացուած այդ երկու գրութիւնները կու տանք միաժամանակ:

## «ԿՈՐՍՏԱԿԱՆ ԹՐՈՅՆԵՐ»

(ՆՇՄԱՐ ՄԸ)

«Պ. Մնացեանի գիրքը ներառարհային է»

Պ. Մնացեանի նոր գիրքը գրական քննադատներուն եւ մամուլին կողմէ ուշագրաւ վերաբերմունքներու ենթարկուեցաւ եւ գնահատուեցաւ անվերապահօրէն:

«Ազգակ», «Բագին», «Այգ», «Հայրենիք», «Յառաջ» թերթերուն մէջ ուշագրութեամբ կարգացի այդ մասին ստորագրած Նուպար Չարխուտեանի, Արա Արծրունիի, Լեւոն Մկրտչեանի, Շահանդուխտի, Վարդան Գէորգեանի, Ա. Արփինէի եւ Կարպիս Միրիճեանի գրախօսականները:

Ուրախութիւնս կ'արձանագրեմ այդ առթիւ, ա'յն իսկ պատճառով, որ կը նշմարեմ ըմբռնումի արթնութիւն մը հանդէպ մեր այժմու գրական վերելքին, թերեւս մէկ ճառագայթին:

Եթէ Սփիւռքի մամուլը քիչ մը օրինակ առնէր արեւելահայ մամուլի գրադատական ընթացքէն եւ յաճախադէպօրէն հեղինակներն ու անոնց դրածները քննութեան ենթարկէր, տկարութիւնները մատնանշէր եւ չլլանար դժուարեանքը ստեղծագործութեան արժէքի համեմատութեամբ, մտաւորական եւ գրական վերելքի ճամբաներ կը բանար եւ բաղմունքիւնները կ'ընտելանէր ընթերցումի եւ գրական ըմբռնողութեան:

Գրականութեան քարոզը այս քանի մը տողերով փակեմ եւ անդրադառնամ «Կորստական թռիւնք»ուն, ամփոփ կարծիք մը բանաձեւելու:

Գրադատները զանազան տեսանկիւններէ արժեւորեցին այս գիրքը:

Ոմանք պատմութեան նկատած էին զանազան վերնագիր կրող գլուխները, շնչառութիւն, թէ՛ անոնք կառուցուած են բանաստեղծական շունչով:

Ոմանք նոյն հատուածները նկատի առած են իրրեւ արժակ բանաստեղծութիւններ, որ կան կեանքի դրուագները, պատմութեան հակումով:

Ոմանք յուշակատում մը նշմարած են զրքի ամբողջ տարածքին, որ, սակայն, պարզ յուշագրութիւն մը չէ միացած, այլ՝ վերածուած է բանաստեղծական կառուցութեան, դէպքերու մանրամասնութիւնը անտեսելով:

Մէկ երկու գրադատներ ներառարհի ապրումներ նշմարած են հոն, բայց այդ իրողութեան վրայ չեն ծանրացած:

digitised by

A.R.A.R.@

Արդ, իմ գրական հայեցողութեամբ, այդ գրուածքները ո՛չ պատմութեան են եւ ոչ ալ արձակ բանաստեղծութիւն, այլ՝ ներաշխարհային ապարւած խորունկ տպաւորութիւններու ու վշտայի իրողութիւններու գրական դրսեւորում, կառուցում:

Ներաշխարհային յուշը գլխաւոր խաղիսին է ներքին ապրումներուն: Կեանքի քնթացքին, գէպեհրու տպաւորութիւնները, Սիւսկեանի մօտ, աշփռու սահմանին մէջ շնն մնացած, այլ՝ սրտին խորունկը ալիք տուած են ու դարձած ներաշխարհային ապրում:

Վերնագիրներով անջատուած հատուածները իրարու չզիջուած են ապրումի, դժայու, դատելու ներթափանցումով, նոյն հողիին ներքին վերդիմունքին, ապրումին, խանդավառութեան երդերն են, դուք ըսէք ինքեախօսութիւն, որուն մասնակից կը գառնայ ընթերցողը:

Գիրքը ջերմացած է գրական հարուստ արձակով մը եւ ինքնայատուկ ունով:

Անշուշտ կան անելորդ կուտակումներ՝ մէկ քանի հատուածներուն մէջ: Տեղ-տեղ հրապարակագիրը իր ձին կը քալեցնէ, բայց անոնք շնն կրցած ամբողջութիւնը, նոյնիսկ հատուածը խաթարել:

Ներքին իրական ապրումները եւ անոնց ուսուորումը քանդակագործութիւնը գիրքը կ'արժեւորեն եւ պատուանդան մը կը ստեղծեն Պ. Սիւսկեանին մեր արդի գրականութեան հորիզոնին վրայ:

Եթէ պէտք ըլլայ յիշատակել նման գրուածքներու կարկառու մեր մօտաւոր անցեալի գրականութեան մէջ, ընթերցողներու ուշադրութեան պիտի յանձնեմ ինտրայի «նրաշխարհ» ու Կ. Ջարեանի «ձամբորդն ու իր նամբան» մեծածաւալ եւ մեծարժէք գրուածքները, որոնք մնայուն դանձերն են հայ գրականութեան: Իրարու հետեւած գրագէտներ շնն այս հեղինակները: Ամէն մէկը քալած է իր ճանապարհով, եւ սնուած է իր ստեղծագործութիւնը:

Պ. Սիւսկեանի գիրքը ներաշխարհային է: Ան ճամբորդն է՝ իր ճանապարհով, որ կ'երգէ եւ երգը ի'րն է: Նմանութիւն եւ հետեւում չկայ: Ամէն մէկը իր ներաշխարհին մէջ, իր կերպարանքով:

Եւ ներաշխարհը այն բնական մղիչ ուժն է, որ ուրիշին չի նմանիր, ինքնայատուկ է:

Սիւսկեանի «Կորստական քոյնեք» իր հողիին հարագտու մէկ մասնիկն է:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

## «ԿՈՐՍՏԱԿԱՆ ԹՈՅՆԵՐ»

«Այս գիրքը տեսակ մը ներաշխարհային ինքնակենսագրութիւնն է»

Շատ ուշ ստացայ Պողոս Սիւսկեանի մեր կրտսեր գրչեղբոր նոր գիրքը՝ «Կորստական քոյնեք»:

Այնուհետեւ ցաւերս թոյլ չտուին, որ մէկ-երկու օրէն կարդամ ու քանի մը օրէն ալ գրեմ տպաւորութիւններս:

«Խորոտական Թոյններ»ը արձակ բանաստեղծութեամբ է գրուած: Պէտք է դժտնալ, թէ արտասահմանի մէջ հայ բանաստեղծութիւնը կատարած է տեղափոխութիւն: Իր հին բնակավայրը (Հայֆածոյ) գրեթէ լքած է, պահելով քանի մը խորշեր ու խուցեր, եւ անցած է արձակի մէջ:

Տասներեօթը կտորներէ բաղկացած «Խորոտական Թոյններ»ը (համակ մոլեխիւնդ ու մեղր) շարք մըն է տեսակ մը ներաշխարհային նորամիտեան: Ապրումներ հայու աշխարհ հողի: Աւելի ճիշդը՝ մուսաւազցի հայու փոթորկումներ, հերոս ու մարտիրոս ժողովուրդի մը մէկ ժառանգորդին տուայտանքները, որոնք ապա եղան աշխարհի (մարտիրոս ու աշխարհ հերոս) ապրումներ, որոնք ամէն աշխարհութեան պէս կը վերջանան տեղորոշութեամբ:

Կան կտորներ ալ, որոնք իրապէս ներաշխարհային են, ունենալով ցեղային ներաշխարհ մը, հարուստ խորհրդանշաններով:

Իւրաքանչիւր հարազատ հայ հոգի հիւանդ է, որով տրտում: Մա՛նաւանդ մասնութները եւ պերզայնութիւնը կը սաստկացնեն տխրութիւնը աւելի: Հիւանդ մը, որ կը տքայ, կը բարձրագագակէ, կ'ընդվզի, կը նզովէ, կը հայհոյէ, կ'ազօթէ ալ, կարծէք մեղմելու, ամոքելու համար ցաւերը, միշտեւն ալ: Նոյնը ըրած է Մնայեան, յանուն հանդարտութեան հողոյ:

Մըրիկը կը մտնէ խորքին մէջ, ու գարձեալ կ'երեւի, հովանալով հայ հուշներով, բարձրանալով ազօթքով:

Ի՞նչ ընէ Հայը ունայնութեան շափ անհուն իր անբախտութեան մէջ: Միայն ազօթէ՞: Բայց զարեւոյթ ու դարեւոյթ ազօթեցին մեր նախահայրերը: Աղօթեցին ամէնէն աստուածարժան երգախօսքերով ու եղանակներով: Ընդունան: Եւ տակաւին ունի ազօթողներ ու կառուցանողներ եկեղեցի: Ունի հաւեւ սակաւաթիւ ընդվզողներ, հայհոյողներ, որոնք լուսանքները հողերու լոյս ըլլալով՝ հաւանաբար ըլլան ընդունելի:



Գիրքին կտորները մին քան զմիւսը պեղեցիկ են ու խռովիչ: Բայց կայ կարկառուն կտոր մը, որ գլուխգործոց մըն է. «Պարբ», որ լուսնդէն է իբրեւ զրութիւն, ու կը ներկայացնէ ներաշխարհը հայութեան Սուէտիոյ: Մուսաւազցիներ տարազրութեան ճամբուն վրայ կը հարուածուն ջրհեղեղեան տեղատարափէ, եւ շանթերու շալիւններուն, որոտումներու ոմբակոծութեանց, վրաններու քանդումին, զժախտութեան, թշուառութեան ու զըժախտութիւններու լախտերուն հակառակ, յանկարծուստ կը տեսնուի խորոյկի մը լոյսը, ապա կը լսուի նուագահարութիւն, եւ խիտմ թաց մուսաւազցիները կը պարեն խելայեղ խմբապար մը. այո՛, բոլորապարը կեանքի ու մահուան: Մէկ կողմը ծովն է, միւս կողմը՝ ցամաք, ու անդին՝ լեռ, բայց մուսաւազցիները ո՛չ ջուրին վրայ են, ոչ ալ հողու վրայ, օդառկախ են, վհատութեան վիճին բերնին վրայ ու կը պարեն ոգեւորութեամբ կատաղի: Զիրար կը քաշալերեն, զիրար կը յուսադինեն, խորոյկի մը լոյսով, վաղուան յոյսով կը պարեն մեծ ու պզտիկ, բռնուած բանին, խօսքին խնթութենէն:

Կը պարեն, արհամարհելով կատաղութիւնը բնութեան ու բախտին: Մովը կը մռնէ, երկինքը կ'որոտայ, ցամաքը կ'երկրաշարժի եւ հայկազունները կը պարեն:

Բայց պէտք չէ պատժել «Պարը»։ Պէտք է այդ կարկառուն ու կատարեալ կտորը կարդալ, քանի որ անգամ կարդալ, եւ արտասանել հանդիսութեանց մէջ, փոխանակ կեկեմալով կրկնելու հաղար անգամ արտասանած տողեր, տաղեր։

Պարամուլ Սպանիացի որ անգամ այդ կտորը պիտի կտրդար նախանձով բարի։

Հեղեղին դէմ հեղեղ հայութիւն եւ այդ պարը։

✱

Խոսվիչ են անտարակոյս «Տուներ» եւ «Արեւը»։ Մնացեալ կարճ շրջան մը տառապած է մոխրագոյն երկնքին տակ արեւուդուրկ Փարիզի։ Որուն դարունը սուս է, որուն ամառը կեղծ է, երկուքն ալ են անվստահելի։ Բայց ըսելիք չունինք աշխան համար, քանի որ աշունն է համակ ոսկի։ Բայց այդ ոսկին մէկ զելուին՝ մէկ Փրանք տուող գտնել չէ կարելի։ Ձմրան բսելիք չկայ, քանի որ վստահելի է ու երկարատեւ։ Խոնուազն վեց ամիս բլլալ լիւրանանցի ու ապրիլ Փարիզի մէջ, զոհողութիւն է անկարելի, քանզի Փարիզն է քաղաք զրկանքի։ Արեւապաշտ մը, ծովապաշտ մը, լեռնապաշտ մը դատապարտուած է տուայտանքի ցմահ։ Այո՛, արեւ, ծով, լեռ սիրողները կը տենչան շուեկ հարաւ, ուր լոյսը կ'ընէ մարդը լաւատես։

Այո՛, «արեւիկն համը տաած մարդուն համար ի՞նչ դժուար է ապրիլ հոգ»։ Բայց դժուարէն աւելի է. «տաճանիկ»։ Եւ սակայն, շուրանանք. ուրիշ արեւ մը կայ։— Ազատութիւնը։

«Տուներ», «Արեւը», «Հոգը», «Քաղաքը» ուժական գրութիւններ են, որոնց ներքին ու արտաքին նկարագրութիւնները կարծէք արտայայտուած են սուրինով ու շանթերով, հաղորդական են ու խոսվիչ։

«Քաղաքը» Պոլիսն է, ծննդավայրս, միաժամանակ դրախտ ու դժոխք։ Որ եղած է կեդրոնը արեւմտահայ մատարականութեան, ոմանց իբրեւ ծնրնդավայր, այլոց իբրեւ բնակատեղի։ Պոլիսը, որ բիւզանդական շրջանէն իսկ եղած է ոստանը ամուլ վէճերու եւ միաժամանակ ստեղծագործութեան։ Եղած է միշտ քաղաք գաւի ու թոյնի։ Վերջապէս, Պոլիսը թուրքերուն թաթերուն տակ վերածուած է ոճրագործութեան համալսարանի, հրէշային հանճարներով լի։

Շղիա Տէմիրճիպաշեան երբ Ձուիցերիա էր, Պոլսոյ կարօտախոնէն բռնուած երդեց։

— «Հոն, սիրելիս, հոն կ'ուզեմ որ տանիմ զիս»։ Սիրահարուած էր Պոլսոյ կապտաներուն։ Ան շտեմաւ արեւնաթաթախ, աննախընթաց կարմիրը։

Իսկ ես կ'ըսեմ.

— Հոն, սիրելիս, հոն չեմ ուզեր որ տանիմ զիս։

Հակառակ ունենալուս լուսակապոյտ յիշատակներու յուրան, հակառակ իր գեղեցկութեան անբացատրելի։ Արժանի էր ըլլալու քաղաքամայրը ոսկի իր գեղեցկութեան անբացատրելի։ Արժանի էր ըլլալու քաղաքամայրը թովանդակ աշխարհի։ Բայց պղծուեցաւ ու եղաւ յիշատակ յոռի։ Եւրոպական քաղաքակրթութեան ամօթն է այդ արտակարգ արժանիքներով քաղաքը թողուլ թուրքերուն։

Մնացեալն պոլսական բլուրի մը վրայ կանգնած՝ զիտելով բնութեան ամէն տեսակ գեղեցկութիւններուն հաւաքածոյ Պոլիսը, կը յիշէ նահատակ-

ած բանաստեղծներն ու գրողները, եւ իր գայրոյթն ու միշտը կ'արտա-  
յայտէ հոգի հայութեամբ:

Ծառքին մէջ կան «Վերջին Վնիդը», «Ճամբաներ», «Կոսմոկոս», «Նա-  
ղիկներ», «Ծառք», «Ծառք Ծառք», «Հայկական Տիրութիւն», «Բերքաւա-  
ծ», «Նաղիկ Աղբիւր», «Քու Նոր Տարին, Մեր Նոր Բարին»:

Այս գիրքը տեսակ մը ներաշխարհան ինքնակենսոգորութիւն է: Նախ  
կենսագործութիւնը Հայութեան, իր վերջին, վերին շարժարանքին ու յարու-  
թեան:

Եւ մերձագէտ, «Այլիտան թուղք» ու «Այլ թուղք»ը, որոնցմէ առա-  
ջինով կը բացուի գիրքը, ու միւսով ալ կը փակուի: Կեանքին պէս: Գիրքն  
ալ կ'անք է, ինչպէս կ'անքը գիրք է:

Սնապեանի լեզուն փայլատակում է ու որոտում մտքի եւ հոգւոյ:  
Մերթ Նարեկացի է, մերթ մի քիչ Սայաթ-Նովա, բայց միշտ ինքնատիպ:  
Ունի լուսագեղ, չքեղ հայերէն մը շնորհալի:

Պողոս Սնապեան իր նախորդ ու ներկայ գիրքերով հաստատեց, որ ինք  
միայն քրոնիկագիր ու քննադատ չէ, այլ՝ գրագէտ է ստեղծագործող: Գրա-  
գէտ է հայաշունչ, քանդի հարուստ է ապրումներով ազգային: Եւ իր գա-  
յրոյթներն ու նկարները եւ լուսանկարներն անգամ կը մնան մաքրորէն:

\*\*\*

Երբ լրացուցի ընթերցումը գիրքին ու փակեցի (ի՛նչ մեղքս պահեմ)  
ըմպեցի բաւական գինի:

Եւ ըսի իւրովի.

— Կորսնցուցած եմ քանի մը կարողութիւններ: Այլ կարողութիւններ  
ալ կորսնցնելու վրայ եմ: Եւ եթէ, որ մը, յիշողութիւնս ալ կորսնցնեմ, ու  
չկարենամ մտաբերել այս թանկագին հատորին սրտայոյզ գրութիւնները,  
սակայն, անկարելի է որ մոռնամ «Պարը», որ պարելու փափաք մը արթն-  
ցուց մէջս, հակառակ որ ոչ մէկ պար գիտեմ, ոչ մէկ անգամ պարած եմ  
կեանքին ընթացքին, եւ մա՛նաւանդ՝ հակառակ որ մոտաւորապէս տարի մըն  
է որ քալել չեմ կրնար, ու եղած եմ տեսակ մը անդամալոյծ, տեսակ մը  
բանտարկեալ: Ու պարել կը ցանկամ...

Այո՛, ինքն զահանջ մը ծնաւ մէջս, դառնալու խօլապար մը, մէկ  
ձեռքս աշխարհի նահապետի մը ուսին, միւս ձեռքս աշխարհի երիտասարդի  
մը ուսին, ու դառնայի, թրթռայի, խաղերով ոտքերու, ներդաշնակուած  
ձայներու սուլոյցի, սրինգի, թափի, թմբուկի:

Պիտի հասուննա՛յ հրաւրել, ու ես թէ՛ քալեմ, թէ՛ պարեմ, թէ՛ թե-  
ւեմ, գտնելով կորսնցուցած կարողութիւններէս մին:

Պարը, հայկականը, հերոսականը, հրաշային, մուսաւաղթանը...

Ու կը պարեմ երեւակայութեամբ, բեւեռուած թիկնաթոռի մէջ:

Ահա թէ «Պարը» ի՛նչպէս ըրաւ զիս պարակից հոգեպէս:

\*\*\*

Վերջին քանի մը տարիներու ընթացքին, ինծի շրջուած գիրքերուն մէջ  
չտայ բարձրարժէք գրական երկեր, ինչպէս Ա. Արփինէի «Կեանքի Կառա-  
կերպութիւնը», Յ. Գեղարդի «Ուղիներ», Յակոբ Կարապետեանի «Անձնաւոր-  
Զո-



ցիմեր, Մամեանի ճաշու Բեկորնիքը եւ Սնապեանի երկու գիրքերը, որոնք մնայուն երկեր են, ու բաւական լաւատես կ'ընեն մեզ:

Ա. Արփինէի պատմութեանը կարծէք պատմութեան եւ պարիկի մը կողմէ:

Բ. Գեղարդի հատորը ծածուած է յաւատարմեան յայտով:

Յակոբ Կարապետի կը ներկայանայ նման վարպետի:

Մամեան ընծայեց մեղի գիրք մը, ներկայացնելով հայութեան բեկորները Սփիւռքի:

Սնապեանի մասին խօսեցանք:

Նորագոյն գրողները թող օրինակ առնեն վերողրեալ նորանուէր գրիչներէն, թէ՛ իրրեւ արուեստ, թէ՛ իրրեւ հայութիւն: Թող օրինակ առնեն, պահելով իրենց ինքնատարութիւնը: Թող ըլլան հայ արուեստագէտ:

\*\*\*

Ձեռնանք ըսել, որ Սնապեանի գիրքին գրութիւններուն խորագիրները զձագրութեան եւ Գառնիկ Գաղանձեանի կողմէ: Չսիրեցինք կողքի գիրքերը, սակայն, հիացանք գրութիւններու վերնագիրներուն, որոնք գիր ըլլալէ զատ, պատկերներ են կամ զարդեր պատշաճ, պարկեւտ, գեղանի: Վերջապէս, նորէ մը զծուած տեսանք պատկերներ շնորհալի. փա՛ռք Աստուծոյ:

\*\*\*

Սնապեան, այս գիրքով, ինչպէս կ'ըսէ հայ ժողովուրդը, — «Առաւ քուլեց...», թուիչով եւ կաքաւումով:

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ



## Ձ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Մեր մաս գտնուող ձեռագիրներուն վերաբերող հետազոտ քանի մը տողերը կընա-  
լինք ձեռագիրները ստորագրող անձերէն ոմանց բերանացի ըսել, կամ նամակով ըսել ուրիշ-  
ներուն, բայց այդպէս չըրինք, ընտրեցինք այս ձեւը, որպէսզի ձեռագիրներով ողոյսած  
մեր դարակներուն իրականութեան եւ անկէ բխած ուրախութեան հաղորդակից դառնան նաեւ  
գիտցիմքի մաս ու հետեւ հազարաւոր ընթերցողները, բարեկամները:

— Ի՞նչ եղաւ իմ ձեռագրիս նախագիծերը, — կը հարցնէ մէկը:

— Իմ ձեռագրիս հասա՛ւ թէ կորսուեցաւ, — կը հետաքրքրուի հետունքէն ուրիշ մը:

— Ս՛րբ կարգը պիտի դայ իմ ձեռագրիս օղակաւորութեան, — վրդովուած կը զրէ  
կրբորդ մը:

Եւ այսպէս՝ շատեր, ու ձեռագիրներ հիներէն, նորերէն, հետունքէն, մօտերէն, ա-  
մէ՛ն կ'ոգտէ:

Գիտցիմքի հիմնադրութեան օրերուն, ստեղծագործական դանդաղութիւն մը նկա-  
տելի էր դրական բոլոր մարտերէն ներս, բայց ճայգ զանազանութիւնը, — կը գրէինք, —  
յոզնութեան հետեւանք չէ, դրողներու ներքին կրակին պահածով չի բացատրուիր, այլ  
պատճառ ունի կեդրոնական ու կեդրոնամիտ բնոյթ մը բացակայութիւնը, այսինքն՝ դրողները  
քով քովի բերելու, աշխատանքի մղելու, աշխատութիւնները արժանաւորապէս ներկայացնե-  
լու խանդավառ միջոցը, որ վերջին տարիներուն միւս պահսեցաւ մեզի: Գիտցիմք կոչուած է  
այդ կեդրոնական բնոյթ ըլլալու... Նորերու յորդ ապրումներուն եւ հասուն մարդոց հա-  
սուն խոհերուն բնոյթը:

Այսպէս կը գրէինք տառը տարի առաջ, մեր առաջին թիւի առաջին էջին, եւ, կը  
կարծենք, չթերացանք մեր յանձնառութեան մէջ, ու այսօր, շնորհիւ տրուած խոտուածին  
եւ ապա նաեւ մեր ամենօրեայ կեանքին մաս կազմող հետազոտումներուն, արդար վերաբե-  
րումին ու գուրգուտնքին՝ ձեռագիրներ ու ձեռագիրներ, ձեռագիրներ երէց սերունդին՝  
Ն. Պէլիկիթաւանէն, Ա. Հայկապէն, Ա. Գառնէնէն: Ձեռագիրներ՝ միջին սերունդին՝ Բ.  
Կարապետեան, Ն. Ջաբրուանէն, Ս. Սանինեանէն, Ա. Արփիէնէն, Բ. Կասեանէն: Ձեռա-  
գիրներ՝ նորերէն՝ Ա. Արծրունիէն, Ն. Վերապեանէն, Վ. Թեքեանէն, Ս. Սարգիսեանէն,  
Բ. Գառնէն, Բ. Ջորեյիէն, Ս. Ջէյրիւանէն ու տակաւին թարմաշունջ բազում ձեռագիր-  
ներ, ստորագրուած՝ բոլորովին նոր տեսներու կողմէ, Լ. Ս. Շանթէն, Գ. Առաջադարձա-  
նէն, Գիտցիմքի երկտասարդ խմբակի երկտասարդներէն, ուրիշներէ:

Հին, միջին, նոր ու նորագոյն սերունդներուն իմացական ջանքերուն մասին վկայող  
այս պատկերը պէրճախօս է ինքնին եւ ուրախալի՛ք բացարձակ անկասկածով:

**ՄԱՐԿԱԿԱՆ ՌԻԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ**

• ԿՈՄԻՏԵ ԿՈՒՑԻՆԱՑԻՆ (ՎԷԿ), Սմբատ Փանոս-  
եան, ՊԷ ռ.թ., 1971

• ԲԱՐԻ Ի ԿՆՔ (Բանաստեղծութիւններ), Զան-  
քատ, Ի Կամպուլ, 1971

ՔԱՆԻ ՄԸ ՈՐԷՆ

ՀՐԱՊԱՐԱԿ ԿԵԼԼԵ

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԼՈՒՍՆԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

(Բանաստեղծութիւն)

کین  
ریة ومیة علیة  
لمسؤول  
کدریک قراخیان

**PAKI**

OFFICE

LITTER E &

Propriétaire

Dr A. KAZIANI

**ԲԱԳԻՆ**

ԱՄՍԱԳԻՐ

ՀԻՄՆԱԳԻՐ ՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐԹԱՐԵԱՆ

ՎԱՐՁ ԽՄԱԳԻՐ

Կ. ՍԱՄՈՒՆ

ԽՄԱԳԻՐ

Գ. ՄԱՊԵԱՆ

ԽՄԱԳԻՐ ՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄԵՐ

Յ. ԳԵՂԱՐՅ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ն. ՊԱՐԹԵԻԱՆ

Ժ. ԱԹԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄԵՐԵՆ

† ԵՒ ՊՕՑԱՋԵԱՆ

Խմբագրութեան հասցէ

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani,  
Beyrouth-Liban

Հեռաձայնի թիւ 296898

Տպ. ՀԱՄԱԶԿԱՅԻՆ

digitised by

A.R.A.R.@

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

|            |            |
|------------|------------|
| ԼԻԲԱՆԱՆ    | 22 Լ. ՈՍԿԻ |
| ԱՐՏԱՍԱՀՄԱՆ | 8 ՏՈՂԱՐ    |
| ՀԱՏԱՎԱՏԱՌ  | 2 Լ. ՈՍԿԻ  |



Վարչութեան հասցէ-

G. SASSOUNI

Rue Sélim Boustani  
Beyrouth - Liban

 digitised by

A.R.A.R.@